

# Բազմը

## ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒՐԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

Ժ.Ա. ՅԱՐԻ, ԹԻՒ 11

ՆՈՅԵՄԱՐԸ 1972

ԳԼԵՐՈՒԹ

### ՍՄԲԱՏ ՓԱՆՈՍԵԱՆ

## Ժ Ա Մ Ա Ն Յ

Անոնք չիմա հող դարձած են...

Ձվախճանեցան միասին, այլ՝ վերաւոր կամ հասած ծիրանի պէս՝ մէկիկ-մէկիկ վար թափեցան կեանքի ծառէն, ինկան իրենց հասակին ու տեղին համապատասխան ակղափոսերուն մէջ, ծածկուեցան հողով, ոմանք քարով, ոմանք առանց սապանաքորի:

Հինգն ալ մեր փոքրիկ քաղաքին երեսելիներէն էին: Գաղութը, որ մաղէիք, մանրուքը ինչալէ ետք, կը մնար երեսը ընտրանին. անոնք միտքբանի մէկ-մէկ սպասարկուներու համբու ունէին: Թէնու իրենց ալիւրը մաղուած բան էր, բայց, բնու լէին մտածեր զմաղը պտաէն կախելը...

Նկարագրելով ու բնաւորութեամբ իրարմէ տարբեր, փոքերի խաղը, սակայն, բերած էր դանոնք քով-քովի. կը վարուէին իրարու հետ այնպէս, ինչպէս նոր փողոց իջած տղաք, որոնք ահա քար կ'առնեն, որ իրար զլուծի պատուն կամ փոքերի սեղանին շուրջ հաւաքուած՝ օձիք-օձիքի դան...

Մեր փոքրիկ, անշակոյթ քաղաքին մէջ, երկրորդ ասիին չինք մատնեքը ամբողջացնողներ զիչ կային, առաջին չինքին իմացական ժառանգորդներ նկատուելու համար. այդ զիչերէն մէկը, ահա այն, որ կ'ուզէ թարմացնել յիշատակը երանելիներուն, որոնց՝ Տէր Մարութ քահանան,

քանիցս հողառց-հանդուցելոցնէր կարգացած էր՝ ինքն ալ հանդուցելոց մը, զառաստուծքի, տարելիցի կամ մահուան այս ու այն ամեակի առիթներով: Ու ցաւալին հոն էր, որ մեր անձակոյթ քաղաքին մէջ մարդիկ շատ կը մոռցուէին:

Իսկ ինչո՞ւ կը մոռցուէին:

Կը մոռցուէին, որովհետեւ ոչ ոք «հետք կը թողուր իր ետին»: Եթէ մէկը թաղական խորհուրդի ատենապետի պաշտօն վարեր էր երկար տարե- ներով, արդէն բամբասանքի ենթակայ մէկը կը դառնար. մարդիկ կը մոռ- մէին շուտ թաղել դուրսը. միւսը՝ իր տոբթորական ասպարէզին բերումով՝ դուցէ աղքատներուն ձրի կը նայէր կամ Եշանքիյոն դեղեր կու տար. է՛հ, կ'ըսէին, ան ի՞ր գրպանէն ի՞նչ կորսնցուցած կ'ըլլար, որ յիշէին դինք եւ երախտապարտ գտնուէին անոր հանդէպ: Երրորդը արդէն հեռու կը մնար Վեղէնս. յարաբերութիւնները օտար արխատկրատ ընտանիքներու հետ էր, թէեւ փիլիսոփա-վարժապետի անուն հանած էր՝ ժամանակին: Կը մը- նային էնժեկորն ու Ապուդաթը, որոնց հետ, փա՛ռք Տիրոջը, մեր գաղութը ոչ մէկ հաշիւ ունէր. քանի որ դատարաններու դուռը ծանօթ չէր իրեն. հարուստ երեւելի մըն ալ չկար, որ տան յատակադիմ պատուիրէր: Մեր գաղութը իր իւրով տապկուելի դիտէր, «Փանթազիա»յի հետ գործ չէր բըռ- ներ. կար մէ՛կ եկեղեցի եւ եկեղեցիին կից՝ մէ՛կ փողոց: Տո՛ւմական կե- ցութի՛ւն վերջապէս, եղասայլով՝ հողերն ու սարուտար կրող ժողովուրդը, որուն մտաւորական պսակն էին հինգ երեւելիները:

Ա.


Մովորութիւն էր եւ անխախտ սովորութիւն, որ առջի. Օհանեան, արդէն վաթսուհինգի շեմէն ներս սպրդած, զոնդ-կլար զանկով, անխա- րամանկ, տղայական ժպետով բարի մարդ՝ իր հաշիւները հիւանդներու հետ, կը փակէր երեկոյեան ժամը վեցին. եօթին՝ սպասուհիին կը յանձ- նարարէր պատու մը բան դնել բերանը: Կ'ընթրէին ինքն ու սպասուհի Մունիրան միասին, վերջալուսային կամ մեղմ կատակներով կը համեմէին ճաշը, ինչպէս նաեւ պտուած արիւնը: Տոբթ. Օհանեան կը պահէր՝ ե- րեսը շալուեիք քայրի կնոջ ջառասուենոց թուշը, կը սղմրտէր կողերը եւ ժամը ութին հինգ մնացած՝

— Ես դացի, Մունիրա. քնացի՛ր, տեղս տալցո՛ւր. ես կ'ուշանամ թերեւս, — կ'ըսէր:

Մունիրան կը դուրզուար կնոջը պէս.

— Յո՛ւրտ է դուրսը. չմտիս. բալթոն հագնէ՛ր. ապահով վիզդ փաթ- թէ. անձրեւանոցը չմոռնա՛ս. ամպտմած է երկինքը, — Մունիրան այդպէս խօսելով, կը յիշէր առաջին օրերը իրենց մտերմանալուն. տոբթորը եղած էր իր ապաւէնը, զինով ամուսինը կորսնցնելէ մէկ ամիս ետքը: Մունիրան իր ձեռքով կը հագցնէր զիւրոնին գլխարկը: Ու կը խալակնէր ետե-ւէն անոր, որ ահա կ'իջէր աստիճաններէն:

Փոքրիկ տղու պէս, որ դպրոց կ'երթայ՝ հաղուած-չքուած, տոբթ. Օհանեան կ'ըլլէր փողոց: Փողոցը կիսամութ էր միշտ. լուսաւորութեան լամբերը կը մարմէին յաճախ կամ կե՛զիւ կը դառնային: Զարմանալի չէր նոյնքան փողոցին ամառի ըլլալը. միջ-օրեակը քաղաքը շուտ կը քաշուէր տուները, մանաւանդ անձրեւոյ ժամերուն, եւ փողոցն ինը չեղած, ոմանց մօտ՝ կէ՛ս-դիշեր էր:



Ուրեմն, կիսամութ եւ ամայի փողոցին մէկ մայթը բռնած, թափառկոտ նայուածքը այս ու այն ուշացած անցորդին, տոբթ. Օհանեան կը կտրէր առաջին խաչուղին՝ ինքն իր մէջ դնողուած. կը կոխէր վստահ՝ երկրորդ խաչմերուկին վրայ, կ'անցնէր դայն եւ երբ հասնէր Երկյարկանի տունի մը առջեւ, կանգ կ'առնէր, հին երգի մը փշրանքը աղալով լեզուին տակ:

— Տը՛կ... տը՛կ... տը՛կ-տը՛կ, — կու տար աղանջանը՝ թակելով դուռը:

Վեր չէր ելլեր. դիտէր, որ տիշլին՝ տոբթ. Պարոնեան պէտք է արդէն պատրաստուած ըլլար: Անմիջապէս վերի պալատէն մէկը կը մայնէր.

— Տոբթո՛ր, դո՞ւն ես. քիչ մը սպասէ՛. կ'իջնամ կոր...

Տոբթորը կը պտտար վարէն վեր.

— Տօ՛. չե՛մ դիտեր քու կոր-երը. շո՛ւտ քրէ. հովը սառեցուց ոսկորներս. ժամը ութին ճիշդ հոս կ'ըլլամ. հասկնալու չե՞ս միթէ...

Տոբթ. Պարոնեան չէր լսեր դայի աւետարանը. ան արդէն ներս մը տած՝ կարդի պիտի գնէր կնոջ հետ իր դուրս ելլելու հարցը: Տիկին Անգիլնէն ուզէր կամ ոչ, միշտ փայտ պիտի նետէր էրկան քալել ուղղող անիւններուն միջեւ.

— Ամէ՛ն գիշեր, ամէ՛ն գիշեր տունէն բացուկայի կ'ըլլա՞յ. դաւակներու հայր ես. անոնց դասերով զրազէ, փոխանակ երթալ խաղալու սոս խաֆածներուն հետ... Յորեկը յաճախողներով զրազած ես, գիշերը՝ խաղով... իսկ ես ի՞նչ եմ...

— Դուն ալ՝ տան տիրուհին ես, — կը ժպտէր տոբթ. Պարոնեան:

Անուշիկ, կլորիկ եւ շնորհալի էր Անգիլնէն, որ կը նայէր իր եղնիկէ բազրոց նայուածքով՝ ձեռք կ'եփէր անուշ կրակով. սակայն, ամուսինը վաղուց երկուսը մարդ էր. հանգիստի պահ կը նկատէր գիշերային ժամանցը՝ ընկերներու հետ թուղթ խաղալով. ի՞նչպէս չէր ըմբռներ տիկինը: Ապագայ շտկելու հոգ ալ չուէր. այդ հոգը շատոնց պատմութեան անցած էր:

— Դէ՛, ամբողջ օրը բանտարկուած եմ Բլիսիէին մէջ. քիչ մը ոգ անելա շա՛տ տեսար, տիկինս...

Տիկին Անգիլնէ կը զգացուէր. ցորեկները ուզած անգը կ'երթար. կ'այցելէր բարեկամուհիներու. առաւելութիւն մըն էր դուրս գալը ամուսինին վրայ: Բարի սիրտ, կը խղճահարէր էրկանը. կը մեղքնար վարը սոստոյ ծեփ մարդուն, բայց ահա, Պարոնեան քէն ընողի պէս, կեղծապատիւ՝ կը բաղձէր աթոռին, ցոյց տալով, թէ նեղուած էր եւ պիտի չերթար, որ գո՛հ մնար կինը: Իսկ Անգիլնէ տիկինը կը բարկանար.

— Տղա՛յ, մարդը քեզ կը սպասէ վարը. սառեցնե՛լ պիտի տաս դինք: Տոբթ. Պարոնեան կը հասկնար, որ ճարտ-պլանքը սոստցած էր արդէն. աղուորիկ ժպիտ մը կը նետէր կնոջ վրայ.

— Եթէ՛ գտտահ շրջայի աղիւս սի՛րտ սեննալուդ, քեզ կ'առնէի՛. չէի առներ, կնի՛կ. ուրեմն, գացի՛ր...

Ինքն ալ կը նետէր բալթոն կոնակը. կը դնէր լորտական գլխարկը. կը փաթթէր վիզը եւ անձրեւանոցը տաած՝ կ'իջնէր աստիճաններէն: Վարը՝ տոբթ. Օհանեան շունչ կ'առնէր, բայց կը փնթփնթար.

— Աղէ՛կ որ կ'իջնես. քիչ էր մնացեր, որ երթայի. կնիկդ գլուխդ չկերա՞ւ...

— Քալէ՛, քալէ՛. սարնասի պահելովդ՝ երեսիս՝ մի տար. երանի՛ր քեզի... Մունիրան խելօք կէն կ'երեւի. ամէն բան լրիւ է վրադ...

Երկուքը մէկ կը ծուէին փողոցը. երթալիք տեղերնին հետու շէր ար-  
գէն: Իսկ հետուն, ո՛ւր կը դիմէին, կը տեսնուէին ահա, փողոցի լամպա-  
լոյսին տակ երկու ստուերներ, որոնք նկատած ըլլալով Օհանեան-Պարոն-  
եան գլխարկաւորները, կանգ առած էին եւ աճապարելու պէտք չունէին  
դրան ճկիկը գարնելու: Անոնք կը գտնուէին Ամատունիին տան առջեւ:

Ստուերներէն մէկը պիտի ըսէր միւսին.

— Տե՛՛ս, Քէօմիւրճեան, կու գան կոր երկու գլխարկաւորները. կը  
գարմանամ, թէ ի՛նչպէս դայլն ու գառնուիլը միասին կրնան ըլլալ...

— Ըօ՛՛է՛. ոգնին եւ նապաստակը, — կը ծիծաղէր Քէօմիւրճեան, որ  
ինձենիտըն էր:

— Բայց, լա՛ւ մարդ են, — կը փակցնէր Ապուղաթը, որ կը կուշուէր  
Մարտեան, փակելու համար դուռը աննպաստ հետեւանքներու, որոնք կըր-  
նային ծագիլ զգայլ ու գառնուիլ թափէն:

Գի՛չ ետք, շորքը կը մէկտեղուէին Ամատունիին դրան առջեւ.

— Ժամադրութիւնը այսպէ՛ս կ'ըլլայ, տես՞՞ք, — կը ինքզինգար  
մէկն ու մէկը:

Տոբթ՝ Օհանեան ժամավաճառ շէր ուզեր ըլլալ. ուշ մնացած մար-  
դու փութկոտութեամբ ձեռք կ'առնէր դրան ճկիկը.

— Տը՛կ... տը՛կ... տը՛կ-տըկ:

Բ.

Ամատունիինց դուռը կը ծեծուէր:

Տան բակին մէջ մարտեան կատունները հայածող շնիկին հաշտցին ու  
հեհըւոցին ընդմէջէն, պր. Ամատունի կը ըսէր դրան ձայնը.

— Տը՛կ... տը՛կ... տը՛կ-տըկ:

— Եկա՛ն մարդիկ, — կ'ըսէր, խաղաղանին վերջին յարգարանք  
տալով, աչք-ուներով թելադրելով կնոջ՝ Քաղուկ տիկինին, թէ ժամանակն  
էր, որ ան քաշուէր իր սենեակը հանդստանալու: Մեր տիկին Քաղուկը  
սիրուած կին էր, հրաշալի բարութեամբ մը զինուած: Թէեւ մեծ տարբե-  
րութիւն կար էր եւ Անգինէ տիկինին միջեւ. Անգինէն կրնար դուրսը ման  
դալ եւ Պարոնեան կը թոյլատրէր անոր այդպէս ընել. իսկ Քաղուկ Ամա-  
տունին, անային կայանքի տակ առնուած կին էր, աշխատանքի բերումով  
եւ պր. Ամատունի եօթանասունամեայ բոնապետ մըն էր և կնոջ զլխուն  
վրայ նստած: Ուրեմն, տիկին Քաղուկին կը մնար հնազանդիլ.

— Եստ մի՛ նստիք-մնաց. վաղը շատ գործ ունինք. ազայի պէս կը  
քնանառ առտունները. հոգը չէ, թէ ես ի՛նչ կ'ըլլամ առեղ գարնելովս...

— Գէ՛, լա՛ւ, լաւ. հասկցանք. հիմա գնա՛, հանգստացիր, մենք  
մեզի կը յարմարուինք. սուրճ եւայլն մատակարարող կը գտնուի. Գէօ-  
միւրճեանին ուզածն է. ես գացի դուռը բանալու:

— Նայէ՛, որ իրենք չըլլան, դուռը մի՛ բանար՝ վստահ չըլլաս:

— Հասկցա՛նք. քեզմէ խելք պիտի շառնենք, — ջղախոսացած կնոջ ան-  
միտ զգուշացումէն, պր. Մանուկ Ամատունի բարկութիւնը ծամելով՝ կը  
դիմէր դէպի բակին դուռը, շնիկին եւս ստատելով աղմկարարութեան համար.

— սո՛ւս, ծօ լակո՛ւտ, թաղը ոտքի հանես պիտի:

Այժմ, ներքին ուրախութեամբ ձեռքը կը տանէր նիզին.

— Այդ ո՞՞վ է, — կը հարցնէր նեղմտած շեշտով մը, ձայնը կեղծելով:

— Տը՛կ... տը՛կ... տը՛կ-տըկ, — կը ծեծուէր դուռը:

— Ո՛վ, — իբր թէ չէր հասկնար պայմանական զորկը, որ կրնար փողոցային տղոց խաղ համարուիլ: Կը լսէր ծանր շնչառութիւնը տաքթ-Օհանեանին եւ միւսներուն ջրփչոցը: Բակին մէջ երեւուող ծառէն կը զգար, թէ դուրսը՝ ոտքի ելած կատաղի մարտեան հոգը քիւերուն տակ մլաւիւնով՝ թախծոտ երգ մը կ'երգէր: Որովհետեւ նիզը թեթեւ կը ճոնչէր եւ դուռը կ'ուշանար բացուիլ:

— Տը՛կ... ար՛կ... ար՛կ-արկ, — կը շարունակէր ողմկել դուռը: Մինչդեռ Պարոնեան, հինէն մնացած յիշողութեամբ՝ կը հեզնէր. «Յկած են Բաղին-Կողբաղինը, Սիւդին-Չարխաղինը, որ ներսը տնտնացողին հոգին հանեն...»:

— Տօ՛, ծանր ծախուիլդ ու կարմրակատարդ եկած ենք լաւ մը թա-կելու. շո՛ւտ, քա՛ց դուռդ, թէ չէ՛, իջեցուցինք...:

— Տսքթո՛ր, դո՛ւն ես. չէի սպասեր. լսեցի, որ Հոգեառը քովդ ե-կած էր. չե՛ս լսեր կատուներուն ողբը, — Ամատունին նիզը բուրբոյրին քաշած, քայքայ թիկունքով պատուարած էր դուռը:

— Տօ՛, մեռանք ցուրտէն, շրոնա՛ս քանդուիլքը...:

— Բացի՛ր, թէ ոչ, ջարդ ու փշուր ըրինք խանիդ դուռը, — կ'ըսէր Մարտեան եւ իր փոխարէն կը խնդար Քէօմիւրճեան. խի՛, խի՛, խի՛...:

Մինչ այդ, ծառին վրայ բարձրացած զոյգ մը արու կատուներ կ'ողբերգէին՝ հչէն վար, ճիւղերուն կառչած՝ «իջի՛ր ցած, իջի՛ր ցած...»:

— Օհօ՛, ներսը հարսանիք կայ, չընէ՛ք. եւ մեր խոֆածը մեղի հարս-նեքարդ չէ զրկած, — տաքթ. Օհանեանին փոխարէն դարձեալ Քէօմիւր-ճեանն էր, որ կը ծիծաղէր խի՛, խի՛, խի՛...:

Ի վերջոյ, դրսեցիներուն հոգին հանելով՝ Ամատունի կը բանար դուռը. չորսը մէկ ոտք կը նետէին զէպի ներս. սակայն, նեղ անցքը դժուարին կացութեան կը մատնէր գիրենք: Ամատունի կը խնդար.

— Հարսնեքարդ ունեցո՛ղը թող առաջ անցնի:

— Կորսուե՛, աղուէ՛ս. մէկ թոն փայտ, որ վառելու ըլլաս, իմացի՛ր, կարգին մեկ չես կրնար տաքցնել... Վա՛յ, թէ հարբուի ըլլամ վաղը, — կը հրէր, իբրեւ թէ թշնամի՝ թշնամարար Օհանեան տանտէրը եւ ներս կը խուժէր:

Մարտեան եւ Քէօմիւրճեան չէին աճապարեր: Բաղդամամբ երկցա-զոյն Ամատունիին, տաքթ. Օհանեանին, որոնց տարիքը յիշատակուեցաւ, ի պահանջել հարկին, — եւ տաքթ. Պարոնեանին՝ յիտունէն զիչ պակաս — Մարտեան եւ Քէօմիւրճեան ունէին այն պատրանքը, թէ իրենք դեռ չէին մտած չափահասութեան սահմանը, չէին զգացած սէ՛րը, այնպէս, ինչպէս պիտի զգար պատանի մը ի՛ր տանովեցին, երիտասարդ մը՝ իրեն պատշաճեց-ւած քսանվեցին կամ մարդ մը, որ կրնար վազել երեսունէն մինչեւ քուս-տունըհինգը: Ուրիմն, քունի որ դեռ կը մնային ամուրի, կը համարուէին երիտասարդ, քառասունէն զիչ վեր ցատկածի պէս՝ առոյգ, բնական էր, որ Քէօմիւրճեան եւ Մարտեան ցուրտ չզգային եւ մեծահոգարար ճամբայ տային զլիսարկաւորներուն. «Մտէ՛ք, մտէ՛ք՝ կրկնելով...»:

Մտնելով բակը, Օհանեան եւ Պարոնեան անցած կ'ըլլային երկրորդ դուռ մը, որ գիրենք կ'առաջնորդէր միջանցք: Մարտեան խօսքի կը բռնուէր Ամատունիին հետ, օգնելով անոր, որ դուռը լաւ ծածկէր ու նիզով փակէր վերջանար. իսկ Քէօմիւրճեան մտիկ կու տար կատուներու պզուրատոցին, լաւ ըմբռնած ըլլալով, թէ ի՛նչ կը նշանակէր Մարտ՝ ամիսը անոնց հա-մար...:

— Ժամանակներն է, — կ'ամբողջացնէր Քէօմիւրճեանին մտորումը, Մարտեան՝ տպաւորող շեշտով մը, Ամատունիին կողմէ հրժշակուելով:

— Քէօմիւրճեան, առաջ անցիր. այսօր փայտ չկար, որ տաքցնէինք սենեակը. Բէօմիւրճով պիտի ընենք այդ հողը, ի սէր մեր տղայներուն. հի', հի', հի'...

«Սա Ամատունին աղուէս է. դիտմամբ կը շեշտէ Բէօմիւրճը. դիտէ, որ ես գոհ չեմ մականունէս. բայց խրլխած եւ անխիղճ մարդ է... յիմարը, չ'ամչնար, դեռ Շողեր կը խաղցնէ. ամբողջ քաղաքին բերանը ծածոն դարձաւ. թեղցիկ, ըսաւ, անձրեւ կու գայ...: Օհանեանն ալ ապուշ մըն է», — կը շարունակէր Քէօմիւրճեան ներքնախօսութիւնը, — տղայք. Օհանեան թեղադրած էր բրդեայ կոկիկ փալան մը Պարոնեանին, որ ասմաթիզմը աքցանի մէջ չտանէր թոյլ մէջքը. խոնաւ օրերուն Պարոնեան երկտակուածի պէս կը քալէր, լորտակ պառքոն մը ձեռքին: Խօսքի տակ չ'մնալու համար, Քէօմիւրճեան Ամատունիին կ'ըսէր խի', խի', խի'՝ ծիծաղով հասեմած.

— Փայտ չունի՞ս, սա կատուները ներս բեր. թէ՛ հէֆիւր եւ թէ՛ մենք դո՛ւ կը մնանք...

— Լսեցի՞ր, տղայք, մեր էնժենիորը չի՛նիչ առաջարկ մը բերաւ. կատունե՛րը... հի', հի', հի':

Տղայք. Օհանեան, որ միջանցքին մէջ իր վրան թեթեւցնելով էր դրսդած — գլխարկ, անձրեւանոց, վզաշալ, քայլքօ, եւայլն՝ կախիչներու վերայ բեռնելով, — դասը չկատարատած աշակերտի պէս կապուելու՝ կը թօթովէր.

— Իրեն համար աւելի կարեւոր է. մենք անցած ենք սէ՛յր ընելու ժամանակը. այնպէս չէ՞, Պարոնեան:

— Հապա՛, հապա. Ապուլաթիին հարցնելու է, — կը պատասխանէր Պարոնեան՝ ինքզինք եւս թեթեւցնելով աւելորդ բեռերէն:

Բուրբին յայտնի էր, որ Մարտեանի համար՝ լուսանցք եւ օդանցք կը խորհրդանշէին շնչերակներ՝ տան մը. ուրեմն, պէտք չէր, որ խցկուէին կամ զոցուէին, ամառ-ձմեռ իր բնակարանին պատուհանները, եթէ բացակայ իսկ ըլլար տունէն մէկ քանի օրով: Կատուացեղը կը սիրէր Մարտեանի անողջապահական բնաւորութիւնը եւ ահա մայր կատու մը մնայուն կեցուածքին հաստատած էր տան մէջ եւ կ'ապրէր ցարդ իր որդիներով, թոռներով ու ծոռերով հաշտ դրացիութեամբը Մարտեանին...

— Ես վաղո՛ւց անկից եմ եղած այդ ժողովուրդին հետ, Պարոնեան. լաւ չէ՞ր ըլլար, եթէ այդ տունէն ընտանիք մը ճամբէի մեր տունը. լօեր եմ, որ հողի կու տաք հարսնիքներու ներկայ գտնուելուն. ամս'ո-ձմեռ հարսնեւոր կը գտնուք... հէ՛, հէ՛, հէ՛:

Երբ չորս դրսեցիները թեթեւցած էին իրեն արդուաբարէն, մէկէն հոհրոց մը կը սկսէր միջանցքին նեղ պատերուն միջև: Ձերբար ձեռք կ'առնէին, կը քաշէին, որովհետեւ քիչ առաջ փռուն երեւցող մեր երեւելիները, այդ պահուն, զիրար կը աննէին մէկ-մէկ թրջուած պտուաւ աքլորի կերպարանքով՝ նիհարցած, կարճլիկ, փետրաթափ. եւ տղայք. Օհանեան խոյս կու տար անմիջապէս դէպի խաղասենեակ, որպէսզի շատ նկատելի չըլլար իր գունդ-կտր գլուխը, զոր բարեկամները չէին քաշուիք՝ երկրագունդի նմանցնել:

— Ամատունի՛, — կը ձայնէր Հէքիմը, անմիջապէս որ մտած էր ներս, — հէ՛ր օրհնած, թրքական բաշխիքի չափ տաքցուցեր ես սրճը. մարդու հանուիլ-լրդանք ընելը կու դայ. պա՛հ, պա՛հ, պա՛հ...

— Չէ՛, եղբայր, ախր ժակդ մի՛ սրնր. կոճղանձան պի՛ղիւնիդ հաւաս չենք, — կը խայթէր Պարոնեան եւ երբ պիտի նստէր բազմոցին՝ «ա՛խ, մէջքա», — կը գանգատէր:

— Տոքթորին յանձնարարած փալանը դեռ կը կրէ՞ս, Պարոնեան, — կը ցաւակցէր, իրրեւ թէ Մարտեան, Քէօմիւրճեանին աչք ընկելով, խաղա- վարի...

Պահ մը կը հանդիպէին, բազմոցներու վրայ երկարած, ո՛վ ինչպէ՞ս կը ցանկար, «ո՛խ» մը դուրս փչելով թոքերէն: Օհանեան, ընդհակառակն, կ'անցնէր իր սեղանին առջեւ, իր մնայուն աթոռին եւ կը պոռար.

— Ամատունի՛. խաղաթուղթե՛րը. շո՛ւտ...

— Ո՛ր տեսակի բախտ պիտի բանաս, տոքթո՛ր. բա՛խտս բաց, — կը ծիծաղէր մէկն ու մէկը, — «գուցէ, նայի՛ւ պիտի ուզէ, թէ տոբոց պիտի ուտէ՞՞ ամէն օրուայ պէս», — կը միջամտէր ուրիշ մը:

— Տօ՛, ելէ՛ք, շարուեցէ՛ք, սկսի՛նք. բախտս սո՛րն է. ո՛ւշ մնացինք:

— Որ ուշ ենք մնացեր, էլլինք, նստինք դիմացը: Ամատունին գիտէ, որ տոքթորին աչքերը հայելին են ձեռքին թուղթերուն. ահա, թէ ինչո՛ւ, ան միշտ կը տանի եւ տոքթորը՝ կը տարուի, — կը նետէր Պարոնեան, ա- ոանց տեղէն շարժելու:

— Կ'արժեքազրկես իմ կարողութիւններս, բարեկա՛մ. ես Օհանեանի աչքերուն չեմ նայիր, այլ՝ դանկին, ո՛ր կարմրեցու ճակնդեղի պէս, հաս- կըցէք, թէ լաւ ձեռք ունի, — Ամատունին ներս կը մտնէր խօսքի վրայ. ձեռքին մէջ շիշ մը ուխակի ունէր եւ հինգ բաժակներ:

— Ուխակին լաւ տեսակէ՛ն է, Ամատունի, — կը հարցնէր Քէօմիւր- ճեան:

Տօքթ. Օհանեան կը միջամտէր.

— Տօ՛, դուն գէշը տեսա՞ծ ես, որ կը հարցնես լաւի մասին:

— Հարսանիքի՞դ խմեցինք, տոքթոր. չե՞ս յիշեր, — կը հեղներ էնօ ժենիորը: Միւսները կը խնդային կեղծ. Օհանեան կը ջղայնանար.

— Լո՛ւրջ. հայտէ՛, ելէ՛ք, սկսի՛նք:

— Սո՛ւս, ձայնդ. հիմա տիկին թագուկ, որ ներս եկաւ՝ մեծ բրդու- ճըզ ականջը կը թողու, — կը կեղծէր Մարտեան եւ Քէօմիւրճեան կը խըն- դար իի՛, իի՛, իի՛...

Տօքթ. Օհանեան սանձը կը նետէր.

— Տօ՛, կը բաւէ ձեռ պէս խրխնջաք. Ամատունին զարի շուկի ա- խոռատան մէջ, այդ՝ պատերազմի ժամանա՛կ էր, որ ամբարը լեցուն էր: Կը Հոհրատային: Լաւ ժամանակներ էին...

Գ.

Ամատունին նոր խաղաթուղթին ծրարը քակելով, կ'առանձնացնէր երեք ճոխիւնները, զանոնք նետելով Օհանեանին առջեւ. «Քեզի կը նմանին. պէտք կու գան»: Այդպէս՝ Ամատունի իր սուր զեթը կը խոթէր, զիչ մը անվայել ձեւով, տոքթորին անձնական զծապատկերին մէջ, երեւան հա- նելով անոր հաստ ու կլոր, կրկէսային բութ քիթ-աչքունքը: Մակայն, տոքթ. Օհանեան բարի մարդ էր, Ամատունիին ակնարկը ականջի ետեւ կը նետէր.

— Պլլե՛քճի՛... քեզի՛. առջեւս անցի՛ր նայիմ. շո՛ւտ...

Չորսը կը բռնէր իր տեղերը. անխախտ էին, երեքը՝ Օհանեան-Պարոնեան-Ամատունի. չորսորդ տեղը փոփոխական էր. Մարտեան եւ Քէօմիւրճեան կը նկատուէին առժամայ խողովակներ. յաճախ ժամադրութիւնը կ'անտեսէին քմահաճօրէն, շինչերսրդը կը դառնար դիտող, դատաւար, վկայ կամ պարզապէս՝ սո՛ւրճ պատրաստող. գաղտնիք չէր, որ մեր երեսելիները ցած մակարդակի վրայ զիրար կը փեստէին, մինչեւ հարիւր սակիի գումար մը, որ պատկանելի կը թուէր լոռններուն:

Որովհետեւ օր մը չէր, շարաթական ալ չէր, այլ եղանակային բնոյթ կը կրէր թղթախաղը, մենք ստիպուած ենք պահել սկսուած ոճը եւ պատմելու եղանակը՝ «անցեալ անկատարով»: Ըսենք, որ խողերը կը շարունակուէին միեւնոյն թափով, առանց տեղափոխութեան: Պր. Ամատունիին քննարանը ամէն յարմարութիւնները ունէր. ինր ամսական ծնածի պէս առողջ եւ ապահով էր տունը, ինկած մեկուսի փողոցի մը վրայ, աներեխայ-կոկիկ ընտանեկան միջավայր մը, կնոջական տաղտուկներէ զերծ: Տիկին Քազուկի ներկայութիւնը կար ու չկարի պէս էր. ան չէր նմաներ ուրիշ կիներու: Անոնք, հաւանաբար պոսկին զիշերը չէին ննթարկուած զատու փարչատելու փեսայական սարսափին» ու մնացեր էին փարչատող՝ իրենք: Տիկին Քազուկ, եթէ չէր հանդիպած Ամատունիի կողմէ կատուի փարչատման գործողութեան եւ ննթարկուած էր երկրորդ ամուսինին կամքին, այդ ալ՝ իր բարի սիրտ ունենայն էր. հրէշտականման բացառիկ կիին էր, որ ահա դուրսը ներս կը մտցնէր կիսաբաց դռնէն, կը ժպտէր ամօթխած աղջըկայ պէս, «բարի էք եկած» կ'ըսէր եւ միեւնոյն ամօթխած-ժպտուն դէմքը ետ-ետ կը տանէր եւ դուռը կը ծածկէր ետեւէն: «Բարի եկած էք»ները արդէն տեղ կը դրասէին ջրասկուսի սեղանին շուրջ: Տոքթ. Օհանեան իր դեմսը ունէր Ամատունիին. ձախին՝ կը նստէր միշտ Պարոնեան. միւս կողմը, ինչպէս ըսուեցաւ՝ փոփոխական էր, նայած Մարտեանի կամ Քէօմիւրճեանի արամադրութեանց: Ընկերութենէ խոյս տուողը, ընդհանրապէս կ'ըլլար ինժեները: Անոր ամուսնութեան եւ քննարանային անպատաս փրճակը ծանօթ էր գաղութին, որ դինք դատապարտած էր կծծիութեան յանցանքով: Քէօմիւրճեան կ'ամբաստնէր, կարծէք, այլ կարեւոր բարեմասնութիւնը, երբ յաճախ կը մնար ձեռնպահ՝ խողերու հանդէպ.

— Այսօր արամադրութիւն տեղը չէ. Մարտեան, կրնաս խողալ...

— Ուրեմն, կը ծառայես սեղանին. նայէ՛, որ կարստնութիւնդ լաւ կատարես. փութ-պութ կը ստանաս, — կը ծաղրէր Ամատունի:

— Փութ-պութ մըն ալ տալու է սա՛ մեր աղջին կարստններուն, որոնք շատ ծառայութիւն կը մատուցանեն ժողովուրդին. կան, որ իրենց կեանքը կարճացուցեր են անոր սիրոյն. այնպէս չէ՞, տոքթոր, — կը նստէր պալաթ տ'Ըսէ մը Պարոնեան, Ամատունիին անարբերութիւնը նշել ուզելով շաղութին հանդէպ:

— «Կեսուր, քեզ կ'ըսեմ, հարսս՝ դուն հասկցիր». Ամատունի, կ'ըմբռնե՞ս, քեզի՛ է խօսքը: Այսօրուան հալուածը ազգին փութ-պութը թող համարուի. համաճա՞յն էք, — կը հարցնէր տոքթ. Օհանեան՝ առաջարկելու պէս, խօսքը չորսին ուղղած:

Մարտեան եւ Քէօմիւրճեան զլիտով համաճայն ըլլալու շարժում մը կ'ընէին: Պարոնեան կը դտնէր Օհանեանին առաջարկը լուսաւոր, խեղցի փորձ մը. Ամատունի յրճօրէն կ'առնուէր, բայց, կը գնդուէր հեղտութեամբ.

— Ազգին կարստններէն մէկը մեր մէջ ունինք եւ ան էր, որ փութ-պութ առաջարկէք - մեր խելօքիկ տոքթորն ալ երկրորդեց, լուեւայն ինք-



զինք եւս ազգին կարսոն համարելով. դէ՛, մէկը՝ ազգապետ է, միւսը ինստակալ բժիշկ...

— Է՛՛է...

— Բժիշկը բարի, լաւ մարդ է. խօսք չկայ. յաճախողները եթէ հայեր են, ձրի կը նայի եւ վրան ալ՝ Եղանքիցն ղեղեր կու տայ...

— Է՛՛է...

— Իսկ Պարոնեան թաղական խորհուրդի ասենապետ է, ազգին գործերով պազուղ մարդ, որ նաեւ՝ անքննելի անձնաւորութիւն կը համարուի. դէ. ո՞վ տակը փորփրած է. ազգը ի՞նչ դիտէ իր սեւ ալիստանքի մասին. Հը՛. Մարտեան, Քէօմիւրճեան, դուք բան հակացած էք...

— Յետո՛յ, — սպասում կը կեղծէր Պարոնեան:

— Յետոյ ի՞նչ. ազգապետ ըսելով, ելանք եկանք քովդ, որ ահուանիս քայնս եւ քալաւ մը շինես. հա՛յ է, ըսինք. ատան կը փրթինք. եկու՛ր տես, որ երկու հարիւր նստու վրանիս. հարիւրին ութսուն՝ վրան-բաց աւազակութիւն...

— Ամատունի՛, կ'երեւի ազուէս ըլլալդ հասկցած էր Պարոնեանը, որ մորթէ այդքան սուղ գնահատած է. խի՛, խի՛, խի՛, — կը խնդար Քէօմիւրճեան:

— Պաւօ՛, Էնթենիո՛ր. լեզուդ պագնեմ, — կը խանդավառուէր Օհանեան:

— Արիստոկրատիայէն ինչ որ փրցուի, հալալ է, — Պարոնեան կը խայթէր Ամատունիին օտարամուրիւնը. — Ա՛ն, որ կ'ուրանայ իր ժողովուրդին բարեմասնութիւնները, պէտքերը, նիւթապէս եւ բարոյապէս նեցուկ չի կանգնիր անոր, Ամատունի՛, մենք անոր, այսինքն թեպէսներուն, այդ ձեւով պատժելու իրաւունք ունինք...

— Մեծ է՛լը արտը կը մոռնաք կոր, — սեւեռուած միւսը կ'ուզէր հետապնդել Քէօմիւրճեան:

— Ի՞ր էլը, սօ՛, — կը բարկանար տղթ. Օհանեան:

— Քո՛ւ էլը, որ ո՛չ սեւ է, ո՛չ ճերմակ, ո՛չ ալիստ...

— Օհօ՛, Քէօմիւրճեան. պիտի ըսես թուիս է քեզի պէս, չէ՞...

— Յնդած. երէկուան կերածդ չես յիշեր այսօր. մե՛ղք, որ բժիշկի վկայական տուած են քեզի, — կը կծէր Քէօմիւրճեան:

Պարոնեան կը խնդար զխտի-զխտի.

— Տղթո՛ր, խօսքը զու առջարկէդ կը վերաբերի, այսինքն՝ մեծ էլուն, որ թարգմանի փութ-պութ, նուէր, պալլըլը հալալ...

Հարցը կը պայծառանար, ինչպէս տղթ. Օհանեանին միտքը, որ կը յիշէր ըրած առաջարկը.

— Ես ալ կ'ըսէի, սա մեր Քէօմիւրճին խե՛ղք կ'որոնցուց. զգացուած եմ, կը ներես, որ էլը թխադոն ներկեցի, կետարացիներու պէս. կեսարացի՛ ես, չէ՞. դէ՛, լա՛ւ. իմ ալ պապերս ատանացի են եղեր... Հա՛. ի՞նչ պիտի ըսէի...

— Մեծ էլու մասին քարոզ կը կարդայիր, — կը խածնէր Ամատունի:

— Խօսքը կտուր մի՛ նետեր, Ամատունի. այսօրուան շահը ազգին փութ-պութ ընենք եւ ազատինք սա Պարոնեանին լեզուէն. ամէն օր մեր օձիքէն կը կատուի, թէ ազգը զբամի պէտք ունի. տուէ՛ք, հա տուէ՛ք. է՛՛, ժողովուրդին կարիքները — դպրոց, կենդեցի — ծակ դրպանի նման են, որքան լեցնես, այնքան շուտ վար կը սահին. հա՛, հա՛, հա՛...

— Ձուկը ծովը, քաւան որ կրակին դնես, տոբթո՛րս, տակը կ'ալբի. երբ դուն շահիս՝ գէժ չեմ. հի՛, հի՛, հի՛...

— Տօ՛, շիտակը, որ աղուէսը պոչը կու տայ, բայց հոգին բնաւ չի յանձնեմ, կ'ըսեն. աւմա, սա մեր Ամատունին աղպին եւս տալ չուզեմ. եղա՞ւ...

— Իր պինչին կը քաշենք կը հանենք հոգին. դուն հող մ'ընե՛ր, տոբթոր, — կը ծածմար Պարոնեան, ոսկեջրուած ակնոցներու տակէն՝ վերէն նայողի պէս Ամատունին շփեցաւ:

— Մինչեւ որ հողին ելլէ, Քէօմիւրճեան, սա մեր Ամատունիին սեբով սուրճին հոգին հանենք, ի՞նչ ըո՛րք, տղա՛ք. ածապարանքէս՝ տունը սուրճ չտո՛ր:

— Հրաշալի՛ միտք, — կը բացապանչէին միարեան:

— Քէօմիւրճեան, շաքարը քիչ. տոբթ. Օհանեանը, լսե՛ր եմ, շաքարախտէ կը տառապի եղեր...

— Տօ՛, աղուէ՛ս, պատու կնիկներու պէս սկոս՞ր նորէն բամբասել, — կը բարկանար կեղծ, տոբթորը եւ կ'առաջարկէր խաղը սկսիլ: Բայց, նկատելով, որ Քէօմիւրճեան իր ձեռքը յենած էր նստած աթոռին, տեղ դրաւելով Մարտեանի եւ իր միջեւ, լըջօրէն կը բարկանար. — Ձեռքդ քաշէ՛ աթոռէս. բախտ չբերող աեսակէն ես. յետոյ, ինչո՞ւ հոս նստե՛ր ես. անցի՛ր Ամատունիին քով...

— Յնդա՛ծ, անճարակութեանդ վերագրէ պարտութիւններդ եւ ոչ թէ խեղճ մարդուն, որ անվնաս մարդուն մէկն է. Քէօմիւրճեան, եկուր քոփս նստէ. այսօր սաւաղ պարտութիւն թող կրէ ձեքի՛մը, — կ'ըսէր Ամատունի, աթոռը քիչ մը դէպի Պարոնեան հրելով:

— Եստ մի՛ ծօտննար. տոբթորը կը սկսի կասկածիլ, որ մենք թուղթ կը փոխենք իրարու հետ:

— Բարի պտուղ ըլլալիդ դիտեմ. շատ մի տառաք. աղուէ՛ս, կըստրէ՛ թուղթը:

— Տոբթո՛ր, զգո՛յ՛, չհիպնոսանա բորենիական նայուածքներէն. խորամանկ է վերջապէս. դէմդ առնելն իսկ սխալ մըն է, — կատակել կը փորձէր Մարտեան:

Տոբթորը կը ծիծաղէր.

— Տօ՛, բորենին ետեւէն կը յարձակի, կ'ըսեն... հա՛, հա՛, հա՛:

— Աս ալ ճիշդ է. ամէն վախկուտ անասուն, որ հոտած դիակով կը սնանի, նենգ ու վատ բնաւորութիւն կ'ունենայ եւ ետեւէն միշտ կը յարձակի անմեղ դո՛հին վրայ, — աքլորամարտ ստեղծելու մտքով կը յարէր Պարոնեան:

Ամատունի կը փոխէր խօսքուղին, յարձակելով Օհանեանին վրայ.

— Հնի՛, քեզ ո՛վ ըսաւ, որ դուն պիտի բաժնես թուղթը, — ու խնդրով խաղաթուղթը տոբթորին առջեւէն, կու տար զոյն Մարտեանին. — Ապուզա՛թ, բախտին ճաճը բաց:

Ապուզաթին բախտէն, շորթորը «Աս» մը կ'ըլլար: Ամատունի մատով վար կը քաշէր ներքեւի կտրու. — տես՞ր, — իսկ Մարտեան կը զնէր խոտնած թուղթը տոբթորին առջեւ. այս վերջինը երբ կտրէր զայն, Ապուզաթը կը սկսէր բաժնել. «Երեք, երեք, երեք եւ երեք՝ ինծի», կ'իտաձայն համբելով:

Բուրբին դէմքին ի յայտ կու գար բախտին հանդէպ տաճած լուրջ աղապատանք մը, որ կը շնչար. «Ես՝ Յիսուս-Քրիստոս...»:

Դ.

Փոփոխը ճամբայ ելած էր :

Լուրջ ազատականքը, որ նկարուած էր շորսերու դէմքի բոլոր զի-  
ծերուն, երանգ մըն ալ պիտի նետէր ոչ-խաղաղողի երեսին : Քէօմիւրճեանի  
Թափառկոտ նայուածքը ազատ-անվախ կրնար թափել ուզած դէմքին, պահ  
մը. թառը երկար չէր տեւեր. երկու բիրերը, մանրիկ թռչուններու նման,  
կը ցատկուտէին մէկ ճիւղէն միւսը, նայած Ֆիլիքակոս լարուած արտա-  
յայտութիւններուն շորսերէն մէկն ու մէկին :

Պղտոր ու մաշած աչքեր, նշանաւոր խոշոր քիթ, որուն տակ մանրիկ  
թիթեռնիկանման անիմաստ պիտիկ մը՝ փակցուածի պէս դորշ շրթնաբի-  
զի մը վրայ. — ահա երեսոյթներ, որ գոյութիւն ունէին բարալիկ, թուխ  
դէմքին վրայ — մեր էնթենիորին : Բերանը դրած էր ամանագին սիկարէ-  
թին մէկ երրորդը, զոր լիզուով կը հրհրէր այս ու այն կողմ եւ գծուհ  
մարդու իր անհանգիստ նստուածքը հանգիստ չէր տար աթոռի ճոճոցին .

— Քէ՛՛ջ մը խելօք նստի՛ր, Քէօմիւրճեան՝. կը տեսնես, որ լուրջ է  
խաղը. լրջացի՛ր դուն ալ, — հետը իննալ կ'ուզէր Օհանեան :

— Ամատունի՛, չըրչիլեան սիկար մը տուր տոքթորին, որ սծիքս թող  
տայ, — կը կճէր էնթենիորը :

Արդարեւ, Ամատունին, որուն էր թուղթ ուղելու կարգը, բերնին  
մէջ կը մխացէր հաստիկ սիկար մը եւ սկոաններուն տակէն ամերիկեան  
կոտորուած հայերէնով կ'ըսէր .

— Եւրկո՛ւ քառքթ . . .

Տոքթ. Օհանեան չէր նկատած սիկարը. ան խիստ դրաղած էր իր  
վճիտը կայացնելու մէջ, սակայն, լսելով Ամատունիին գոմոցը, անմի-  
ջապէս կը հարուածէր .

— Չուր ու ցաւ. մ'վ գիտէ, թէ մ'ը արիստոկրատէն մուրացած ես . . .

Ամատունի չէր ազդուեր. երկու քարթը առնելէ ետք Մարտեանէն,  
կը սպասէր, որ Պարոնեան ընէր իր պահանջը :

Բայց այդ սպասումը փոթորիկ կանխող լուռութեան ծնունդ կը համա-  
բէր Քէօմիւրճեան : Երանելի տողջութեամբ, նիհարկեկ, սակայն սնուած  
իննմոտ զգուշաւորութեամբ՝ միրգի, կանաչեղէնի, կերակուրներու հիւ-  
թով միայն, պր. Ամատունիին դէմքը արեան մազարմատներու շոտախղ-  
ներով ստայնուած, աշնանային վերջալոյսով օծուն՝ ամպի կտորի կը նը-  
մանէր. կ'երաշխաւորէր կազմակերպուած կեանքի մը վերելք, մինչեւ հա-  
րիւր տարեկանը, Ամատունի ետապաշտ էր, ուրեմն բարեսրտութենէ զուրկ :  
Երբ ջլայնանար, կարծէք արիւն պիտի ծորէր այտերէն, որոնք օղջուածի  
սպաւորութիւն կը գործէին խեղճ Քէօմիւրճեանին վրայ :

Այժմ, էնթենիորին նայուածքը կը թառէր Պարոնեանի դէմքին : Պա-  
րոնեան ատամնարոյժ էր, տիրումէ. տիրումէ կամ ոչ-տիրումէ, մեր քա-  
ղաքին մէջ զինք կը կոչէին Տոքթոր, ի ցաւ Օհանեանին եւ ի պարծանս՝  
գաղութին : Կ'երեւէր տարիքը ցոյց չտուող երիտասարդ, գեղատեսիլ մարդ,  
թուխ տեսակէն. սակեղրուած շրջանակով ակնոց կը կրէր. լրտական տի-  
պար՝ իր գլխարկով եւ բաստոնով եւ հազիւ քառասունը իննոց՝ տիկին Ան-  
գիլեանի կողմէ կը կանչուէր . — Տղայ, որ կը տառապէր յօղացաւ-տուժա-  
թիկմէ, խոնաւ տեղեր շատ պառկած ըլլալուն՝ թրքական հաթաղանէն  
փախելէն ետքը : Քէօմիւրճեանի համամայն, տոքթ. Օհանեանի փայանը,  
վոջ բան էր. է՛հ, հանքային տաք բազմիւրեքու մէջ որքան կ'ուզէր, թո՛ղ

լող տար Պարոնեանը. դրամ շատ, աղբիւրի պէս կը հոսէր ատամնաբոյժներու դրպանը...

Աննպաստ մէկ շարժումին, Պարոնեանին մէջքը կ'առնուէր ցաւատանջ աքցանի մէջ. չէր կրնար գսպել «ա՛խ, կոնակո» կանչը, որ ժպիտ կը բերէր Քէօմիւրճեանի ղէմքին, յիշելով ծանօթ մանրավէպը.— Մարդուն մէկը մուշտի կ'ուտէ փորէն եւ կը պոռայ՝ «ա՛խ, կոնակո». մարդը կոնակ շունի եղեր. ունենար՝ մուշտի չէր ուտեր փորէն: Հա՛, երբ Պարոնեան «ա՛խ, մէջք» կ'ըսէր, յարժարելու համար աթոռին վրայ կը փոխէր նստուածքը, կ'ըլլար ետանդիւնի՝ գլուխը մէկ թիղ առաջ բերած: Տոքթ. Օհանեան կը բողբէր, ինքը ետ քաշուելով, համոզուած, թէ Պարոնեան այդպէս ընելով, կեղծ ցաւ կը պատրուակէր, որպէսզի լաւ մտիկ տար իր ձեռքին: Պարոնեան, ցաւոտ իսկ՝ կը ինդար քիստի-քիստի.

— Տոքթ'որ, կեղծ ցաւ ո՞րն է. դուն չե՞ս փայն յանձնարարողը: Է՛. Մարտեան, տոքթորին զոհացու՛ր, ես ընզնիւ եմ...

Տոքթ. Օհանեանին միտքը կը ճապաղէր մէկէն, այն վախով, թէ ահա դրացին, Երզնի Պարոնեանը արդէն ֆլօշ մը բռնած էր ձեռքին մէջ կամ ֆուլ մը. ուրեմն, այս ձեռքը կորսնցուցի՛ր Օհանի տղայ. ի՞նչ նետեմ-ի՞նչ բռնեմ, որ աղէկ ըլլայ. եւ ահա, կը կորսուէր որոշում տալու անյայտութեան մէջ տատանելով:

Իր րնաւորութեան ծանօթ էին բոլորը. իրբեւ նկարագիր եւ րնաւորութիւն, տոքթ. Օհանեան պզտիկ, խելօքիկ մանչ մըն էր, տեղական բացազանչութեամբ՝ տղայ, որ սխալմամբ վազեր էր, իր մանկութեանը՝ ղէպի ծիծառանք, չէք դիտեր թէ ի՞նչ բանի համար, գուցէ աղջիկ դառնալու մտքով, բայց ձայնոգած փորձը իրեն արժած էր աղջկական խզնոտութիւն մը, որը մնացեր էր տեսրագրելի եւ Օհանեան թիւրիմացաբար խոշորացած էր աղջկային չափերով. ետքէն՝ մարդիկ դատելով, որ իր աճումը աննպաստ էր եղած, փէշէն քաշեր ու ետ բերէր էին այն օրուան տարիքին, երբ վազեր էր դէպի ծիծառանք: Ասկէ առաջ եկած էր երկրորդ թիւրիմացութիւնը՝ այսինքն մնացած էր մանկամիտ: Ներաշխարհը երեսին վրայ կարգացուելիք մարդ էր, որմէ կ'օգտուէր Ամատունի խաղի ժամանակ: Երբորդ թիւրիմացութիւնը կին ունենալով հանդերձ՝ այրի մնացած ըլլայն էր: Մուկերային հետ կ'ապրէր, դո՛հ էր: Գաղութը այդ տարիքին համար՝ ներած էր սպասուհիով կեցութիւնը.

— «Է՛հ. պատուած առանձին գլուխ մարդ է. թող ապրի իր գիտցած ձեւով...»:

Ուրեմն, բաց-սիրտ մարդ, ինկած երկու նենգաւոր մարդոց ձեռքին տակ, անճրկած՝ անոնց մանկերներու դիմաց, անշուշտ թէ Օհանեան չէր կրնար արագ կողմնորոշուիլ: Ամատունի ջգայնացած՝ կը պոռար.

— Հայտէ՛, տոքթոր. ուղեղդ ջրոտեցա՛ւ. Ասլանովի կենաց ղեղէն ներարկում ընե՛նք...

— Զա՛յնդ, աղուէ՛ս. կ'ուզեմ գիտնալ, թէ ըրածնիդ Ալլըֆ չէ՞... Ըրածնի՛դ: Քեզի հասկցանք. երեք մը ունիս. բայց մեր յարգելի Քաղազկան Խորհուրդը դարձեալ իր փուշերուն տակ մտաւ. անպայման ֆուլ մը ապահոված է ողնին...

— Տոքթ'որ, յարգենք պատշաճութիւնները. թէեւ բռնեմ, որ անուն կախիլէն աւելի լաւ կ'ընես՝ խելօք կախես, հովեա ջելիկ մը, — կ'ըսէր Պարոնեան՝ պազ, անկերք եւ ակնոցին տակէն աչք կը խաղցնէր Ամատու-

ներին: Մորամանկ ժպիտ մը կը զեղեցկանար ոսկեջրուած շրջանակով ապա-  
կիներու ետին:

Նեղի բերուած, քիչ մըն ալ Քէօմիւրճեանի «խի-խի» քմծիծաղէն  
Ղաադըզին՝ տոքթ. Օհանեան կը ստիպուէր ձեռքէն նետել երկու քարթ, փո-  
խան երեքի եւ յանկարծ զղասուացած՝ կը բարկանար իր եւ հասցէն անյայտ  
թշնամիին վրայ:

— Թո՛ւ. սխալեցանք. շունչանորդի... Մարտոզլու՝ երկո՛ւ...:

Մարտեան քմծիծաղը շրթունքին՝ կու տար երկու թուղթը. ցուցադ-  
րարար իրեն պէտք եղածը կ'առնէր եւ մնացածը կը զնէր մէկդի: Ամատունի  
անմիջապէս սաջիւէն երեք Փիշ կը հրէր հրապարակ:

— Ետե՛ք...:

— Դժոխքի ջուրերուն մէջ հոաս, իշալլան, — կ'անիծէր իր ներսի-  
զին Օհանեան, նախանձելով Ամատունիի բերին միացող շրջիլեան սի-  
կարին:

— Եկա՛յ, — կը համաձայնէր Պարոնեան:

Տոքթ. Օհանեան վախ չունէր. առաջին ձեռքը տուն շէր քանդեր, կը  
մտածէր: Բայց, ձեռքը այժմ ունէր երկու զոյգ — տեօ փէր —, որ անար-  
ժէք թուղթ էր, նայած Պարոնեանի կարծեցեալ ֆուլին կամ Ամատունիի ե-  
րեքին՝ անկասկած...:

— Երե՛ք: Ետե՛ք Փիշ, պր. Ամատունի-Խոսիտունի...:

— Խօսքէ, տոքթո՛ր, ուղղելու ես Մարտեանին. ան է, որ պիտի  
պատասխանէ զեզի, — շուն ու կատու կ'ուրեցնէրու պէս՝ քար կը նետէր  
Օհանեանին մեր տիշիին:

Մարտեան փաս կ'ըսէր եւ Ամատունի կը յայտարարէր.

— Երկու ութնոց...:

— Ես ունիմ պղտիկ քիւրա մը, — կը բացուէր Պարոնեան:

— Կ'առնես, — կը զինաթափուէր Օհանեան:

Պարոնեան կը քաշէր ինը Փիշ առջեւը: Ամատունին կը բաժնէր երկ-  
րորդ ձեռքը՝ երեք, երեք, երեք եւ աս ալ ինծի՝ երեք:

— Բա՛րթ:

Տոքթ. Պարոնեան դարձեալ ձեռնպահ կը մնար: Տոքթ. Օհանեան  
այժմ սիկարէթ մը դրած բերանը եւ աչքերուն մէջ՝ մուխի մշուշ, կը հա-  
մուրուէր, որ ողնին Փալ ունէր այս անգամ. թքեր եմ վրան:

— Տօ՛, ինծի տուր երե՛ք...:

— Տուի՛նք. խելքդ արագ սկսու դործել, տոքթոր. ինչո՞ւ երեքդ  
աւրեցիր, — կը խայթէր Ամատունի եւ Մարտեանին առջեւ կը նետէր եր-  
կու՝ ըստ պահանջի: Ինք պէտք ունէր եւս՝ երեք թուղթի:

— Հի՛նդ Փիշ, — Պարոնեանն էր:

— Վե՛ց...:

— Վերջապէս. լեռը ծնաւ մուկս, — կը ծամէր հեզնութիւնը Ամա-  
տունի սկոտներուն տակ:

Տոքթ. Օհանեան ունէր սղայական ձայնայար մը խնդուքին մէջ:

— Գիտե՛ս, Ամատունի, մուկը կրծող անատուն է, թէն փափուկ  
մորթիկ ունի, բայց ունի նաեւ սուր սկոտներ. ամէն բան կը կրծէ, մինչեւ  
իսկ ծխախոտ. ճիշդ քեզի պէս, հա՛, հա՛, հա՛:

— Խի՛, իի՛, իի՛, — կ'արձագանդէր Քէօմիւրճեան:

— Կեցցե՛ս, տոքթոր. հարիւր աստիճան վար իբրիւ աս մեր արիւ-

տոկրատր․ ապրի՛ս, պուա՛ւ, — կը քաջալերէր Պարոնեան, — միայն սխալ պահու մը ըրիր այդ ախտաճանաչումը․ վստահ եմ, որ Ամատունին քեզի հրամայեցի պիտի ուզէր չըրչիլեան սիկար մը, ափսո՛ս․․․

— Տօ՛, այդ կծծիէն բա՛ն կը սպասուի․ շունեցած ապրանքն իսկ սուղի կ'ուզէ ծախել․․․

— Վազցո՛ւր քիչիկ մը․ վազցուր, սա՛ շործունքներդ, որ գիտնանք թէ ի՞նչ տեսակի կենդանի մը ունինք առջեւիս․․․

— Հիմա քեզի ցոյց կու տամ ինչ ըլլալս․ սպասէ՛ քիչիկ մը․․․

— Ամատունի՛, մեր տոբթորը թծնող տեսակէն չէ․ վերաւորեցի՛ր իր արժանապատուութիւնը․ ճիշդ չէ․ շենք ներքի քեզի, — կը շարունակէր Պարոնեան իւր աւելցնել կրակին։

— Ես չուն ըսել չէի ուզեր, տոբթօ՛ր․ սա ոգնին փուշերը սրած է․ կը ծակծկէ․ մտիկ մի տար իր փուշերուն․․․

— Կեղծա՛ւոր, — կը նետէր Ամատունին երեսին իր մաղձը Օհանեան։

Քիչ յետոյ կը լրջանային․ փոքրը լուրջ խաղ էր, պէտք էր լուռ խաղային։ Մակայն, Քէօմիւրճեան, որ չէր մասնակցեր խաղին, կրնար օրինակի համար, խորհիլ Ամատունին չըրչիլեան սիկարին մասին եւ հետեւաւթիւններ հանել։ Գիտէր, որ Ամատունին շփոթները տեղացի արարքերիստոնեայ՝ արիստոկրատ ընտանիքներու հետ իրեն ներշնչած էին մտային եւ կենցաղավարական նորաճաշակութիւն մը, որ առաւել կը շեշտուէր թղթախաղի մէջ եւ արհամարհանք՝ դադուրին հայկական խաւին հանդէպ․ տեսակ մը վերէն նայողի քթաբարձութիւն, որ չիտակ կը համեմատէր իր սուր քիթին հետ։ Այդ խաւէն ոչ ոքի կը զիջանէր իր բարեւը․ ազէտ եւ անկուշտուրա մարդոց հետ գործ չունիմ, կ'ըսէր։ Ազգային դիմադրիժը պղտոր էր եւ մութ․ յոռետես էր, պաշտպանելու համար իր գրպանը, որուն պարունակութեան յաճախ ձեռք ուզած էին նետել ինչ-ինչ միութիւններ եւ ազգային բազմակարիք ճանկը, բայց ի զուր։ Ամատունի սկզբունքի տէր մարդ էր եւ եթէ կ'ընդունէր քաղաքին ընտանիքն իր տան մէջ, նախ որովհետեւ գիշերային անպէտքութիւնը կը զգար արիստոկրատ ընտանիքներուն՝ տիկիններու քղանցքին չկարենալ թուրքաւար մէջ համոզուած․ եւ յետոյ՝ այս չորսէն կ'ակնկալէր անձնական շահեր։ Քիչ գանցաուլի չէր խաղային մուտքը․ այլ իմաստութիւն էր շահագործումը․ պիտէր, որ հայը արհեստներու մէջ ճանչցուած էր միշտ խղճամիտ, բանիմաց, ձեռներէց, ստեղծագործ․ այս բաները կը կրկնէին իրեն օտարները։ Ա՛յ, օրինակ, փորը ցաւեցաւ․․․ կ'երթար տոբթօ․ Օհանեանին, բարեկամարար, եւ տոբթորը իրեն կու տար «էշանթիոն» դեղեր․ տիկին Թագուկին ակոս՞ն քաշել պէտք էր, ո՞ղջ մնար տոբթօ․ Պարոնեան, որ ազգասիրաբար եւ տիկինին խաթիր՝ կը դարձանէր հիւանդ ակոսն։ Տունի շինութեան կամ դատական կարիքներու համար՝ Քէօմիւրճեանով եւ Մարտեանով օգտակար կը դառնար օտար արիստոկրատ բարեկամներու․ փաստուած էր, որ այդ արիստոկրատ ընտանիքներուն տակը հիմ ու ստակ չկար․․․ կային պլըտոս կիներ, պը․ Ամատունիի ծեր ոսկորներուն մէջ խլրտում առաջացնելու շափ՝ դիւրեկան․․․

Ամուրի մարդուն՝ Քէօմիւրճեանին բերնին ջուրերը կը վազէին, երբ Ամատունիի վերջին ողբասկանը միտքին կը կառչէր։ Ահա, ան իր եօթանասունին շեմին կանգնած՝ յականջ-անուանէ կ'օժանդակէր ընտանիքի մը նիւթապէս, օգտուելով Ֆիլիքապէս այդ ընտանիքին տասնըվեցամեայ Երզրի աղջկական բարեմասնութիւններէն․․․

— Տօքթոր, Պարոնեանը Հետաքրքրուած է իմանալ, թէ քանի՞ Հիւանդներ մերկացուցեր ես այսօր. սրբանդ լեցո՞ւն է, թէ ո՞չ, — Ամառու-նին էր, որ ահա կը խանգարէր Քէօմիւրճեանի մտամուրթ վազըը՝ ներաշ-խարհէն անդին:

Պարոնեան չէր տարկէր, որ այդ միտքը ուղղակի Ամատունիին կը պատկանէր եւ ոչ ալ Մարտեան Հետաքրքրուած էր ատով: Պարոնեան խորհրդաւոր, լուրջ եւ խիստ մարդ էր ճանչցուած դուրսը, մեր դադուքի աշ-քին: Ազգապետ էր, թաղական ատենապետի բոլոր յարգարժան պատիւնե-րով զինուած: Կատակասէր կը դառնար խաղի ժամանակ եւ ընտանեկան յարկէն ներս, տիկին Անդրիէին հետ: Զաւակները կը դողային իր առջեւ. նոյնքան ալ դող կ'ունենային քաղաքի հասարակ մարդիկ: Իսկ տօքթորը ինքն իրմէ հանողը, ահա Պարոնեանի լուսթիւն պահելն էր ու քիստի-քիստի խնդարը:

— Հո-եա՛, հայա՛. հապա՛...

Մարտեան, որ կը սիրէր շէգոք դիրքի մէջ մնալ, չէր կրնար շխառ-նելի ընտանեկան տուր ու տիրոջին եւ գրկուելու համար տօքթ. Օհանեանին ջիղերը, սուտ լսել կը ձեւացնէր:

— Կատունները դարձեալ սկսան մլաւել, տօքթոր. ի՞նչ դեղահատ կը յանձնարարէի՞ք նման ցաւի դէմ. իմ դիտողածովս՝ մլաւելն ալ տեսող մը փորթ խիթ է եւ պէտք է բուժել...

— Այդ բանէն Ամատունին անելի կը հասկնայ, — կը նետահարէր Օհանեան, Ամատունիին նոր սէրը նկատի ունենալով Շողերի հանդէպ:

Բայց տեսէք, թէ Քէօմիւրճեան ի՞նչ կ'ըսէր.

— Մլաւիւնը հաճելի ցաւ մըն է. ցուրտին՝ կատունները այդ ցաւին սէր անունը կու տան. խի՛, խի՛, խի՛...

Մինչ Պարոնեան հա-եա՛, հա-եա՛՛ կը կրկնէր խնդմնզալով Քէօ-միւրճեանի դարդին վրայ. դարդ, որ կը նմանէր հաւուն երազի մէջ կուտ տեսնելուն, տօքթորը ամպրոպ կը կտրէր խեղճ երազողի գլխուն:

— Տօ՛, քէօմիւրճի-պաշի՛, դուն որ շիօսէիր, չէ՞ր ըլլար. ի՞նչ բան անւցուցիր կրակին վրայ. չոր փա՛յտ, թէ հաւու երազած կուտ. հը՞. ան-լուշտ, որ հաճելի կը գտնես ցաւ-մլաւիւնը. անճարա՛կ, մարդ ըլլայիր եւ մլաւէլի օրն ի բուն. քեզ ո՞վ ինչ կ'ըսէր. հը՞. փարաներդ որո՞ւ համար կը դիզես. առ քած մը, կշտացուր եւ կշտացիր, որ յիմար-յիմար դուրս շտաս. հասկցա՞ր, Քէօմիւրճեան...:

Սենեակը կը լեցուէր հըւհըտով, հհի-հա-հո-հոյ՞ով, ուր բաղա-ձայն կը լսուէր նաեւ քնժենիորին ճիւ-խի՞ն: Ամատունին սպիտակ դրօշակ պարզելու պէս, չըրջիւնեան հաստ սիկար մը կ'երկնցնէր տօքթորին, որուն աչքերը արցունքով լեցուած էին խնդուքէն: Ինժենիորը ոտքի կը կանգնէր, թաշկինակով աչքը չորցնելով ու կ'ըսէր՝ ես գացի՛...: Տօքթ. Օհանեան, հայրաբար կը բռնէր փէշէն — հասկնալի է — շաքէթին ճոթէն եւ ժպտուն՝ կը խրատէր.

— Տօ՛, ո՞ւր պիտի փախչես. հոսկէ լաւ տե՛ղ. մնացիր եւ սա ազաւ մարդուն սուրճով մեզի գոնէ բարիք մը ըրէ՛. դիտեմ, որ տանդ մէջ կրամով սուրճ կը պահես. թող մնա՛յ մասնոցին մէջ. օրապահուստ է:

— Մտա՞յ եմ աղայիս...

Ե.

— Ինչու՞ ծառայ, աղա՛ս. եղի՞ր մեր գլխուն՝ փաշտ... Միայն թէ մշակին-ցաւի հաճելութեան մասին ոչ ոքի չարտայայտուիս անգամ մըն ալ. կ'իջեն մարդիկ գլխուդ կը փաթթեն տունը մնացած պատուած աղջիկ մը. մե՛ղք ես...

Հոս, Պարոնեան քիթին տակէն կը մոմոար, տակէ-տակ Ամատունիին նայելով.

— Հա-եմ՛, ինչո՞ւ տունը մնացած պատուած աղջիկ առնես. մեղք չե՞ս, Քէօմիւրնեան. քեզի վայել է սանկ տասնրկից, տասնըութ տարու. թարմատի աղջիկ մը, սառած կողերդ տաքցնէ, խելո՛ք պարտնիրկա...

— Տօ՛, շո՛ւտ խոհանոց դեւ. այդ հանած-վարածը, որ կայ՝ երազա-խար բնէլ պիտի տայ քեզի գիշերը անկողինիդ մէջ...

Ճի՛շդ էր, որ ամուրի մարդիկ երազախար կ'ըլլային զիշերը, երբ ցերեկը շատ մտածէին ծանօթ կնոջ մը մասին: Մարտեան չէր յիշեր նման արկած մը: Կը ճանչնար պետական հիմնարկութեան մէջ, քարտուղար մը, որուն դեռտախ կիներ զտարիւն արարական զամբիկի կրքուռ ձեւեր ունէր եւ ոսկեհնչիւն քրքրածայն. ահա տասը տարիէ ի վեր ան զինք հեռու քաղաք-ներ կը քաշէր կը ասնէր, պանդոկէ պանդոկ արածելով, ազգականներ տես-նելու կարօտին մորֆինը ներարկելով միշտ էրկանը երակներուն մէջ...: Կրնա՞ր օձիքը ազատել իմ մայիկն, որ առիթ ունենար երազախար ըլլալու: Այս սքանչելի սպրուսը յիշելով, կը ժպտէր, կեղծ համեստութիւն առա-ջարկելով բարեկամներուն.

— Ե՛տ կեցէք, եղբայր, կիներու մասին չարախօսելով. ամօ՛թ է ձեր տարիքին, վայել չէ...

— Դէ՛, դէ՛. կեղծ համեստութեան մորթի կրելու պէտքը չունիս. դուն կը գտնուիս այժմ Դժոխքի եւ Արքայութեան մէջտեղը. շամուսնա-նա՛ս, ինձմէ քեզի խորհուրդ...

Մարտեան կը գառնոր խոզին.

— Տոքթորը մէջ ըսաւ. Փիշ մը աւելի — եօ՛թ:

— Տասը Փիշ, Պարոնեա՛ն:

— Եկա՛յ, — կը համաձայնի Պարոնեան Ամատունիի իջուածքին:

— Տոքթօ՛ր, խօսքը ձեզի է, — կը յուշէր Մարտեան:

Տոքթ. Օհանեանի միտքը դրազած էր այդ պահուն իր կնիկով, զոր թողած էր եւրոպական ոտան մը եւ փախած, հետքը կորսնցուցած՝ այժմ կ'ապրէր Մուկրային հետ: Դժբախտ մարդ էր եղած ինք. առաջին օրէն այդ Լորան — անունը հիմա ալ զարգանդ կը պատճառէր — պատուհաս ե-ղաւ իր գլխուն: Հարցը պսակի գիշերը կատու փարչատելուն մէջը չէր, ինք կրնար առիւծ մըն ալ բոկտել այն ժամանակ. բայց, դէ՛, մինակ դլուխ համալսարանական ուսանող էր, որ նոր կ'ուարտէր ուսումը. կը պատ-րաստուէր դասնալ Երկիր, ծնողքին մօտ, երբ պայթեցաւ Առաջին Համաշ-խարհային պատերազմը: Քայցիկ մայրաքաղաքը կը գտնուէր. ճամբաները մանուածադատ. ապրիլը՝ չոգիի վրայ. զրպանը ծակեցաւ. Ատուտած պա-հէր տանտէրերը, որոնք դուրս չչպուտեցին զինք միտլի սենեակէն. կար-դադրեցին, որ փոքրիկ գործ մըն ալ ունենար — թաղի քնակիչներուն մէջ տոքթօր ընդունեցին, որ աշխատէր փորին համար: Խարտեաշ աղջիկ մը ու-նէին, — պոզօ՛ տեսակէն, — որուն վրայ սիրտը չտաքցաւ բնու: Եւ ահա,



օր մըն ալ եկան ջովը մայր ու աղջիկ, հիւանդ ծերեր մը հետ: Հա՛յ էին. աղջիկը ժպտեցաւ. հօրեղբայրս է, ըսաւ ու կրկին ժպտեցաւ: Նայեցաւ հիւանդին. դեղագիր տուաւ. զացին. աղջիկը յաճախ կու գոց, իբրեւ թէ հիւանդի մասին նոր պատուէրներ օտանայու համար: Թայտառակը գնաց-եկաւ, փակու իրեն — հայ փեսացու կը փնտռէր, գտած էր. սիրահարուեցաւ. է՛հ, Եւրոպայ էր, ինչ զահրուժար էր. ապտութիւն՝ պատերազմի թռչուածին մէջ. պատահեցաւ, ի՛նչ որ պիտի պտտահէր աղջիկ-տղու միջեւ. գայթակղութեան, թէ՛ խիղճի խայթի մասին խորհած ատեն, վճռեց ամուսնանալ Լորային հետ. անիծուէ՛ր այդ օրը — ամիս մը ետքը, աղջկան ուղեղը շարժել սկսաւ եւ օր օրին, ցնցումը խելացնոր դարձուց Լորա չըլլալէն: Ճրճուեց, կռիւ, անփերջանալի վէճեր, բոլորն ալ ինչո՞ւ. գացիր-եկարի, բրիտ-լըրի, այս ու այն խօսքի պատճառով: Տարի մը ետք, կինը ծնաւ առաջին մանչը, ճմրթկուած, աստապած արտայայտութիւնը զէմքին վրայ. հանդուրժեց Քաւարան ապրիլ, յուսալով, թէ զուցէ կը փոխուի կացութիւնը. բայց, կասթութիւնը երթալով մխրճեց զինք զժողքի կրակներուն մէջ. սկսաւ այրել՝ ազատուելու տենչով: Երկրորդ տարին եկաւ երկրորդ մանչը, միեւնոյն կասայարով, որով թափուած էր արաջնեկը: Պատերազմի վերջին տարին էր: Իսկ Երկրին մէջ ոչ հայ մնացեր էր, ոչ ծնող-ազգական: Հետք չկար. անորոշութիւն էր. Միջին Արեւելք մը կար, ու կը լսէր, որ հաւաքուեր էր հայութեան մնացորդացը: Թողուց ինչ որ ունէր շարժական կամ անշարժ խնայողութիւն. թողուց փախուկ կնիկն ու երկու զաւակները, փախաւ.

— Կ'երթամ ծնողք-ազգականներս փնտռելու, — ըսաւ ու խոյս տուաւ: Եթե՛սթ տարի թափառեցաւ անհասցէ. տարին՝ մէկ քանի անգամ դրած եւ նամակ դրկեց. բայց ո՛չ մէկ լուրի սպասեց: Խոյս տուաւ մեծ քաղաքներէն եւ համոզուած, թէ ոչ մէկ աղքատ կրնար գտնել, եկաւ ու բնակեցաւ, հինգ տարի է զիբ այդ փոքրիկ քաղաքը, որ մեր գաղութն էր, մէկ անկիւնի վրայ ինկած միջավայր, հանդա՛րս, խաղաղ...

Այս պատմութիւնը զազանիք չէր գաղութին: Մունիրային հետ վերջին ժամանակները ծանօթացաւ, երբ եկած էր լուացքը բնելու: Մունիրան գլուխը սեւ կապած էր, աչքին մէջ՝ պատրաստ արտասուք: Հասկնալի էր, որ ան ամուսինը նոր էր կորսնցուցեր եւ զաւակ չուներ:


— Մնացիր հո՛ւ. տունին մաքրութեան կը նայիս եւ եթէ ձեռքդը եփուած կերակուրը ուտուելիք է, լա՛ւ. ես մի՛նակ գլուխ մարդ եմ:

Մունիրայի ուզածն ալ այդ էր. մնաց եւ տան տիկինի եւ սպասուհիի դործերը միասին տեսաւ: Այսպէս, երկուքն ալ զո՛հ էին. երկուքն ալ բան չէր պահսեր. կը զոհացուէին երկուստեք... Հիմա ստըթ. Օհանեան կրնար հետեւել խաղին.

— Տա՛սը ֆիչը շատ է, աղուէ՛ս. ինչո՞ւ կանգրուի պէս կը ցատկոտես. իմացիր, որ գրպանս կարծածիդ շափ լեցուն չէ. եկա՛յ. խէրդ պիտի անիծեմ:

- Փա՛ւ ինձմէ, — Մարտեանին ձեռքը տկար էր:
- Տո՛ւր անունը ձեռքիդ, յարգելի արիտոտկրատ:
- Երե՛ք տամ:
- Իսխառ ունեցար. կ'տունես, — սկանջները կը կախէր Օհանեան: Ինք ունէր երկու գոյգ:

— Տոքթոր. այսուհետեւ դեղին դրամը կանխիկ պէտք է վճարէ Ամատունին. չելի՛մ-չիմանամ, որ զէշանթիյոնը դեղ տուեր ես...



- Ին՞չքա կերեր եմ, Պարոնեան. ստակի ալ՝ նայող պիտի չըլլայ :
- Նախահճը զէ՛չ բան է. բայց, Եակոյտիբունը Յուդայութենէն ալ վառթար է, — կը նետէր Ամատունի :
- Երբ Պարոնեան ձեռքը կը բաժնէր, Քէօմիւրճեան կ'ըսէր .
- Ես դացի սուրճ պատրաստելու տղթորին :
- Մե՛զի ալ մի մտնար, — կը ձայնէին միւսները լուրջ :
- Ծիծծամը քսանը՛հ'նզ դա՛հեկան :
- Դուն միայն չինէ՛... :

Մեր էնժենիորը, որ քիչ մը շկամութեամբ կը մտնէր խոհանոց, իբր բախտն ահա, հոն կը գտնէր տիկին թագուկը, որ մեղաւոր՝ կը ժպտէր իբր ներկայութեան համար, կարծէք, յանցանքի մէջ բռնուած ըլլար : Տանտիրուհին կ'արդարանար .

— Ձեր աղմուկէն արթնցայ. քո՛ւնս փախաւ. ըսի, իջնեմ սուրճ պատրաստեմ խեղճերուն, հիմա բերանին չորցած կ'ըլլայ, դուք եկաք վրոն... :

— Շիտակը բե՛մ, տիկին թագուհի. ես խաղը շեմ սիրեր. գէշ ունա-կութիւն է. մէկը կը տարուի. միւսը կը շահի. անքորտինք աշխատա՛նք. տեսակ մը աւազակութիւն՝ ոմանց քով եւ անխելքութիւն՝ տարուողին համար... :

— Ի՛հ. ես ի՞նչ կրնամ ըսել. մարդ են. բանով մը պիտի դրաղին... :

Քէօմիւրճեան կը զգար, որ տիկին թագուկ գինք պտտին կու տար եւ կ'ամշնար իր խօսածին համար : Կը համոզուէր, որ տանտիրուհին աւելի լայնախոհ էր, որքան ինք՝ նեղմիտ :

— Մեր մէջ, տիկին թագուհի, դուք սակի սիրտով կին մըն էք. հրաշալի տանտիկին. հաւատացէք, որ ես տարբեր կը վարուէի ձեզի պէս կնոջ մը հետ. պր. Ամատունին բռնապետ է, գիտեմ. ես ձեր ձեռքերը կը լուայի եւ կը գնէի գլխուս եւ շնորհ կը խնդրէի, — ու կնամենաճողարար կը բռնէր տիկին թագուկին ձեռքը եւ եւրոպայաբեր կը համբուրէր :

Տիկին Ամատունի կը շոյուէր, իբր պառաւած տարիքին՝ անցեալի խորերը մոռցուած, չգտած դուրգուբունքի շերտութեան զարթնումէն : Ի՞նչ էր գտած նախկին ամուսինին քով. — Եղեռնի տարիներու դառնութիւննե՛ր. ի՞նչ էր գտած Ամատունիին մէջ. — կրկնակի դառնութիւն եւ յուսախարութիւն... :

— Է՛հ, պր. Սարգիս, — տիկին թագուկի մտերմական իմաստով չէր, որ կու տար էնժենիորին պղտիկ անունը, այլ տեսակ մը անյարմար կը դըտնէր Քէօմիւրճեան ժականունով կուլելի պինք, — մաղբրուս սպիտակը առած, նստած կին եմ. պէ՞տք էր, որ վերջին տարիները այդ սնունը դար մեր վըրայ. գիտէք, չէ՞... :

Քէօմիւրճեան գիտնալով հանդերձ, չէր ուզեր բացուիլ ու խորանալ խնդրի մը մէջ, որ կը վերաբերէր Ամատունիին. քիչ առաջ արդէն անդրադարձած էր Շոգիւր անունին .

— Մա՛րդ են, կը պատահի. թէեւ պէտք չէր պատահեր. ի՞նչ ըրած... :

— Շիտա՛կ է. բայց, Եօթանասունէ՛ն վերջ. խելքիս չի պառկիր... որ մարդուն մէջ միշտ կայ ստատանան. դո՞ւք ինչու չէք ինկած անոր ճանկը, պր. Սարգիս :

— Իմ բնութիւնս ստատանայէն աւելի չար է, դուցէ, քանի որ ստատանան ինձի բնաւ չէ մօտեցած, — եւ Քէօմիւրճեան դո՛հ, որ կըցած էր սրամիտ խօսք մը ըսել, ի վերջոյ, կը սկսէր խնդալ՝ խի՛, խի՛, խի՛ :

- Սուրճը եղա՛ւ:
  - Ուրեմն, տանինք մեր երանելիներուն քիմքը դառնացնենք:
  - Դուք լեզվի՞ կը խմէք:
  - Սոյորութիւն եղած է:
  - Ամա՛ն, ես քիչ մը քաղցր ըրի. մեր Մանուկը քաղցր կը սիրէ:
  - Անշուշտ թէ կը սիրէ անուշը. կ'երեւի համը բերանը մնացեր է. այնպէս չէ՞, տիկին թաղուհի. խի՞, խի՞, խի՞...
  - Պր. Մարդիս, զիս հոս տեսնելիդ յայտնի չընէք, կը խնդրեմ...
  - Դեռ մարդը կը նեղուի, եթէ գիտնայ, որ վար իջեր եմ:
  - Միայն թէ սուրճին համէն հոտ չառնէ, դեւերու պէս...
  - Ծս հիմա վեր կ'ելլեմ, որ չիմանայ...
- Քէօժիւրճեան եւ տիկին թաղուհի տարբերութիւն չունէին: Տիկինը աւելի մաշած էր ու սպիտակած. մարդուն մազերը կը մնային տակաւին սեւ: Ու դատ-գատ կ'անդրադառնային բախտի անիւին, որ կընար, ա՛յ, օրինակի համար, գիրենք հանել ոչ մ' դիմաց՝ անցեալին. քնչ պիտի ըլլար իրենց գոխարարութիւնները՝ իբրեւ էրիկ-կնիկ: Անպայման, այս ենթադրութիւնը կ'անցնէր իրենց երեւակայութենէն, երբ բաժնուեցան իրարմէ: Քէօ-միրճեան առած էր մտաուցարանը եւ ահա ետին նայելով՝ կը ժպտէր տիկին թաղուհին. իսկ թաղուհի տիկինը գլխով քաղցր բարի երթաս մը կ'ըսէր...

ՄՄՐԱՏ ՓԱՆՈՍԵԱՆ

(Մնացեալը յաջորդով)



## Մ Ղ ՁԱ Ի Ա Ն Ջ



Կը հնձուի՛ն,  
 Զերթ ողկոյցներ սսկէ աւիշ,  
 Իդձեր՝ երանգ - երանգ,  
 Զայներ՝ բրբիռ - բրբիռ,  
 Անէութեան հնձաններուն մէջ լուին...:

Անկոյթ քմա՛յքը նակատագրի,  
 Որ մեր կեանքի ալքեստանէ՛ն՝  
 Կը քաղէ, կը նմլէ, կ'արիւնէ  
 Գարուններ՝ համակ խինդ ու բուրմունք,  
 Կարօտներ՝ համակ հուր ու երկունք,  
 Տրոնք անյոյս համակերպութեամբ  
 Կը բորի՛ն, կը բորի՛ն  
 Առասպելներու ժախտոտ սրուակներու մէջ  
 Ի հանոյս Ոչնչութեան:

Անբարեգութ հաշուակալ մըն է ժամանակը,  
 Որ մահագրեալ մուրհակներ կը յղէ  
 Շնչառեալ էակներուս,  
 Թուագրուած՝ դարերու անփոփոխ սակով  
 Եւ իր տնօրհնութեամբ կնքուած  
 Անհնձելի հաշուետումներու մէջ,  
 Հանդերձեալի լերկ ոստանները բեզմնաւորելու  
 Երկրաբանքաբ գիտութեամբ...:

Կը հնձուի՛ն  
 Սէր եւ Մայրութիւն,  
 Գորով ու Քինախնդրութիւն  
 Եւ բազադրիչ ուժերը համայն  
 Զգայական եւ խոհական էութեանց  
 Ունայնութեան նոյն ատրուշանի՛ն  
 Պատարագուելու:

Կը նայիմ անցեալիս,  
 Որ տարբայոյժ՝  
 Կը թաւալի անյուշ, անկերպար,  
 Անէութեան լոյժ շամանդաղներուն:  
 Կը նայիմ կեանքիս, օրերուս գալիք,  
 Որունք վաղ կամ ուշ պիտի հնձուի՛ն  
 Մահուան անխուսափելի՛ ալքեկութիւն,  
 Միանալու

Անհուն,

Անթոյր

Անծանօթին...:

ՅԱԿՈՒ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՆԵՐՍԷՍ ՎԻՐԱՊԵԱՆ

ՓՈՐՉՈՒԹԵԱՆ ԼԵՌ



Ամէն անգամ, որ կնքահայրս նիւ Եորքէն իր դրացիներուն մասին գրէր, մտքէս կ'ըտէի.

— Այս մարդը որքա՞ն դրացի ունի, որ անուշաբու անոնց մասին կը գրէ: Տուն մը շատ-շատ քանի մը դրացի կ'ունենայ: Բայց երբ ես ալ Ամերիկա եկայ ու տասնակիներով յարկատրտիներուն ականատես եղայ, իրաւունք սուի: Ուրեմն, կը նշանակէ, որ մարդ մը կրնայ տասնեակներով դրացի ունենալ, ու այն ատեն ուզածին յափ կրնայ գրել. մա'նաւանդ՝ որ ասանկ շէնքերու մէջ քանի մը ամիսը անգամ մը նոր վարձակալներ կ'երեւին:

Բայց խնդիրը այն է, որ կ'երեւի, թէ կնքահայրս իր դրացիներուն հետ լաւ կեանք մը կ'ապրէր, անոնց բուրքէն սիրւած ու յարգուած էր:

Իսկ ես, չար բախտէս, առաջին մէկ օրէն, դրացիներէս մէկուն հետ դժտըւած մնացի: Ատիկա ձախ կողմի դրացիս էր: Բան մըն ալ չէի ըրած իրեն, նոյնիսկ հետը չէի թօսած: Մինչեւ հիմա ալ մեծ հարց է, թէ ինչու պատս այդպէս ծեծեց: Արդե՞՞ք շատ երգելու համար էր:

Բուրբովին նոր էի: Ի՞նչ ընէի. կը սիրէի կարօտս հայերէն երգելով առնել. ասորժակով կ'երգէի Սայաթ-Նովայէն, ժողովրդային երգերէն մինչեւ Վիսայն թէ մայրս ման շիմամայ] երգը. այս երգով յայտագիրս կը վերջացնէի, բայց իմ բուռն փափաքին ընդառաջելով՝ «Մոռանալ» երգն ալ կ'երգէի: Այս վերջին երգին բարձր ձայնակներուն ձայնս չէր հասներ, ջիչ մը կողորդս կը չարչարէի, բայց կ'երգէի:

Ամէն օր նոյնն էր պատմութիւնը. բայց այդ օրը ի՞նչ պատճառ եղած էր, չեմ գիտեր: Ձէի երգած. ժամ տասներմէկի ստեն պատրաստուեցայ ջնանալու, ու հազիւ անկողին մտած՝ Թախ, Թախ, Թախ, Թախ, արագ-արագ ու զօրաւոր կերպով պատս ծեծուեցաւ. նախ՝ խորհեցայ, որ պատը նկար կը դամէ, բայց այդչափ ս՞ուշ, ինչքիս շարակեցաւ. տարբեր զարնուածք ունէր: Հազիւ կէս ժամ անցած՝ ծեծուեցաւ աւելի ուժգին:

— Մ'ըներ Աստուած, — ըտի, — ի՞նչ է այս: Դրացիիս ձայնը իզական օտոտի կը պատկանէր, այնպէս որ՝ այդքան ալ վախնալու ու մտահոգուելու բան

չկուր: Պատկիմ քնանամ, — ըսի, — այս անդամ ալ, Հազիւ ըսն մտած՝ նորէն ծեծուեցաւ: Վախցայ շիտակը, որքան ալ տկար սեռին պատկանէր, այսուհանդերձ Ամերիկայի մէջ խենթեր պակաս չէին: Պատուհանս Հազիւ կէս մեթր բարձր էր. կրնար յանկարծ, խոր քունի մէջ եղած միջոցիս, ներս դալ ու զիս միւս աշխարհ գրկել:

Ամերիկայի մէջ, բոլոր գուռները կողմանք ունին, բայց պատուհանները բաց են:

Ուրեմն, ճրագմար յայտարարեցի ու պատերազմի պատրաստութիւն տեսայ: Գորցէն ձեռքս առի խոշոր դանակը, որ չժանդոտող տեսակէն էր, պահ մը կանգնած մնացի սենեակին մէջտեղ ու սկսայ խորհրդածել:

— Եկած էի Ամերիկա զպրոց երթալու, նոր կեանք սկսելու, զարգանալու ու հիմա, ինքնապաշտպանութեան սիրոյն՝ բանտ պիտի երթայի:

Բարձիս տակ պահեցի դանակը, պատրաստ էի ամէն Հաւանականութեան: Յաջորդ օրը, նամակատուփին վրայն անունը առի՝ — Ճէֆի Լընթրը — մականունն ալ քիչ մը վախճուց զիս, վերակացուն Հարցուցի ինչ տեսակ մէկը ըլլալը:

— Ամուսնալուծուած տիկին մըն է, — ըսաւ:

Առանց այլեայլի ամուսինին իրաւունք տուի:

Փոթորիկը անցաւ թէեւ, բայց տակաւին իմ բարկութիւնը նիւթ էր ինծի Համար:

Օրեր ետք, անդադարձայ, թէ կ'երեւի ամուսնալուծուած օրիորդը կամ տիկինը այդ օրն ալ սպասեց, որ երգերս երգէի-վերջացնէի, որպէսզի ինք ալ Հանգըստանար, ազատէր, բայց սպասելէն յոգնած՝ աղուոր մը պատս ծեծեց:

Անկէ ետք, այլևս բարձրագոյն չհրգեցի, կ'երգէի մոմտալով, զբացիիս արեան ճշուամբ շարձրացնելու Համար:

Օր մըն ալ վրէժս լուծեցի: Ձայնասփիւռը լատ բարձր բացած էր. կը տա-

ռապէի, խենթի պէս էի, կարծես պարագ թիթեղէ ամանով դիտուս կը զարնէին: Ձղախացած՝ անանկ պատը ծեծեցի, անանկ ծեծեցի, որ ինչպէս ինք իմ երգելու շրեց, այնպէս ալ ես իր ձայնասփիւռին ձայնը անգամ մըն ալ չլսեցի:

Ասիկա ձայն կողմի դրացիս էր, որուն Հետ դեռ բարեւ-Աստուծոյ բարին չըսած՝ խորեցանք ու անանկ ալ մնացինք մինչև վերջ:

Սակայն աջ կողմի դրացիս, Աստուած իրեն ալ ներէ, ինծի ալ, լաւ աղջիկ էր. ներկայանալի, միայն տոփիսի լոյսերուն պէս աչքերը քիչ մը իրարու մօտ էին:

Առաջին մէկ օրէն, սիրալիր ժպտով մը ճեռ՝ ըսաւ, արդէն ես ալ Հայ էի. ուրախութեամբ կրկնեցի ըսածը, այսպէս քանի մը անգամներ իրարու ճեռ՝ ըսելէն ետք՝ Հեռուէ Հեռու բարեկամութիւն մը Հաստատուած էր մեր միջև, բայց տակաւին առիթը չէր ստեղծուած Հետք խօսելու: Թէպէտ աչքերուն ծօտկուութիւնը այնքան մեծ Համակրանք մը չէր արթնացած մէջս, բայց Ամերիկա էի, կ'ուզէի կերպով մը կեանքը վախելի, աղջկայ մը Հետ ըլլալ, լաւ ժամանակ անցընել: Կը մտածէի առիթ մը ստեղծել: Երբեմն, դրան առջև կանգնած՝ իր անցնելուն կը սպասէի, կը մտածէի, թէ ինչպէս կրնամ կարգադրել. մինչև Հիմա ամէն ինչ երեւակայութեամբ ըրած էի, սակայն, իրականութիւնն էր կարեւորը: Նոյն առանձին կեանքը կը շարունակէի, կը մտածէի, թէ ուրիշներ ինչպէս կը կարգադրեն, ու արդէն երկու խօսքով խնդրը վերջացուցած կ'ըլլան:

Նոյնիսկ օր մը, լուացքի ատեն իրարու Հանդիպեցանք, բայց բնաւ չխօսեցանք միասին, միայն ճեռ՝ մը ըսինք. ա՛յս էր. տունս վերադառնալէ ետք, ինքզինքս յանդիմանեցի, որ երկու խօսք մը չկրցայ խօսիլ, մինչդեռ մտքովս դրեթէ միշտ Հետք կը խօսէի:

Օր մը, սակայն, իրական առիթը ստեղծուեցաւ. խօսքը մէջերնիս, ստեղծողն ալ Աստուած էր:

Դէպքը պատահեցաւ հետեւեալ ձեւով. Ետրաթ իրիկուն մը, տուն վերադարձիս ուղղուեցայ դէպի նամակատուփ: Քիչ անդին, աւազանին եզերքը, աթոռին վրայ նստած էր, ու հակած սեղանի մը վրայ՝ բան մը կը դձէր:

Բացի նամակատուփը՝ մէջէն պրդտիկ թուղթ մը ինկաւ ու հովը զայն տարաւ դէպի դրոցիկիս նստած տեղը. սկիզբը շուղեցի թուղթին ետեւէն երթալ, բայց յետոյ դուրսի. զնա՛յն, Քէթի, ըսելով ծոեցայ, առի թուղթը եւ մինչ ես կը կարդայի, հարցուց, թէ հո՛յ էի:

— Անչո՛ւշտ, — ըսի: Ետքը՝ սկսանք խօսիլ Քըբու հարցումներ իմ մասին, ես ալ բաւարարեցի զինք. զգացի, որ գոհ մնաց ինձէ: Կ'ուզէի, որ խօսակցութեանը շարունակուի. բայց դուրսը պաղ էր, զօրաւոր հով մը կար. առանձին ի՞նչ կ'ընէր հոն. բան մը կը գծէր, այդ ձեւով զարդասեղ մը ապուրելու համար: Երբ վերջացուց, ստաշարկեց տոք սուրճ մը խմել, յօտարեցայ. դացինք իր տունը, կոկիկ կերպով կուհաւորուած մէկ սենեակնոց յարկաբաժին մըն էր, իմինիս ձեւով: Տաքուկ էր մթնոլորտը. մինչեւ ուշ ատեն նստանք, անուշանուշ խօսակցելով լաւ ժամանակ անցուցինք: Երբ կը մեկնէի՝ ըսի.

— Եթէ ուզես, վաղը երթանք:

— Շատ լաւ կ'ըլլայ, — ըսաւ:

Առաջին անգամ ըլլալով ուրախ սնկողին մտայ. հանգիստ էի, ի վերջոյ այլեւս հետս աղջիկ մը պիտի ունենայի, անոր հետ պիտի երթայի, պիտի գայի, ելլէի, իջնէի, ամէն ինչ ընէի: Ան ալ ճիշդ մօտոս էր, զովս:

Յայտնող առտու սկսայ ուրախ-ուրախ շրջիլ սենեակիս մէջ: Արդեօք ինք ի՞նչ կ'ընէր. պատին կը մօտեցնէի ահանջս, ձայն չէր լսուեր, ուրեմն տակաւին կը քնանար: Քիչ հտք, քայլուածքի ձայներ առի. արթնցած է, կը պատրաստուի, կը խորհէի. ահա դուրս բացաւ, կ'երթայ, արդեօք ո՛ւր. ահա նորէն կու գայ ներս, մտաւ, կ'երեւի աղբի թիթեղը տարտուտեսակ մը զգացում կը տիրէր մէջս, կ'ուզէի պաղարին ըլլալ, հետամուտ

ըլլալ իր շարժումներուն, բայց անհամբեր էի: Քանի մը անգամ հեռաձայնը շարժացուցի՝ իր թիւը բանալու համար, բայց ձգեցի: Արդեօք պատրաստ էր, ժամանակը կը մօտենար, պիտի երթայինք:

Քիչ ետք դուռս զարկաւ. բացի: Երկու դաւաթ սուրճ ունէր ձեռքին:

— Խմենք, այդպէս երթանք, — ըսաւ:

Կամաց-կամաց խմեցինք. ճրարեցինք, թէ ինչպէս պիտի երթանք պտուտիք մեր տեղը: Աֆրիքա՞ն սափարի պիտի երթայինք, չէ՞ինք պիտե՞ր տեղը: Ծանուցումներուն նայելով, հետաքրքրական տեղ մը պէտք է ըլլար: Գացինք, ճամբան հաճելի էր, զովս կըրկ ֆրէնտ կար: Պիտտակ կ'ուտէինք. ինք կը կոտորէր, միջուկը բերանս կը դնէր: Մատներուն հարմը ուղղակի բանաստեղծական էր:

Հասանք Աֆրիքա՞ն սափարի: Պահալը պատուիրեց ուղակիները դոցել. վայրի կենդանիներու մէջէն պիտի անցնէինք: Տեղ մը, ուղեցի առիւծ մը ըզայնացնել. ապուկին բացի ու դրան զարկի քանի մը անգամ. նկատի չառաւ զիս, երեսը միւս կողմ դարձուց, ի՛նչ որ ըրինք՝ մեզի չնայեցաւ, իսկ երբ հեռացանք, սկսաւ մեր ետեւէն նայիլ. քիչ մը ինքզինքս նուստացած զգացի:

Վերադարձի ճամբուն, ճաշարան մը մտանք՝ ընթերելու: Պատերէն մէկուն վըրայ, աղջկայ մը կիսամերկ նկարը կար. կուրծքը ամբողջովին բաց էր. կարծես թէ աղջիկը կուրծքերը աւելի ցցուն դարձրնելու համար՝ ձեռքերը զլիսուն ետեւը տարած էր. վարդագոյն ողորկ մարմին մը ունէր:

— Այս Ամերիկայի մէջ ալ, — ըսաւ աղջիկը, — այնքան հետաքրքիր են սէքսով: Կը զարժանաս, ամէն կողմ սէքս, սէքս, սէքս:

— Ի՞նչ կը մտածես սէքսի մասին, — հարցուցի:

Ժպտեցաւ, ուսերը վեր քաշեց ու ըսաւ.

— Հետաքրքրական է, — ու աւել-

ցուց, — քեզ մը խենթեր կան շուրջդ, որոնք առաջին վայրկեանէն իսկ ատով կը հետաքրքրուին, կարծես անոնց կեանքի առանցքը ասիկա ըլլար, անշուշտ, այդ չափազանցութիւն է: Ե՛ս ալ կը հետաքրքրուիմ սէքսով, բայց կ'ուզեմ կեանքի ընկեր մը ունենալ, որ ամբողջութեամբ անոր պատկանիմ, ու ինքն ալ ինձի, որ թափանցենք իրարու մէջ ամբողջ էութեամբ, իրարու յանձնուինք ամբողջութեամբ, հոգիով, մտքով, մարմնով:

Եկու սպասեալ: Ամանները շարեց սեղանին ու մեկնեցաւ: Միւսը ուտելու և կ'ուտէինք, երբեմն մեր նայուածքները իրարու կը հանդիպէին, կը ժպտէինք: Կը մտածէի բաժնեկրու մասին, սէքսին մասին, Աստուծոյ մասին: Ես բանտարկեալ մըն էի, Աստուծոյ բանտարկեալը, քանի անգամ ուզած եմ ազատագրել ինքզինքս, չեմ կրցած, վախցած եմ. ու յետոյ՝ կայ իմ ընտանեկան զատարարութիւնը: Եկեղեցիին մէջ մեծցած եմ ու դուրսի կեանքին՝ անտեղեակ մնացած: Կեանքս լուսանցքային կեանք մը եղած է միայն. երանի՜ թէ՛ կ'ըսէի, պարող, խոնդ, խաղամուլ ընտանիքի մը զաւակը ըլլայի, այդպէս կը մտածէի, կ'ուզէի այլեւս ելլել պատեանէն, բնէլ ամէն ինչ ազատօրէն. բայց իրիկունը տունը Ս. Գիրք կը բանայի ու կը կարգայի. «Ինչո՞ւ ձեր ստակը կը վատնէք ոչ թէ հացի համար, այլ այնպիսի բանի համար, որ չի կշտացներ»: Ս. Գիրքն ալ ճիշդ էր, անանկ բաները փոր չէին կշտացներ, հոգի չէին բաւարարեր, ու կ'աղօթէի. ա՛յս էր եղած կեանքս. երկու սուրբ մէջ մնացած էի. ո՛չ այս կողմ կրնայի գալ, ոչ այդ կողմ կրնայի երթալ. երկրագունտին նման ձողականութեան ու քաշողականութեան օրէնքին էի ենթակայ. ո՛չ Աստուծոյ կրնայի մօտենալ, ոչ ալ հեռանալ անկէ:

Ամերիկան տարրեր էր: Հոս աղջիկները, կիները կը ժպտէին, կը խօսէին հանդիպած մարդոց հետ, ատանց վերապահութեան:

— Ինչո՞ւ, — հարցուցի, — Ամերիկայի կիները միշտ կ'ուզեն անկախ ըլլալ:

— Աւելի լաւ չէ՞, — ըսաւ, — օրինակ, ես ընտանիք ունիմ, բայց առանձին կ'ապրիմ, չեմ ուզեր, որ նոյնիսկ մայրս խառնուի դործերուս:

Ուզեցի դիտել, թէ աշխատելով հանդերձ ինչպէ՞ս կերակուր կը պատրաստեն:

— Ըսենք թէ ամուսին ունիս, ի՞նչ տեսակ կերակուր պիտի ուզէիր պատրաստել անոր, — հարցուցի ու անմիջապէս աւելցուցի, — հաք տա՞ղի, հեմպրիլը՞:

Գլուխը շարժեց այդ ըսելու պէս ու աւելցուց.

— Թի վի տիներ:

Օ՛, թի վի տիներ, Ամերիկա գալէս ետք, քանի մը ամիսէն արդէն ձանձրացած էի անոնցմէ:

Ճաշը վերջացած էր, պատրաստուեցանք դուրս ելլելու, կատարեալ մութ էր: Ետքը մուլի մը դացինք, հետաքրքրական էր, սիրեցինք: Տուն եկանք, բաժնուելու ատեն գրկեցի մարմինը, համբուրուելով բաժնուեցանք իրարմէ: Յողմած կը զգայի, բայց երբ անկողին մտայ՝ վերմակին պաղութիւնը սթափացուց զիս, քունս ալ հեռացաւ: Մա՛նաւանդ՝ երբ վերջին անգամ գրկուեցանք, մարմնին կազապարը կը զգայի մարմնիս վրայ: Երկնցած էի անկողնիս մէջ, հասելի էր այդ դիրքով մնալ, վերապրել հպումները: Մէկ հարցումիս, աղջիկը այս ըսելու պէս գլուխը շարժած էր, սիրած էի այդ ձեւը: Անպիտակցաբար ես ալ սկսայ իր ձեւով գլուխս շարժել, բայց մահաճակալը ճոռաց, չսիրեցի այդ զբժրող զբժրքը ձայները. ամբողջ տրամադրութիւնս քանդեց, պաղութիւն մը եկաւ վրաս ու սկսայ պաղ-պաղ դիտել կեանքը, կեանքս, որ ամէն օր նոյնն էր, ատանց փոփոխութեան, միայն օրերը կը փոխւէին, Երկուշաբթին Երեքշաբթի կ'ըլլար, այս շաբաթը՝ յաջորդ շաբաթ ու անոնց կը յաջորդէին ամիսները, տարիները:

Բնացեր եմ: Ժամացոյցին զանգակը



արթնացուց զիս: Գործի պէտք է երթայի: Գացի:

Ամբողջ շաբաթը պտոյտին ու մեր խօսակցութիւններուն ազդեցութեան տակն էի: Աղջիկը որամարանական գըտած էր կարծիքներս ու ըսած:

— Այո, պէտք է փորձենք՝ գաղափար մը օճեկնալու համար, փոփոխութիւն մը անպատճառ պէտք է մտցուի մեր միտպաղուղ կեանքին մէջ, — ունկնդրեցած էր յետոյ:

Ու ես անգաղար այդ պէտք է փորձենքի մասին կը մտածէի:

Ուրբաթ իրիկուն, շուկայէն վերադարձիս, տեսայ զինք: Կայնած էր դրան առջև, ձեռքը ուխակի բաժակ մը կար, ճեպ՝ ըսի ու տունս մտայ: Հազիւ տեղադրած էի բերաններս, երբ կրկին երեւցաւ՝ ձեռքը ուրիշ ուխակի բաժակով մը: Հրամայուց: Առի: Քոյ՛ գոյ՛ նըստանք:

— Ի՞նչ պիտի ընենք, — հարցուց:

— Լաւ կ'ըլլար, եթէ տեղ մը երթայինք, — պատասխանեց: Որոշեցինք մեր ընկերքը, երթալիք տեղը: Յետոյ միասին գացինք Ե՛մպլըկը ուտելու: Ուրախ էինք. ինքնաշարժը վարելու ատենս՝ ինք բուն մը կ'ըսէր, բայց ազմուկէն լաւ չէի հասկնար:

— Ի՞նչ ըսիք, — կը հարցնէի:

Ինք կը ծռէր, բերանը կը մօտեցնէր ականջին, կը կրկնէր ըսածը, տաք շունչը անուշ գոտանք մը կ'արթնցնէր մէջս, իրեն կը նայէի, մտքէս կ'ըսէի.

— Լաւ է այս աղջիկը, լաւ է:

Ուրեմն, յաջորդ օրուան յայտադիրս ալ որոշ էր:

Այս անգամ Հոյիվուտ գացինք, ինք կը ճանչնայ եղեր այդ կողմերը: Ձիս դեղեցիկ ճաշարան մը տալու, յայտնի էր սուղնոց տեղ մը ըլլալը: Ըրինք մեր ասպարանքները: Ուրախ էի, խորհրդաւորութիւն մը կար շուրջս, որամարանութիւնս բարձր էր, կերակուրս վերջացաւ, ինք տակաւին կ'ուտէր, զգացի, թէ իմ մասին կը մտածէ, երէկ ալ որոշապէս ինծի կը սպասէր, դո՛ւ մնացի, ուրեմն,

իմ մասին մտածող մը ունէի, ինքն ալ վերջացուց. մեկնեցանք:

Ծտըը՝ նորէն մտալի գացինք, բայց կէս ձգեցինք, ձանձարացուցիչ բան մըն էր. յանկարծ ըսաւ.

— Քեզ տեղ մը տանիմ:

— Լաւ, — ըսի ու ըսած ուղղութեամբ քշեցի ինքնաշարժը:

Սկսանք գառիվեր ելլել: Կը բարձրանայինք դէպի գագաթ: Ճամբուն եզերքը տեղ-տեղ ցայտադրեւորներ կային, մէջը՝ գունաւոր լոյսեր: Տուները վերջացան, կը շարունակէինք մեր վերելքը: Ամէն կողմ մութ էր այլեւս ու միայն մենք կայինք այդ մութ ու դարձգործիկ ճամբուն վրայ: Ժամը դիւրեւան տան անցած էր: Այստեղերը ի՞նչ դործ ունինք, կ'անցընէի մտքս, բայց կը քշէի: Հանրային պարակէզի պէս տեղ մըն էր գագաթը. մութ էր ու ամայի: Ուզեցի ետ դառնալ, բայց աղջիկը կը շարունակէր ըսել.

— Յա կողմ քշէ, այդ կողմէն դարձիր:

Կը հնազանդէի:

Ի վերջոյ՝

— Հոս կեցուր ինքնաշարժը, — ըսաւ:

Կեցուցի, իջանք:

— Դեռ քայլով պէտք է յառաջանանք, — ըսաւ:

Ախտուած իմ, ո՛ւր բերու գիտ այս աղջիկը, կ'ըսէի ինքնիրենս: Վախ մը կար մէջս, կ'ուզէի առն վերադառնալ, անկեզօրէն կը վախնայի. այս մութին եւ անանութեան մէջ՝ շիտակը խելացութիւն չէր ըրածնիս:

Բայց յանկարծ, երբ պատշգամի պէս տեղ մը հասանք, ա՛հ, բացաղանջեցի: Աստուած իմ՝ այս ի՞նչ տեսարան էր, որ փոռեցաւ աչքիս տռիւն. ամբողջ Լոս Անճելոսն ու Հոյիվուտը ոտքերուս տակը լոյսերու մէջ կը շողային:

— Օ՛, սքանչելի է, — ըսի:

Մոռցած էի ամէն վախ, ամայութիւն, լուռութիւն. մութ էր մեր շուրջը, բայց վարը՝ լոյսերու ձով, ծա՛վ.:

— Կարծես անտէ ալ չկայ, — ըսի:

— Այո, — ըսաւ, — այսօր սմախ չկայ:

Ատոր համար այնքան յստակ կը փայլէին լոյսերը: Լոյսերու աշխարհ էր, գեղեցիկ ու անծայրածիր:

Մութին մէջ թով թով կայնած էինք:

Կարծես ստանան բերած էր զիս ու կայնեցուցած լերան դագաթը ու ցոյց կու տար աշխարհի ամէնէն արագ աճող քաղաքը, որ հիմա ծով լոյսերու մէջ թաղուած էր:

Աղջիկը կը բացատրէր.

— Ատիկա Սընտէթ պուլըվարն է, միւսը՝ Հոլիվուսը, իսկ միւսը՝ Սանթա Մանիքա պողոտան:

«Փորձութեան լե՛ռ», պոսաղի յանկարծ: Ամբողջ մարմինս կը դողար, անդադար կգակս կը չփէի. ի՞նչ ընէի... փորձութեան լե՛ռ:

Աղջիկը կը մտէր ու որքան աւելի մը... էր, այնքան ինծի կը մօտենար: Հպելու աստիճան փակաւ ինծի, կարծես տաքուկ անկիւն մը կը փնտռէր մարմնիս մէջ:

— Ի՞նչ, կը մտի՞ք, — հարցուցի:

— Այո, — ըսաւ:

Քակեցի բաճկոնիս կոճակները, տարածեցի կոճակին ու մօտեցուցի զինք մարմնիս: Կուրծքերուն կակուղութիւնը անուշ հոտանք մը արթնցուց մտքով մարմնիս մէջ, կը համբուրէի անյաղարար, ազահարար: Փորձութեան լեռ, կ'անցրնէի մաքէս, փորձութեան լեռ, մ'ձ բերաւ զիս հոս. փորձութեան լե՛ռ:

— Բալէ՛, — ըսի աղջկան, — զալէ՛:

— Ո՛ւր, — հարցուց:

— Տուն:

Թեւէն քաշելով տարի զինք, հապճեպով կը քշէի ինքնաշարժը, մինչ ինք կուրծքը ծածկելով գրողս էր:

Հասանք տուն: Բացի դուռը: Հրեցի զինք ներս...

\* \* \*

Առտուն, արթուն էր: Աչքերը այնպիսի արտայայտութիւն մը ունէին, որ

կարծես դեռ չէր յապեցած, յապեցած չէ՞ր:

Երազի պէս կու գար ինծի այս ամէնը, յիշեցի փորձութեան լեռը, խընդացի:

— Ինչա՞նչ կը խնդաս, — հարցուց:

Բացատրեցի: Նախ անակնկալի եկաւ, մտածեց, յետոյ յանկարծ քահա՛քահա՛ խնդալ:

— Ատիկա, Սընտէթ պուլըվարն է...

Յաջորդող շարժումները նորէն միասին էինք: Կը պտտէինք, կը ճաշակէինք՝ կը պսակէինք. բայց օրըստօրէ պահուած մը կը դառնէ իրեն հանդէպ, դառցում մը կը հեռացնէր զիս իրմէ, կը դառնէ, թէ այլեւս չէի սիրեր զինք, կուտ կը թուէր ինծի. դո՛նէ՛ աչքերը գեղեցիկ ըլլային:

Հինգշաբթի լուացք ընել էր միտքս, նայեցայ՝ հոն է, յետաձգեցի, չէի ուզեր տեսնուիլ իրեն: Երբ իրիկունները տուն գայի, կատուի քայլուածքով կը մտնէի, որ չտեսնէ, չգայ դուռը գարնէ:

Տաճախ իրիկունները գիտածմբ ուշ կու գայի, խորհելով, որ այդ պահուն քնացած կ'ըլլայ, բայց միշտ լոյսը վառած կը տեսնէի, ի՞նչ է, թէ ոչ ինծի՞ կը սպասէ: Այդ լոյսը զիս կ'անհասարկէր, կ'ուզէի, որ մութ ըլլար սենեակը: Կը ջղայնանայի ամէն անգամ, երբ արթուն ըլլալը զգայի: «Թող ելլէ այդ սուրնէն», կ'անցնէր մաքէս:

Անգամ մը, ուշ եկած էի: Նորէն արթուն էր, հաղիւ գողի պէս ներս մտած, դուռս դարձուցաւ, չբացի:

Յաջորդ օր, նոյն բանը նորէն կրկնուեցաւ, նորէն չբացի, որոշ էր, որ ինծի կը սպասէր, ես ալ իր չգալը կը փափաքէի:

Բան մը կար մէջս. անհանգստութիւն մը, սխալ բան մը փաթթած էի գլխուս, որ կը ճնշէր հողիկս, օրըստօրէ կը սաստկանար, կը տատապէի հոգեպէս, կ'ուզէի ձերբազատուիլ ու չէի կրնար ամէնէն շատ այդ սրիկայ լոյսը կը սարսափեցնէր զիս:

Կ'ուզէի հլլիկ այդ տունէն, չէի ուզեր հանդիպիլ իրեն. որոշած է վերջնա-

կանապէս փոխադրուիլ: Թերթերուն մէջ սկսայ յայտարարութիւնները աչքէ անցընել:

Իրիկուն մը նորէն դարկաւ դուռս, անունս կանչեց, պատուհանիս ապակիին ալ սկսաւ դարնել, այլեւս ճար չկար՝ պէտք էր բանայի, բացի:

Դէմքը դաւկացած էր:

— Ի՞նչ կ'ընես, — հարցուց:

— Ոչինչ, քիչ առաջ եկայ, կը պատատուիմ քաննայու:

— Առաջ, ամէն զաւուրդ ոտքերդ ձայնը կ'առնէի, բայց վերջերս չեմ առներ:

— Ուշ կու գամ, — ըսի, — չեմ ուզեր փրփրներս խանգարել:

— Ոչ, — ըսաւ, — այդ չէ պատճառը, ինձմէ կը փախչես:

Այլայլեցայ, ուղեցի փախչիլ, բայց այս վիճակով ո՛ր երթայի: Աչքերուն չէի կրնար նայիլ, տխուր էի. սիրտս կը դողար:

— Գիտեմ, ըսաւ, — ազաքը ինծի չեն համակրիր. հազիւ կը մօտենան, այն ալ՝ սէքսի համար ու կը հեռանան, այդ, կը խոտոտվանիմ, այնքան գեղեցիկ չեմ, ամերիկացի աղջիկները աւելի գեղեցիկ են, անոնք գեղեցիկ աչքեր ունին, դէմք, մազեր. իսկ ես՝ իրլանտացիի ու հրեայի խոնուրդ եմ:

— Պիտի երթամ, — ըսաւ յանկարծ, — պիտի երթամ:

Աչքերուն նայեցայ: Իրա՞ւ պիտի երթար: Ո՛ր: Լուս էր, յուզուած էր, կարծեմ արցունքը կը զսպէր: Լուս էի, ի՞նչ խօսէի, ինչպէ՞ս միտթարէի:

— Ոչ, — ըսի յանկարծ, — գեղե-

ցիկ էք, ձեր գեղեցկութիւնը ունէ մէկուն գեղեցկութեան հետ չեմ փոխեր, առաւել՝ դուք ունիք հոգիի գեղեցկութիւն, եթէ կ'ուղէք ապրեցէք միասին:

Այս խօսքէն ետք, թեթեւցած զգացի ինքզինքս:

— Ոչ, — ըսաւ, — պիտի երթամ, նիւ Եորք պիտի փոխադրուիմ: Մեծ եղբորս ընտանեքին մօտ: Քանի մը անգամ դուրս գարիի տրիկոս ըսելու համար, բայց չկայիր, այսօր վերջին օրն էր, ուղեցի անպայման տեսնել քեզ, վաղը պիտի մեկնիմ:

Գնաց:



Կատարեալ ուրախութիւն մը իջած էր սրտիս: Թեթեւցած կը զգայի ամբողջ հոգիով, կարծես մէկը մոզական զաւազանով հոգիիս վրայէն ծանրութիւն մը վերցուցած էր: Ուրախ՝ կը քայլէ սենեակին մէկ կողմէն միւսը, կը դառնայի հա՛ կը դառնայի: «Աստուած իմ, այս ինչ օգնութիւն էր, որ հասցուցիր», կ'ըսէի մտքովս:

Ուրախ՝ պիտի ազատագրուիմ կ'ըսէի: Ուրեմն նիւ Եորք պիտի երթայ, պիտի մեկնի երեք հազար մզոն հետ: Շատ լաւ է, շա՛տ լաւ, կ'ըսէի ու կը դառնայի:

Երբ մէկ անգամ ուլ դառնալով սենեակին մէջտեղը հասած էի՝ յանկարծ կանգ առի, երեքացի, սարսափած դուռէս:

— Հոն ալ կնքահօրս չհանդիպի՛...:

ՆՈՐԱՅՐ ՊԱՐԹԵԻՆԵԱՆ

ԺԱԳ ՓՐԷՎԵՐ



Ժամանակին, երեսասարդ մը, Սորհրդային Հայաստանի մէջ, «բա-  
խութիւնը» ունեցած էր հայերէնի թարգմանելու ֆրանսացի բանաստեղծ Ժագ  
Փրէվէրը:

«Փարզմանի՞չ — դաւանա՞ն...»

Եւ «գաւաճանը» արժանացած էր «Բագիմ»-ի խմբագրին շանթային հա-  
կադեցութեան...:

Մա՛հ գաւաճաններուն:

Այս բոլորը դիտարկով, կրկին փորձուիլ Ժագ Փրէվէրէն քանի մը էջեր  
հայերէնի թարգմանել եւ նոյն ինքն «Բագիմ»-ի էջերէն ընթերցողներուն հը-  
րամցնել — այդ այլեւս քաջութիւն չէ, ուղղակի սլոպանկացիա է, պիտի  
խորհի անուշա հայ գրականութեան խոտաբեր, բայց անաշուտ քննադատը»:

Փա՛ւ լիցի: Զեմ յաւակներ այդքան խիզախ ըլլաւ...:

Թէ՛ւ հայաստանցի երիտասարդին չափ՝ եւ ալ կարգ մը գրաւաճա-  
նութիւնները կատարած եմ թարգմանական փորձիս մէջ:

Այսպէս, մէկ կամ երկու, երեքն շատ աւելի տողեր ջնջել, բառ մը  
տարբեր իմաստ ունեցող բառով մը փոխարինել, տողի մը տեղը փոխել,  
եւայլն... Բայց այդ բոլոր գարաուղութիւնները հետեւանք են ո՛չ թէ կան-  
խամտածուած ծրագրի մը, այլ պարզապէս իմ անկարողութեանս:

Ճիշդ է, շատ դժուար է (եթէ ոչ անկարելի) բանաստեղծ մը թարգ-  
մանել, բայց Ժագ Փրէվէրը մասնաւորապէս «անթարգմանելի» է:

Առաջին անկարկով, առաջին ընթերցանութեամբ այդ տպաւորութիւ-  
նը չենք կրեր սակայն: Լեզուն պարզ է, յաճախ ժողովրդային:

Բայց Փրէվէր ֆրանսական լեզուին բառերը կ'օգտագործէ ո՛չ միայն  
իրենց առաջնակարգ իմաստով, այլեւ երկրորդական, երրորդական նրբե-  
ւանդներով: Չի վարանիր օգտագործելու բառախաղերը, բառաձայնային դիւ-  
տերը, որոնք ընթերցողին կը փոխանցեն ըստաճէն ամբողջովին տարբեր բան  
մը, չըստաճը, տեսանելի մակերեսին տակ աղօտ կերպով ուրուադժուած ու-  
րիշ իրականութիւն մը: Չի վարանիր օգտագործելու կրկնութիւնները, եր-  
բեմն ձանձրանալի ըլլալու աստիճան: Չի վարանիր օգտագործելու «ազատա»  
բառերը եւ, նոյնիսկ, գոեհկութիւնները: Կ'ըսենք՝ օգտագործել եւ ո՛չ թէ  
գործածել, որովհետեւ միեւնո՛յն բանաստեղծը, շատ աւելի կուսակցական  
փամփոխի, ընտրական կարգախօսի, արուարձանային ճառի, հակակրօնա-  
կան փրփակաւտի նմանող գրանաստեղծութիւններու» ճիշդ կողքին տուած  
է այնպիսի՝ թարմութեամբ եւ քնարականութեամբ յորդող կտորներ, որ  
մարդ երբեմն կը տարակուսի: Այս նոյն Փրէվէրն է, խաղաղասէր, բայց  
«պատերազմի հրձիգներուն» դէմ անխնայ պայքար տանող, Ընդդիմադիր,  
իշխանութեան բոլոր տեսակներուն եւ ձեւերուն հակառակորդ, բայց նա՛եւ

մարջոխստ եւ պրոլետարիատի տիրակալութեան ջատագով: Ստահակի մը նման հայհոյող, բայց նա՛ եւ սէրն ու բնութիւնը գրեթէ մանկական զգայնոտութեամբ երգող բանաստեղծ...:

Ձի բաւեր Փրանսերէն գիտնալ՝ Ժազ Փրէվէրը հասկնալու համար: Ձի բաւեր նոյնիսկ տեղեակ ըլլալ Փրանսական լեզուին բոլոր նրբութիւններուն: Ոնհրատեչո է հետեւած ըլլալ Փրանսական մշակոյթի պատմութեան եւ Փրանսական առօրեային՝ իր բոլոր երեսներով — ներառեալ լրագրականը — կարենալ թափանցելու համար բանաստեղծին աշխարհէն ներս: Իո՛վ թարգմանե՛լ — այդ ճիղը, ինչպէս ըսի, չի կրնար «գաւառանութենէն» տարբեր արդիւնք տալ:

Կարելի է ժազ Փրէվէրը զնահատել եւ սիրել: Կարելի է նաեւ քննադատել եւ ստել: Եւ իսկապէս հաւատարիմ ընթերցողներու եւ մոլի կողմնակիցներու հետ՝ Ժազ Փրէվէր նոյնքան մոլի քննադատներ եւ թթու հակաակորդներ ունի: Եւ տարբեր չի կրնար ըլլալ, երբ բանաստեղծը իր քաղաքական կողմնորոշումներն ու ընտրութիւնները յաճախ դարձուցած է գլխաւոր թեմա:

Այս օրերուն, Փարիզի մէջ լոյս կը տեսնէ Փրէվէրի բանաստեղծութիւններուն վերջին հատորը, եւ այս առիթով, «Քաղցիւն»ի այն ընթերցողներուն համար, որոնք տակաւին իրեն չեն հանդիպած, կը ներկայացնեմք քանի մը կտորները, առնուած իր «ՅՈՍԳԵՐ» հատորէն:

Ե . Գ .

Ե Ր Գ

Այսօր ի՞նչ է  
Այսօր ամէն օր է  
Սիրելիս  
Այսօր ամբողջ կեանքը  
Մե՞նք ենք  
Սիրուելիս  
Ձիրար կը սիրենք եւ կ'ապրինք  
Կ'ապրինք եւ գիրար կը սիրենք  
Եւ չենք գիտեր թէ ինչ է կեանքը  
Եւ չենք գիտեր թէ ինչ է օրը  
Եւ չենք գիտեր թէ ինչ է սէրը:

ԱՌԱՋԻՆ ՕՐ

Ճերմակ սաւաններ պահարանի մը մէջ  
Կարմիր սաւաններ անկողինի մը վրայ  
Մանուկ մը մօրը մէջ  
Հայրը միջուցֆին մէջ  
Միջուցֆը տան մէջ  
Տունը Քաղաքին մէջ  
Քաղաքը գիշերուան մէջ  
Մահը սիջի մը մէջ  
Նարածիմը կեանքին մէջ:

## ՊԷՏՔ ԶԵ...

Պետք չէ թոյլ տալ որ մտաւարականները  
 Լուցկիի հետ խաղան  
 Ռոպիետու պարոններ  
 Երբ ինքն իր հետ մինակ մնայ  
 Մտային աշխարհը  
 Պարոններ  
 Երբեք փայլուն չէ  
 Մինակ մնալուն պէս  
 Մտային աշխարհը  
 Պարոններ  
 Իբրև քէ շինութեան աշխատարներում ի պատիւ  
 Իբրև քէ առատածոն  
 Ինքն իրեն համար կ'աշխատի միայն  
 Եւ ինքն-Յուշարձան կը բարձրացնէ  
     Կրկնենք պարոններ  
     Մինակ մնալուն պէս  
     Մտային աշխարհը  
     Յուշարձանային սուտերով  
     Կը ստէ :

## ԷՁ ՄԸ ԳԻՐ

Երկու առանկ երկու չորս  
 Չորս առանկ չորս ութ  
 Ութ առանկ ութ տասնըվեց...  
 Կրկնեցէ՛ք, կ'ըսէ վարժապետը  
 Երկու առանկ երկու չորս  
 Չորս առանկ չորս ութ  
 Ութ առանկ ութ տասնըվեց :  
 Բայց ահա ճնար - քոչուրը  
 Որ կ'անցնի երկինքէն  
 Մանուկը կը դիտէ  
 Մանուկը կը լսէ  
 Մանուկը կը կանչէ  
 Թռչուն  
 Փրկէ զիս  
 Թռչուն, եկուք հետս խաղայ :  
 Երկինքէն կ'իջնէ քոչուրը  
 Եւ մանուկին հետ կը խաղայ :  
 Երկու առանկ երկու չորս...  
 Կրկնեցէ՛ք, կ'ըսէ վարժապետը  
 Մանուկն ու քոչուրը կը խաղան...  
 Չորս առանկ չորս ութ  
 Ութ առանկ ութ տասնըվեց  
 Լաւ

Տասնըվեց առաւել սասանըվեց ի՞նչ կ'ընեն  
 Ոչինչ կ'ընեն  
 Բայց մանաւանդ երեսունը երկու չեն ընեն  
 Յետոյ ի՞նչ փոյթ :  
 Մանուկը թռչունը կը պահէ  
 Գրասեղանին մէջ  
 Եւ բոլոր մանուկները  
 Կը լսեն անոր երգը  
 Եւ կարգով  
 Ութ առաւել ութըն  
 Չորս առաւել չորսը  
 Երկու առաւել երկուն  
 Կ'երթան կը կորսուին :  
 Մէկ առաւել մէկը  
 Այլեւս ո՛չ մէկ կ'ընեն ոչ ալ երկու  
 Անոնք ալ կ'երթան :  
 Քնար - թռչունը կը խաղայ  
 Եւ մանուկը կ'երգէ  
 Եւ վարժապետը կը գոռայ  
 Վերգացուցէ՛ք, հոսպիտներ...  
 Բայց մանուկները նուազ կ'ունկնդրեն  
 Եւ դառարանին պատերը  
 Հանդարտօրէն կը սկսին փլիլ  
 Ապակիները նորէն կը վերածուին աւազի  
 Գրասեղանները նորէն ծառ կ'ըլլան  
 Կուիներ նորէն խարակ կ'ըլլայ  
 Եւ գրիչը նորէն թռչուն :

**ՓՈՆՈՒՈՂ ՇՐՋԱՊԱՏԸ**

Երկուսէն մէկը Լուսինն է  
 միւսը՝ Արեւը  
 աղփատները բանուարները զանոնք չեն տեսներ  
 անոնց արեւը  
     ծարան է  
         փոշին  
             բրտիմէք  
                 կուպրը

Անոնց արեւը  
 արեւահարութիւնն է  
 Եւ լուսնակը գիշերային աշխատաւորներուն համար  
     պրոնշիբն է  
         զեղարանը  
             գլխու ցուերը  
                 մտանգութիւնները

Երբ բանուարը բնանայ  
 անփնութիւնը կ'օրօր գայն

երբ բանուորը արթննայ  
 ամեն օր մահեցակալին առջեւ  
 կը հանդիպի աշխատանքի  
 ազտուող դուռնի  
 որ կը ծիծաղի եւ կը ծաղրէ  
 այն ատեն  
 կ'ելլէ  
 կը լուսացուի  
 դուրս կը նետուի  
 կէս ժամ կէս արթուն  
 հանրային ինքնաշարժը կը նստի  
 բանուորներուն ինքնաշարժը  
 եւ բարձր  
 ինքնաշարժը  
 վարիչը

տոմսակալաճառը  
 բանուորները

կէս ժամ կէս արթուն  
 կ'անցնին գիշերուան եւ արշալոյսին միջեւ  
 քարացած շրջապատին մէջէն  
 խաւարումի շրջապատը  
 բանուորական աւաններուն միջտ  
 սառած շրջապատը  
 բանտ – շրջապատը  
 սծախ – շրջապատը  
 օդէ

լոյսէ

ծիծաղէ

եզանակէ

գարկ շրջապատը  
 կէս շինուած կէս քանդուած շրջապատը  
 կէս ժամ կէս արթուն շրջապատը  
 բայց օր մը պիտի ծագի իրաւ արեւը  
 կարծր արեւը  
 որ պիտի արթնցնէ թռչող շրջապատը  
 բանուորները պիտի ելլեն  
 եւ պիտի տեսնեն արեւը  
 իրաւը  
 կարծրը  
 յեղափոխութեան արեւը  
 կարմիր արեւը  
 եւ գիրքաբ պիտի հաշուեն  
 եւ գիրքաբ պիտի հասկնան  
 եւ պիտի խնդան  
 եւ պիտի յառաջանան  
 վերջին անգամ մը  
 դրամագլուխը  
 պիտի փարձէ արգիլել որ խնդան



պիտի մեռցնեն գայն  
 պիտի քաղնն հոգին տակ  
 քշուառութեան շրջապատին տակ  
 եւ քշուառութեան  
 շահագործումի  
 փռչիլի եւ ամուլի շրջապատը պիտի այրեն  
 պիտի հարթեն  
 եւ երգելով պիտի շինեն  
 ուրիշ շրջապատ մը  
 Մոր եւ գեղեցիկ շրջապատ մը  
 Իրտւ եւ կենդանի շրջապատ մը  
 եւ տակաւին շատ բաներ պիտի ընեն  
 Ույնիսկ ճակատը գարնան պիտի վերածեն:

ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

...Վարդապետը մեզի միշտ միեւնոյն պատմութիւնը կը կարդար, հին ժամանակներու մէջ ապրած մարդու մը տխուր եւ սովորական պատմութիւնը: Մարդ մը, որ այժի մօրուք ունէր եւ գառնուկ մը կը կրէր օւտերուն վըրայ, եւ որ մեռաւ դամուած փրկութեան երկու շատերուն, ինքն իր վրայ երկար լալէ հաք, գիշերը, պարտէզի մը մէջ: Լաւ ընտանիքի գաւակ էր, միշտ կը խօսէր հօրը մասին — հա՛յրս այսպէս, հա՛յրս այնպէս, հօրս թագաւորութիւնը — եւ թշուառներուն պատմութիւններ կը պատմէր, որոնք դժայշած՝ մտիկ կ'ընէին, որովհետեւ զարգացած էր եւ լաւ խօսող:

Վիզի ուտերը կը հանէր, եւ երբ փոթորիկը վերջանալու վրայ ըլլար, ձեռքը կ'երկնցնէր եւ ծովը կը խաղաղէր:

Ջրգողներն ալ կը բժշկէր, կը քալէր անոնց փորին վրայ, ըսելով, որ ցուրի վրայ կը քալէ: Եւ անոնց փորէն դուրս ելլող ջուրը գիշերի կը փոխէր: — «Աւիկա իմ արիւնս է», կ'ըսէր անոնց, որ կը յօժարէին անկէ խմել:

Մառի մը տակ նստած՝ առակներ կը պատմէր — շերտանիկ են տկարամիտները, որ չեն փորձեր հասկնալ: պիտի տքնին, կիցեր պիտի ստանան եւ աշխատանքի յաւելնալ ժամեր պիտի կատարեն, որոնք հետագային իրենց պիտի հաշուեն հօրս թագաւորութեանը մէջ:

Մինչ այդ իրենց հացերը կը բազմապատկէր, եւ խեղճերը կամաց-կամաց միտին համը կը ժողովին, մասվաճառներու խանութներուն առջեւէն անցած ատեն՝ հացին միջուկը կեղեւին կը քսէին եւ չէին համարձակեր սէր ընել:

Հրաշալի ձկնորսութեան օրը, տապաստի համաճարակ մը տարածուեցաւ ամբողջ շրջանին վրայ: Շատ քերուողներուն ըսաւ, թէ սատանան փորելնին մտած է, բայց տեղւոյն վրայ եւ անմիջապէս բժշկեց հոտմայեցի խեղճ զինուոր մը, որ ձուկի մը փուշը ծուռ կ'ըլլած էր — ինչ որ մեծ տպաւորութիւն գործեց:

Կը ձգէր, որ մանուկները իրեն դան: Տուն վերադարձին, անոնք իրենց հայրերուն կը դարձնէին ձախ յետոյքը, ալէն հաք: Երկուքէն ալ ծեծ կ'ուտէին, եւ լալով, իրենց մատներուն վրայ կը հաշուէին այդ թագաւորութեան զիրենք բաժնու ժամանակը:

Տաճարէն կը վոնտէր կօշիկի կապ ծախողները: — «Դայթակողութիւն չեմ ուզեր, անոնք, որ սուրով կը հարուածեն՝ սուրով պիտի մեռնին...»: Եւ արհեստով դահիճները ծերութենէ կը օտակէին իրենց անկողիններուն մէջ, ոչ ոք դրամ կը ստանար, ամէնջը ապտակ կ'ուտէին, բայց կ'արդիւնէր, որ անոնք Կայսեր վերադարձուին:

Արդէն կացութիւնը շատ փայլուն չէր, կրբ օր մը, իր օգնականներէն մէկը՝ Յուդան, մատնութիւն դործեց: Իսկապէս զարմանալի պատմութիւն: Կը կարծէր գիտնալ, որ Յուդան զինք մատնացոյց պիտի ընէր ժարդոց, որ դայն շատոնց կը ճանչնային, եւ գիտնալով հանդերձ, որ Յուդան պիտի մասնէր, բան մը չըրաւ:

Ինչ որ է, ժողովուրդը սկսաւ պոռալ — Գարայդաս, Գարայդաս, մտ'հ կոմիերուն, անկցի՛ պղակը — եւ խաչուած երկու բողբոջներու միջեւ, որոնցմէ մէկը ոստիկանութեան լրտեսն էր, իր վերջին շունչը փչեց, կիները ջաւէն հռնդալով գետին փոռուեցան, աքաղաղ մը կանչեց եւ որոտու՛մը իր սովորական աղմուկը հանեց:

Հանդիստ բազմած իր ամերալ-ամպին վրայ, հայր Աստուած (հայր Աստուած, Որդին, Հոգին-Սուրբ եւ Ընկերութիւն հաստատութեան անօրէնը) դժուարակութեան լայն շունչ մը քաշեց (խոնարհարար երկու-երեք ստորադաս ամպեր անմիջապէս պայթեցան) եւ բացաբանչեց.

— «Թող փառաբանուած ըլլաւ, թող Ընկերութեան սուրբ անօրնը որհնուած ըլլաւ, վերջապէս սիրեցեալ գաւալս խաչ-շքանշանը ստացաւ, այլեւս Հաստատութեան բարգաւաճման թափը չի կոսորթ»...

**ՔԵԶԻ ՀԱՄԱՐ ՍԷՐՍ**

Թոշումներու շուկան գացի  
 եւ թոշումներ գնեցի  
 քնքի համար  
 սէրս

Մազիկներու շուկան գացի  
 եւ ծաղիկներ գնեցի  
 քնքի համար  
 սէրս

Երկաթեղէնի շուկան գացի  
 եւ շոքամներ գնեցի  
 ծանր շոքամներ  
 քնքի համար  
 սէրս

Եւ յետոյ գերիներու շուկան գացի  
 եւ քնք փնտռեցի  
 Բայց քնք չգտայ  
 սէրս:

Յ. ԶՈՐԵՑԻ

# ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒՂԵՒՈՐԱՎԷՊ

«Խեմք» լայն էջի քիզանդակամ եւ հայկական ճամբաներու վրայ

ԼԶ.

## ԴԱՐՁԵԱԼ ՔԵՄԱԼԻՆ ՆԵՏ

Օլուրէն իրզրում վերադարձած օրս իսկ, դորանոցէն ինծի յայտնեցին, թէ վաղն առաւօտ պէտք էր ճամբորդէի Սարգիսի, անկէ՛ վարս, ապա՛ Իգորի, յետոյ՝ Տոզու Պայազիտ, այդ տեղերու զինուորական ինքնաշարժները քննութեան ենթարկելու, խանդարուած ժառերը նորոգելու համար:

— Համաճա՛յն մը սրն, կիտլ՛ր մը սրն... կիթմէլլը սրն... հրաման տըր. պէտք է կատարե՛ս... բողմաթիւ ինքնաշարժներ կան աւրուած... պէտք է երթաս ու նորոգես...

Համաճայնութիւնն չիրցայ յայտնել անմիջապէս. չիրցայ, որովհետեւ յուզումը հոգ տուաւ սրախ ու խառնուելով մուրազի հասնելու ուրախութեան, թրջեց աչքերս եւ բառերը ինզղեց կոկորդիս մէջ...

Ուրեմն, ալ պիտի տեսնե՛մ Անին...

Ալ այնքա՛ն մօտ պիտի ըլլամ Արարատին...

Ի տես արցունքիս՝ ենթասպան դարձանքով հարցուց, թէ ինչո՞ւ այնքան յուզուեցայ. չէ՞ որ ես չափահաս, մերտ մարդ եմ... իզիւլէնէ՛ք ճե՛ վար քի... յալու ի՞նչ պատճառ ունէի...

— Ձէ, չեմ լար. ինչո՞ւ պիտի լամ... Մահճուտիէի մէջ (Բերկրի) ծեբուկ հօրեզրայր մը սենիմ, — սկսայ սուտիւր փշել տալ... Նազըմին, — տաւրիններէ ի վեր չեմ տեսած զայն, սիրելի ամուսնաւ. շատ կարօտեց եմ. յիշեցի, աչքերս թրջուեցան. Տոզու Պայազիտէն հետու չէ Մահճուտիէն. եթէ արտօնութիւն տաք, Պայազիտի մէջ գործերս վերջացնելէ ետք, քանի՛ ժը օրուան համար Մահճուտիէ կ'երթամ, կարօտս կ'առնեմ, անկէ ալ... Վան կ'անցնիմ, Վանայ կ'եօլը կը տեսնեմ... Ոստըլ...

— Կիւզէ՛լ. ես պէտք եղածը կը կարգադրեմ մինչեւ վաղն առաւօտ. վանի մէջ մանկութեան ընկեր մը, լաւ բարեկամ մը ունիմ. Գայլըգճի Զէքի. ամէն գիշեր Էսկի Հաւաս մէլիանէի մէջ կարելի է տեսնել դինք. զարեոշ բայց շատ հեշ մարդ է. սիրալիր, սմաւուզ սէլամներս Հաղորդելով, ծանօթացիր Հետք. օգտակար կրնայ ըլլալ քեզի...

— Պաշ իւսքիւնէ. բարեւներդ կը փոխանցեմ, Հետք կը ծանօթանամ... — Ըսի ես,

— Այդ Քայլըգճի Զէքին իսկապէս շատ օգտակար կրնայ ըլլալ ինծի... Վանէն Աղթաճար երթալու Համար... — շարունակեցի մաքէս, ու վաղն առաւօտ ներկայանալու խոստումով բաժնուեցայ ենթասպայէն, զօրանցի ճամբուն վրայ գրտնըոզ «Տատաշար» գինեան մէջ քանի մը գաւաթ ճնկելէ ետք, վերջին եւ իրիկնային շրջապտոյտ մը ընելու էրդրումի է՛ր երբեմն Հայութեան, Հայ յեղափոխութեան ու յեղափոխող անդամներէկ ցոյցի եռքարան փողոցներուն մէջ...

Յաջորդ օր դէպի Կարս, դէպի աւերուած Անի ու գերուած Արարատ ուղևորուելու տառապեցնող երջանկութիւնը կամ երջանկացնող դժբախտութիւնը պատճառ դարձաւ, որ քիչ մը աւելի խմեմ եւ փոխան իրիկուան, ուշ դիւլերին միայն, շատանիլ Հաղիւ կարենալով, գուրս ելլեմ «Տատաշար» գինեանէն...

Փողոցները ամայի էին բոլորովին...

Կարինը ի՛մս էր ամբողջութեամբ...

Ու ես, իրբեւ... հայ տառերով Հրամանադրող Հայ իշխան, ո՛չ, չէի թափառեր. այլ՝ անցեալի խորհուրդը ինծի ընկերացող խորհրդական ունենալով, քննական շրջապտոյտ մը կը կատարէի «մայրաքաղաքին» մէջ...

Քաղցր էր պատրանախառն պինովութիւնը, որուն յանձնուած, ներկան բոլորովին ժողած, հայ քառերով սկսայ երգե՛լ նոյնիսկ, երգե՛լ՝ միայն ինծի լսելի ձայնով եւ իշխանական լրջութեամբ.

— «Կարի՛ն քան, Կարի՛ն,  
Փառ՛ք քն սարերի՛ն,  
Նրանցից հնչող,  
Մեզ գե՛նէի կանչող  
Այն խօլ ձայների՛ն  
Կարի՛ն քան, Կարի՛ն»...

Ափս՛ս, սակայն...

Կարի՛ն, վա՛ր, Կարի՛ն...

Անպիտակցարար Մուսթաֆա Համալտարանի Հրապարակը Հասնելու պատճառ դարձաւ, որ պատրանքը չքանայ պինովութենէս, գաժան ներկան ճնշէ սրտին, բանայ վէրքս, վարնէ երգին ու անոր շարունակութիւնը ապապայի Հեռաւոր բարձունքներուն նետելով, անցեալի խորհուրդը Հեռացնէ Հոգիէս եւ զիս Կարինէն փոխադրէ, բերէ դարձեալ... ERZURUM ու պատրանաթափ կանգնեցնէ Քեմալի արձանին դիմաց...

Կարնեկրոյս պինովի բարկութիւնս՝ զսպելով, յիւեցի պոլտական դի-

չերներու վերջինը, Ակոռա գինետունէն պանդոկ դացած պահուս, Թաքսի-  
մէն անցնելով իրեն ներկայանալու...

Իմ կարիքնան վերջին այս գէշերին, գլուխս նոյն տաքութիւնը ունէր  
դարձեալ...

Քանի կեցայ սկամայ, երկրորդ անգամի մը համար, նորէն խօսիմ  
հետր... կեղծ յարգանքի անկեղծ ըուծեամբ, ներազազակային բա՛րձր  
ձայնով...

— Մէհհապա՛, Աթա, դարձեալ չե՞ս հարցներ, թէ Երեւելիք կիսիյո-  
րում...

Իշքէ կիսիյորում, Քեմալ, կ'երթամ Աթաթիւրք... վաղն աստու իսկ  
ձամբայ պիտի ելլեմ գէպի կարս, գէպի Անի Է՛ւոյ:

Նոսիրակն աւերակներուն խորհուրդը սրտիս, եւ աչքերուս դիմաց  
ու հոգիիս մէջ վեհութիւնը Արարատին, պիտի հասնիմ Պայազիս, ապա պի-  
տի ուղևորուիմ Վան, Վանէն Պիթլիս, յետոյ՝ Մուշ, Տիգրանակերտ, Մար-  
տին՝ ի վերջոյ Ուրֆա...

Տեսա՛ր, Քեմալ, հակառակ ջեղի, հակառակ հանրապետութեանդ  
բիրտ արգելքներուն, Իսթանպուլէն կրցայ՝ հասնիլ Էրզրում, ուր շնորհիւ  
հայու նարտարութեանս եւ հայ արհեստաւորի կարողութիւններուս, իմ գի-  
մաց բացուեցան զօրանոցներու՛դ իսկ գուռները. անոնցմէ ներս, իրրել սքան-  
չեյի Ուստա Նազրմ, ես վայելցի ու կը վայելիմ յարգալիք համակրութիւնը  
գինուորակներուդ, որոնց կարողաբանամբ, նիւթերէդ ամէնէն տոկունն  
ու ամէնէն... ճարպիկը վաղը ինծի պիտի յատկացուի, բռնազրուուած հայ-  
րենիքիս ճամբաները ի՛մս պիտի ըլլան...

Բասէնէրէն անդին, մա՛նաւանդ Չօպանտէրէյէն ետք վտանգաւոր զա-  
տիվերենք շատ ունին եղեր այդ ճամբաները. թող ունենան...

Քարքարուս, կածանային, վիճեղբային են եղեր անոնք, թող ըլ-  
լան...

Ես նիւիզս պիտի սուրսմ բարձունքներն ի վեր, ստոտտելով, կիրքն-  
թաց արշաւելով, լեռներու կողերէն թռչելով պիտի յաղթեմ բոլոր դժուա-  
րութիւններուն ու պիտի դրաւեմ կարգը... քիչ ասով կորսնցուցած կարի-  
նիս տեղ...

Ես վաղը կ'երթամ, Քեմալ...  
Միհիւեւ մեր գօրանալը, ազգովին մեր վերադառնալը, դուն մնայ  
ERZURUM. հոսկէ սկսար, օր մը հո՛ս պիտի վերջանաս, մեր հողերէն բո-  
լորովին չքանա՛ս...

Հաւատա՛ ասոր,  
Հաւատա՛ արդարութեան կամ արդարներու, արդար դատի տէր մար-  
դոց յաղթանակին...  
Հաւատա՛, Աթա...

Հաւատա՛ այնքան, որքան ես կը հաւատամ, թէ ալ պիտի տեսնե՛մ  
Անին, ու ճամբաս շարունակելով ե՛ս! Արարատ, ա՛լ պիտի հասնե՛մ հայ հո-  
գիի յաւերժութեան յաւերժական տեսիլքին...

ԼԵ.

ՀՈԳԻՍ ԱՐԴԷՆ ՍԻՐԵՑ...

Հայկ նահապետի, վեր նայող Մերուպի, վերացած Կոմիտասի, ձեռքը ծնօտին խորհող Վարուժանի, խոյացող Վահագնի, Խրիմեան Հայրիկի, Հայրենասիրտ Արտվանի, Աղբիւր Սերոբի, Սայաթ-Նովայի եւ այլ նշանաւոր հայերու նմանող անհամար սարժայտեր ունեցող Մեծրանց ամեհի լեռներու փչչերէն, երբեմն, Հայկական Պարի Սուկաւէտեան բարձունքներու Արաքսամերձ հովիտներէն, կիրճերէն, անտառներու հզբքներէն, զառիվեր, ոյր-մոլոր ճամբորդելով, ետեւ ձգեցի Բասէնլէր, Մորասան, Սարըղամէշ, Սէլիմ, Պէնլը Ահմէտ, Լատի Կարս աւանները, եւ ահա, զանազան վայրերու մէջ դործով կեցած ըլլալուս, էրզրումէն ճամբայ ելլելէս շարաթ մը ետք, արդէն կը մօտենամ Gazzi KARSին, Կարսին...

Ակառ երեւի մեր բերդը կամ իրենց գորանոցը՝ արտառոցօրէն տարածուն թրջական դրօշը իր մուտքի աշտարակի կատարին...

Է՛հ, ուղղամալարական այս քաղաքի այս բերդին վերեւ քանի՛-քանի՛ դրօշներ ծածանած են իրձէ առաջ...

Նախ՝ Հայկական արքայական դրօշը, ամենայն իրաւունքով եւ արդարօրէն:

Ապա՝ մերթ ընդ մերթ, ուսական դրօշը, կեղծ խոստումներով, կեղծ Հայասիրութեամբ եւ մասամբ նորին...

Ատեն մը՝ նոյնիսկ անդիական սարգապատկեր դրօշը, խորամանկօրէն ու, յանուն իր շահերուն, ծալուելով իջնելու միշտ պատրաստ...

Իջաւ օր մը, որ իր տեղ դարձեալ ուսականը կամ թրջականը ծածանի...

Սակայն շնորհիւ Հայուն դործած հրաւրին, ուսականին կամ թրջականին տեղ, դարձեալ բարձրացաւ ձողին իրաւասէրը, Հայկականը...

Այս առթիւ, ինչպէ՞ս շփշիջի Չարենցը ու ինչպէ՞ս չըսել ու չըսուանակել մասամբ իր հետեւութեամբ:

— Ղարոսում պարզունց նոսազոյն դրօշ...

Յետոյ սակայն, Հայուն չար բախտէն, այնինչ օրեր եկան հուրհրամ, տարիներ անլինջ՝ մէկ կողմէն մանդաղ, միւս կողմէն մահիկ, սալա՛մ Մուսթաֆա Աթա Գեմալին, Եաշարը՛ն Մոսկոֆ, արքատաշ Լենին. կեցցէ՛ր Իլիլի-չը, ուրիշին ինչքով ուրիշին ազան, Ղարսը արմաղան...

Այդ օրէն ասդին պատմական Վանանդը, իբրեւ Կազի Կարս կը պատկանի վատին, Վանանդայ բերդը, բերդին դրօշաձողը արտառոց մեծութեամբ ու մահկունի կարմիր լաթին...

Հողի՛ս, ճիւղէս առաջ, ինձմէ առաջ հասի՛ր բերդ, ելիր աշտարակին վրայ, վար առ զայն եւ անոր տեղ Չարենցի Ղարսում պարզունցը բարձրացուր...

Քիչ Լտք թող ես անոր տակէն անցնիմ, թող զայն իմ վերեւ ունենամ, երբ այսպէս, զինուորական միւլով, բանուորներու ինքնաշարժը միշտ ետին, բերդէն ներս յաղթական մուտք գործեմ, ի փաստ մեր արջաներուն, իշխաններուն, քաջ թաթուլին եւ գնդապետ Մազմանեանին, որ Կարսի անկուտը, նոյն այս բերդին առումը վերաւորանք մը նկատեց Հայ զինուորի արժանապատուութեան ու գնդակով մը վերջ տուաւ իր կեանքին...

Օ՛ր, նման զդայսցունց քանի՛-քանի՛ դէպքեր արձանագրած է հայոց պատմութիւնը, իր վանանդեան էջերուն վրայ...

Այդ էջերը միշտ բաց մնացին որտիս մէջ, ու ետ, բերդ կամ... ՎՄազմանեան զօրանոց բարձրանալէ եւ դործիս վերաբերեալ կարգ մը տեսակցութիւններ ունենայէ ու կարգադրութիւններ ընելէ ետք, ա՛յլ յանձնուեցայ նոյն էջերէն մեզի կտակուած ազգային հրայրքներուն, յիշատակներուն, հրպարտութեան, յուզումներուն եւ յոյզերուն...

Շատ անգամ ներքէն այսպէս խօսեցայ կամ խօսիլ ուզեցի Կարսի բարձունքին թառած դարաւոր շինութեան.

— Բե՛րդ, բե՛րդ, Վանանդայ՛ց բերդ, Կարուց կրանիդ ամբութիւն, հայու ձեռքով շինուած, թուրքի զօրանոց դարձած հազարամեայ հզօր կառոյց. շարտիտէ՛ կապար, հիմերդ՛ սեւ ծայռ, ինքդ ժայռի վրայ պարսպացած, աշտարակուած, աշտանակուած ապառաժ ու հայաչէն հզօրութիւն. կըսեն, թէ՛ հայ իշխաններն իսկ իբրեւ բանուոր աշխատած են եւ պատմութիւն կերտելու պէս, կառուցած են քեզ...

Նոյնիսկ մեծահուղիկ Աբաս արքան, հետեւելով Վանանդայ հին սեպուհներու օրինակին, իր ազատանիին հետ, անձամբ մասնակցած է մայր աշտարակիդ հիմնադրութեան աշխատանքներուն եւ ի փառս ազատ թագաւորութեան, զայն հռչակած Արքայական Կաթող Կարուց:

Այդ՛ բե՛րդ, Վանանդայ՛ հին իշխանաց, Կարուց ազատանիին եւ ազատ արքայ Աբասին աշխատանքով բարձրացած ըստ լայնանիստ ամբութեամբդ, ազատութեան աշտարակովդ ու բռնութեան դէմ աշտանակուածութեամբդ ինչպէ՛ս կը հանդուրժես ներկայ վիճակիդ, ինչպէ՛ս կը հանդուրժես գրաւուածութեան եւ զերուածութեան...

Բե՛րդ, բե՛րդ, թագաւոր ու թաթուլ տեսած քարերդ, Աբաս ու Աշոտ, Արամ ու Անդրանիկ ճանչցած, հայ բանակին զինակից ու հայ փառքին գրահակեր ամբութիւններդ ինչո՞ւ չեն բմբոստանար...

Ինչո՞ւ...

Հին առասպելի Հրաշք Բերդին կրանիտներուն պէս, դիրքագին ու տհեղ, դէպի ներս, դէպի դուրս, քաղաքին, երկրին բոլոր կողմերը դուրսելով, բարանարձակ դրոհելով, իբրեւ անգիմադրելի հալածիչ, թշնամին ինչո՞ւ չեն հեռացներ Կարսէն, Կարինէն, կարեվէր հայրենիքին բոլոր քաղաքներէն, բոլոր աւաններէն, գիւղերէն...

Ինչո՞ւ չեն հեռացներ, որ երկիրը ազատի, Հայաստանը վերջնականապէս մաքրուի եւ հայաստանանայ...

Յանուն ազատութեան, յանուն հայոց հայրենիքի մաքրութեան ու Հայաստանացման, մա՛նաւանդ՝ թուրքիոյ անարդարութիւնը քանդելու համար, կ'արժէ՛ քանդուիլ, բե՛րդ...

Քանդուէ՛,

Քանդուելով գրոհէ, որ մենք աշխարհի չաթս ծաղերէն դանք, քարերդ ի մի հաւաքելով, աւելի ամուր հիմերու վրայ վերակերտենք քեզ, իբրեւ Հայաստանի ազատութեան բերդ-յուշարձան ու հայկական զօրանոց...

Քանդուէ՛, բերդ, հերի՛ք մնաս, հերի՛ք ըլլաս թուրքի ԻԸՂԱ...

Մայր աշտարակիդ վրայ, գալիքի Եռագոյնը այժմէն բարձրացուցած հոգիս արդէն սիրեց քեզ ՎՄազմանեան՝ կոչել...

ԼԸ.

ՉԱՐԵՆՑԻ ՂԱՐՍՈՒՄ

Տասը օր մնացի Կարս :

Տասը օրուան ընթացքին թերևս հազար անգամ դիտեցի Առաքելոց մայր եկեղեցին եւ ամէն անգամուն ալ իրմով ու իր պանծալի պատմութեամբ աշխարհ տարուեցայ, որ տարածութեանս մէջ անցեալը կրկին պարզուեցաւ հոգեկան տեսողութեանս դիմաց :

— Փա՛ռք յաղթական Արաս արքային հայրաց...  
— Կեցցե՛ք քաղաւորն Կարսուց... Կեցցե՛ք Քաղարի քանակն վստանդեանս...

Հայկական Պարի Արաքսունի փէշիքէն, Արազածոսնի շրջաններէն անհամար հայեր, իշխան ու շինական, վանանդեցիներուն հետ հաւաքուեցան նորտարտ տանարին հրապարակը, աղանիներ թոցնելով դիմաւորելու համար յաղթական վերադարձող Բազրատունի Արաս արքան եւ արի բանակն հայոց...  
Արաս, իր շինել տուած նոյն այս հոյակապ եկեղեցին վրացական ծէսով օծել ուզող Բէք զօրապետը, հայ եկեղեցւոյ պարտեալ, դերեալ թշնամին պիտի բերէ, պիտի կեցնէ տանարին դիմաց ու պիտի ըսէ անոր.

— Բէք, տե՛ս շինած եկեղեցին, տե՛ս Կարուց թաղաւորութեան մայր տանարը, զոր պագերուս նուիրաւործած ծէսով օծել չտալու համար ինծի, յարձակեցար երկրիս վրայ... Արդ՝ Բէք, պարտեա՛լ Բէք, յաւ նայէ տէրութեանս մայր տանարին դեղեցկութեան, վեհութեան ու վեհացնող, վիրացնող ճարտարապետութեան. դիտէ եւ վերայիւր վերջին անգամի մը համար, որովհետեւ այլեւս երբեք պիտի չտեսնես զայն. վեհացի՛ր անոր բարձրութեամբ, որովհետեւ ստորին ստրուկի մը պէս պիտի պատմուիս... աչքի լոյսէ պիտի զրկեմ քեզ...  
Յաղթական Արաս արքան պիտի ըսէ այսպէս, ըսածը պիտի գործադրէ, Բէք զօրապետին աչքերը պիտի փորուին, յանուն Առաքելոց եկեղեցւոյ պայծառութեան ու Հայկականութեան, որոնց վիճակուած էր, որ մը, այս հողերուն վրայ, այստեղ եւ այնտեղ, խաւարին ու թրքութեան տեղի տալ ու ձգել, որ Կարուց արքայական մայր տանարը վերածուի կարածի, մեղա՛յ, մեղա՛յ, օծուի մազութով, մեքենաներու աղտոտ, այրած իւղով, մուրով, մրուրով...  
Ախա՛ս, նախ՝ Բէքին, յետո՛յ մեր բախտին...

Բերդէն եւ անոր ստորտը գտնուող Առաքելոց... զկարածնի շրջափակէն դուրս, արքայական Կարսը կամ հնօրեայ վանանդը ինծի համար գոյութիւն չունի կարծես...  
Աննց շուրջ տարածուող քաղաքը, հողիկս, իմացութեանս, համոզումիս ու հրաբխներու մէջ կը պատկանի ո՛չ թաղաւորներուն ոչ ալ թուրքերուն, այլ միայն, միայն Չարենցին...  
Անոր, Չարենցի Ղարսում, ես միշտ անով ապրեցայ եւ բանաստեղծի իր թանձրացեալ ներկայութեան խորհուրդին յանձնուած թափառեցայ հին փողոցներուն մէջ...  
Ամէն առտու, երբ խաչակնքելէ ետք կը հեռանայի տանարէն, զիս



կ'ողջունէր Ղարսաւայը, ուր Չարենցի սիրած ձկնորսները դամբը ձեռին աշխատել են, հալալ աշխատանքն են կերել...

Վա՛յ էս ազգին, էս միլիարին, որ խալիկն կամ հալալ աշխատանքի տէր հային դատած Հացը կողոպտեց անցեալին ու հողը մարսել կ'ուզէ այսօր...

Գարձեալ, Առաքելոցէն շատ հեռու չէ նյանաւոր կամուրջը, Չարենցի կամուրջը...

Է՛հ, մեծ բանաստեղծը քանի՜ երեկոներ կանգնած է անոր վրայ ու մտածած անքաղկամ ու լուսէ այլ կամուրջներու մասին, որոնցմէ, աւա՛ղ, դուրի մնաց իր իսկ Ղարսը եւ Ղարսի բախտակից մեր միւս քաղաքները, բնազրաւուած ողջ Հայրենիքը հայոց...

Հոգիդ ու սիրտդ անցեալին կամրջած, դուն անցիկ հին փողոցներէն, որոնք բոլորն ալ մեծ բանաստեղծին նայրբեան հին հարազատներն են...

Այդ փողոցներէն մէկը... լուսամտիփի պէս աղաւոր ազնկամ ճամբան է...

Անոր անկիւնը Չարենց ըլլաւ եւ սպասե՛ս...

Սպասե՛ս՝

Գիտնալով հանդերձ, թէ ալ պիտի չգայ զամբար զարտուիմ...

Ա՛խ, Չարենցի ընկեր Լիպոյին չարիքը թէրս դառնալով, այս տեղերէն հեռացուցեր է այս տեղերու հարազատ դարսեցիներն ու զարուհիները, ժպեր է, որ օտարները բնակին հոս ու փոխեն ամէն բան...

Այս տխուր իրողութիւններուն համար եթէ դարձ րոնես, ցաւիս եւ հիւանդանաս, անունը Եղիշէ Սողոմոնեանէն այնքան սիրուած ու սեփականացուած Տօքթ. Չարենցի յաջորդ եւրիմ մը, մէկ հատիկ բժիշկ մը իսկ չկայ, որ դարմանէ քեզ...

Ձանձ, զայրոյթդ զսպելով, զդացումներդ սրտիդ խորիքը թաղելով թափառելի Գալայճը, Պայրամ փաշա, Օրթա փափու, Եռուսէֆ աղա, Աք Պապա, Ծին Ղապա կոչուող ճամբաներուն վրայ, փողոցներու եւ թաղերու մէջ, քանա՛ չար չըլլալ ու ներսէջ չըսել նայիրցի անհուն քերթողին...

«Չարենց, չար բախող որքա՞ն չարացաւ Ղարսիդ հանդէպ նաեւ... այս խորթ մարդերը թ՛նչ գործ ունին մեր հարազատ Հայրենիքի հարազատ այս քաղաքին մէջ...»

«Չարենց, ինչո՞ւ համար հիմա նայիրեան կեանքը պիտի չետար Ղարսի թաղերուն, փողոցներուն մէջ եւ ճամբաներուն վրայ. անոնք ինչո՞ւ պէտք չէ կոչուած ըլլալին Ղեւոնդ Երէց, Թաթուլ, Արաս, Վանանդ, ընկեր Վանօ, ընկեր Դրօ, ընկեր Լիպօ...»

«Հապա ոս նոր փողոցը, ուր հին քարերով նոր շէնքեր շինուած են, ինչո՞ւ կոչուի Պիլպիլ ու չկոչուի Պասկեւիլ. Չարենց, Ծիծաղելի այդ բառէն աւելի լաւ չէ՞ ուսս զօրաջարին անունը. մա՛նաւանդ՝ արդար չէ՞, մարդը գոնէ լացեր է Կարսին համար, Ղարսի՛դ համար...»

## ԻՆՉՊԷՍ ԾԱՂԻԿՆ ԱՌԱՒՈՏՈՒՆ



Անապատեայ գիշեր անհուն  
 Եւ իմ գիշեր երակներու ծարաւի՝  
 Կենկոծ տենչ մը կը պայքի:

Երազագոյն արեւ մը կայ: Աչքերու դէմ՝ ոսկեփռոշի,  
 Ու պատկերող, գոր օդին մէջ եւ կը գծեմ անգաղաք  
 Շուկներով բեռնաւոր սայլ է ինձ համար  
 Կայտկաւթ-էի բայրով առլի:

Տե՛ս, սրտիս մէջ,  
 Երակներու, անգոյն կաւիս մէջը յորդող  
 Արեւի կանչ մը կայ նարէն,  
 Իսկ շրթունքիդ քերտութեան չափ  
 շշուկներն իմ սէր կ'արեւն:

Պէ՛տք է արդեօք խոստովանիլ, թէ արիւնն այս  
 — որ նի՛շդ դուն եւ —

Երազներու անապատին համար կ'ըլլայ  
 ռվասիսը երազային,  
 եւ տակաւին

Պէ՛տք է արդեօք խոստովանիմ  
 եւ արդարեւ,  
 թէ կեանքն իմ,

Կեանքն այս տօգոյն  
 սիրոյ բարեան բոցովդ լսկ կը դառնայ գոյն,  
 Կեանքն անանուն՝

է անունիդ եւ սրտիդ մէջ մեղմիկ-մեղմիկ արմատացում  
 Եւ այժերուդ

պատարութեան խուլ խորհին մէջ  
 Ներասուզում, զինովութիւն, առանձնութիւն, անկում, ցասում...  
 Ապա կրկին վերականգնում, ողջակիզում եւ սպասում, եւ սպասում:

Ո՛ւր եւ, ո՛ւր եւ, կրկի՞ն արդեօք դուն մեկնեցար:  
 Երեկոյ չէ, մայրամուտ չէ, արշալոյս չէ, ի՞նչ է, ի՞նչ է...

Մարգարտաշող իմ արեգակ,  
 Ձեռք երկարէ, որովհետեւ՝  
 շշուկներուդ,  
 հունչիդ, շունչիդ  
 թքուածիներն եւ եւ կարօտ:

ՔԱՅՑ ԼՈՒՌ ԵՍ ԴՈՒՆ  
 ԻՆՉՊԷՍ ԾԱՂԻԿՆ ԱՌԱՒՈՏՈՒՆ...

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ



# Ի Վայական Հարժուժ



## Ա Ն Գ Ա Մ Մ Ը Ե Ի Ս...



Հետագայ էջերուն վրայ կ'արտագրենք Պետրոս Դուբեանի մասին գրուած նոր, ինչպէս նաեւ կարգ մը հին գրութիւններ, որոնք կ'ստեղծեն անկախ պատմաճանաչարար տեղ չէին գըտած Պաշտօնակարգի պատմութիւն մեր նախքան այս արուեստ Եւրոպայ-Փարիսի միացեալ համարին մէջ:

Հայ գրականութեան բացառիկ ճիւղերէն էր Պետրոս Դուբեան եւ իրեն նուիրուած մեր բացառիկը, իր կարգին, արժանացաւ բացառիկ ընդունելութեան մը, ա՛յն աստիճան, որ երկու հազարէ աւելի տպագրուեցին արժանաւորելի ոչ իսկ մէկ օրինակ կը գտնուի այսօր Վրացիներ խմբագրատան մէջ:

Բնութեան կամ արարչութեան կողմէ մեր գրականութեան պարզուած անկրկնելի ընթացքէն մէկն է Պետրոս Դուբեան եւ ընկած է, որ հայ ժողովուրդը այդպէս պիտի վարէր անոր ի նուէր բոլոր ձեռնարկներուն հանդէպ:

Հաւանաբար նոյն պատահեցաւ մեր պաշտօնակիցներուն կողմէ բացառիկներուն պարագային եւս:

Պետրոս Դուբեանի մահուան 100ամեակը լայն արձագանք գտաւ նաեւ մեր հայրենի աստիճաններին ներս, ուր վերհրատարակուեցաւ վատապէր երկու հատորներով, որոնց մէջ կիրարկուած գիտական թմախնդրութիւնը պատիւ կը բերէ մեր մտաւորականութեան:

Սիրելի է մեզի յուսալ, որ այս 100ամեակը նշելու գեր հարաւորութիւն չունեցող թերթերը, զպրոցներն ու մշակութային միութիւնները, տարին չքաղըրած՝ ձեռնարկէին նուիրական այլ գործին եւ ՎՅՐԱՆԱԿՆԵՐ արարող հրատարակելի մեզի կտակած հարստութեան գիտակցութիւնը խորացնելի աստիճան մը եւս եւ անգամ մը եւս զգային հայ հանձարին այս լայն պողոտեհրոսէին փառքը...

**ՋԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆ**

**ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆԻ ՇԻՐԻՄԸ**

Մեռելոցի օր մըն է եւ բարեկամիս հետ կանուխէն կը պատրաստուինք Պաղար Պալլըի Հայոց գերեզմանատունը երթալու: Պոյիս դալէս ի վեր տմէն օր փափաքած եմ այդ այցելութիւնը ընել: Գերեզմանատունները իմ վրաս հանդարտեցնող աղղեցութիւն մը կ'ընեն. հոգիիս մէջ խաղաղութիւն կ'իջնէ եւ կարծես թէ կը հաշտուիմ մահուան գաղափարին հետ: Իրաւ է, թէ մեր երկրի բոլոր գերեզմանոցները, ըլլան սեւ ու հոծ նոճիներու շուքին տակ տարածուած, ըլլան թմբիններու եւ կնձիներու լայնածաւալ հովանիին ներքեւ, հրապուրիչ անդորրութիւն մը ունին, գերազոյն հանգիստի եւ մշտնջենաւոր խաղաղութեան հրապոյրը:

Տիեզերական եւ անխուսափելի մահուան օրէնքը կը սաւառնի հոս մթնոլորտին մէջ, եւ հողակոյտերու ամէնէն համեստն ալ խորին տխրութիւն մը կը ներշնչէ. այնքան ապրողներուն համար՝ հորիզոն գեղեցիկ է, տիրական եւ փարթած գեղեցկութեամբ Սկիւտարի առաւտոներուն: Նորածագ արեւին ճառագայթներուն ներքեւ Մարմարան կը փալտի ռոպի ցոլքերով, եւ կզգիներ զարդազոյն, աննրբական, կը ծփան կարծես ալիքներուն վրայ, իրենց շրջապիծը, անորոշ, կը խառնուի մթնոլորտին մէջ աստանոց մշուշին:

Թմբիններուն բուրմնաւէտ շուքին ներքեւ բարեկամիս հետ կը քալեմ զգուշութեամբ, եւ ամէն քայլիս հոգիս կը խռովի: Ինձի կը թուի, թէ հողը կը ստորուայ իր մէջ պարունակած անհամար

մարդկային փոշիներով: Դարեր ետքը ո՞վ պիտի քայլէ իմ ալ չորս հովին բաժնեւած էութեանս վրայէն: Իմ գոյութեանս ամէն մասնիկները կը ցաւին ու կուլան անխուսափելի քայքայումին գաղափարովը, որ հեազհեռէ արեւոյթիւն մը կ'ըլլայ եւ զիս կ'օրորէ տարտամօրէն, մեկամազձոտ երդի մը պէս:

Թարմ հողակոյտեր ասդին անդին իրենց վրոյ կը կրեն թառամած ծաղիկփունջեր, ճերմակ ժապաւէններու բեկորներ, որոնց վրայէն անձրեւը կամ գիշերուան խոնաւութիւնը աւրած է հեռացող սիրելիին անունին ոսկեգոծ գիրերը, անդին զինքը լացող հոգիին մէջ չէ՞ մի որ իր յիշատակն ալ պիտի աւուրի հետըզհետէ:

... Ուխտ մը ունիմ կատարելիք, պէտք է Դուրեանի գերեզմանին մօտենամ:

Ձերմեռտնդութեամբ եւ զգուշաւոր կը յառաջանամ, վախնալով, որ մէկը մեղ տեսնէ. ծիծաղելիին խրատալազը հողւոյս մէջ է ուլիւս, եւ անխնայ կը խնդայ կարծես իմ ամէնէն նուիրական զգացումներուս վրայ, ինչո՞ւ, չեմ գիտեր, կ'ամշնամ ուրիշներուն տոջեւ քաջարք մօտենալու Սկիւտարի սքանչելի եւ անզուգական բանաստեղծին գերեզմանին:

Այլ սակայն այնքա՞ն սիրած եմ զինքը, լացած եմ իրեն համար: Իմ երիտասարդութեանն առաջին տարիներուն իր ցաւովը ցաւած եւ իր տառապանքովը տառապած եմ երկարօրէն. իր տենդերը, իր տաղանպները, իր հիւանդ կուրծքին

Հեւքը եւ մրմունջները տարիներու մէջէն եկած հասած են ինծի, եւ կարծես մատնորով դպած եմ անոնց եւ ականջովս լըսած: Ինչպէ՛ս պիտի ուզէի իր ժամանակին հասած ըլլալ ու դտնել իր նուիրական հիւղակին ճամբան եւ ըսել իրեն, թէ ինչպէ՛ս իր ցաւերը կ'երկարաձգուին ու կը թրթռան իմ հոգւոյս մէջ, եւ իր տիրապին ճակտին վրայ մխիթարութեան զովութիւնն ու խաղաղութիւնը իջեցնել: Սաղարթներու հովանիին ներքեւէն տապանաբար կը բարձրանայ վէտ ու ճերմակ: Մէկը չկայ ծօռը: Պիտի ուզէի, որ քահանայ մը գար եւ ազօթէր իր վըրայ: Ինծի կը թուի, որ խունկին հոտը եւ ազօթքին մրմունջը աղէկ պիտի գան աշխարհի կարօտով տանջուած իր հոգիին համար: Բայց դարձեալ չեմ համարձակիր քահանայ մը կանչելու:

Հեռուէն խուճը մը պատանիներ կու գան շիտակ իր գերեզմանին. Պէրպէրեան վարժարանի աշակերտներ են, տապանին շուրջը թողորուած կը սպասեն. քահանան կը մօտենայ, խունկի ծուկներ կ'ոտորւին գերեզմանին շուրջը: Պատանիները ջերմեռանդ եւ յուզուած մտիկ կ'ընեն, պէտք է շնորհաւորել իրենց մեծերը, որ ուզեր են այդ յարգանքը եւ սէրը դնել իրենց դեռ ազու սիրտերուն մէջ, Սկիւտարի բանաստեղծին համար:

Քիչ հեռուն, մենք ալ կեցած մտիկ կ'ընենք եւ կը խորհիմ ինքնիրենս. ճեթէ իրաւ է, որ քան մը մնացած է քեզմէ, եթէ զու աճիւնէդ անկորնչելի մաս մը ազատած է հոգին բանաւոր քայքայուածէն, եթէ քեզմէ շունչ մը, զգացում մը կը դեղերի հոգ, թող գայ իմ էութեանս խառնուի, ու իմ աչքովս տեսնէ եւ իմ ականջովս լսէ զողջոթուն սաղարթներուն զմբուխը եւ բոլոր այն բաները, որոնցմէ ստանց յազենայու եւ կարօտով հեռացար: Դուն օտար պիտի չըլլաս իմ մէջս, զու յիշատակովդ օծուած պիտի գտնես իմ հոգիս: Ինչ փոյթ նոյնիսկ, եթէ քեզի հետ զու ցաւդ ու տառապանքդ ալ տեղաւորուէր իմ մէջս»:

ԶԱՊԻԼ ԵՍԱՅԵԱՆ

**ՄԱՀԵՐԳ**  
**ՊԵՏՐՈՍ ԴՊԻՐԵԱՆԻ**  
**Հ Ս Մ Ա Ր**

Իր ձեռներուն մեղրամտէ  
 Որ զգացին շաշաններում  
 Հեղեղը սուրբ

Իր ձեռներուն մեղրամտէ  
 Որ բանտեցին տատրակներում  
 Թոխէքը լոյս


Իր ձեռներուն մեղրամտէ  
 Որ փակեցին երազներում  
 Մատեանը ջինջ

Իր ձեռներուն մեղրամտէ  
 Որ վառեցին թիրեղներում  
 Կամարը խած

Իր ձեռներուն մեղրամտէ  
 Որ փաղեցին շրթունքներում  
 Վարդը խնկատ

Իր շրթներուն մեղրամտէ  
 Ազօթը լուս այս երգին մէջ  
 Կը մրմնջէ...:

ԱՐՄԷՆ ԵՐԿԱԹ



ՎԱՀԱԳՆ ԴԱԻԹԵԱՆ

ՀԱՆՃԱՐԵՂ

ՏՐՏՈՒՆՁ

Պետրոս Գուրեանի մասին իմ այս յօդուածը սկսելուց առաջ ակամայ յիշեցի նոյն տարիքում մեռած, աւելի ճիշդ, մենամարտում սպաննուած մի այլ հանճարեղ պատանու ճակատագիր:

Ոչ, բանաստեղծ չէր այդ պատանին, մաթեմատիկոս էր, որ իր մահուանից շատ յետոյ միայն հակացուեց, համարեց ժամանակակից հանրահաշուի հիմնադիր եւ կոչուեց «հանճար» տասնընչորս տարուէ...:

Ճբանսխացի եվարիտ Գայուան էր զա, արտակարգ, բացառիկ, իր ժամանակից շուտ ծնուած մի պատանի, որ թէեւ այդ ճակատագրական տասնընչորս տարից առաջ էլ էր զբաղուել մաթեմատիկայով, սակայն Փրանսիական յեղափոխութեան յարձանուար նետուած, հրնարաւորութիւն չէր ունեցել ինչպէս հարկն է նուիրուելու իր կոչմանը:

Եւ ահա նեարդային, ըժբոսա ու անհաւասարակշիռ պատանին կանգնած էր լուսարացին մենամարտի գնալու վտաստի առաջ:

Տասնընչորս տարեկան էր մնում մինչեւ լուսարացը:

Եւ այդ տասնընչորս տարեկան հանճարեղ յայտնագործումների մի դարադուրս, յայտնագործումներ, որ Գայուան հաւանաբար պիտի անէր իր ողջ կեանքի ընթացքում:

Մահուան սպառնալիքը եկել էր ողբկոչելու նրա էութեան գաղտնաբաններում ննջող ստեղծագործական բոլոր ուժերը, արթնացնելու հանճարը, որ, յիշուել, արթնցաւ ու կայծակնային բուռնկում ունեցաւ:

Գուրեանի կենսագիրները մեզ չեն հաղորդում, թէ քանի տարեկան էր երբեք Վահագնի ծնունդը, բայց ես կասկած չունեմ, որ 14 տարեկան շատ աւելի կարճ պիտի տեւած լինի, քանի որ այդ բանաստեղծութիւնը շատ է նման կայծակի բռնկման: Եւ այդ բռնկումը գեղարուեստական մեծ յայտնագործութեան կերպ ստացած, եկաւ բացելու հայ ջնարեղութեան նոր դարադուրսը, թէեւ դարձեալ հեղինակի մահից բաւականին յետոյ էր, որ արժանացաւ տպագրեալ դրին, հասկացուեց ու գնահատուեց ըստ արժանուրի: Կարծում ենք, որ այս դէպքում դարձեալ մահուան սպառնալիքն էր, մե-

նամարտն էր մահուան հետ, որ եկել էր  
ոգնկոչելու պատանի բանաստեղծի հո-  
գու գաղտնարանում ննջող բոլոր ուժե-  
րը, ժամանակից շուտ արթնացնելու  
հանճարը...

Ահա այս բոլոր համընկնումներն են,  
որ ինձ ակամայ ստիպեցին յիշել Գալ-  
ային:

«Տրտունգէք»:

Ինքը՝ բանաստեղծն այսպէս է նկա-  
րագրել նրա ծնունդը, մէկ օր յետոյ գը-  
րած «Ջրտուն» բանաստեղծութեան մէջ.

Երեկ երբ պաղ քրտանց մէջ  
Սեր մրափ մը կ'առնէի,  
Եւ քօջնած գոյց մը վարդեր  
Այտնորսւ վրայ կ'այրէիմ,  
Անշուշտ ճակտիս վրայ մտնու  
Գալկուքիւն մը կը պըլպըլար,  
Եւ մտնու քոխիջ մ'առնէի...  
... Ան, գլուխս փոթորկեց,  
Այս սեր եկեղծ տըլի դարս...

Մահու թռիչք, գլխի փոթորկում եւ  
սեւ հեղեղի սանձադերձում, այս է, այս  
«Տրտունգէք»:

Դուրեանի առաջին բանաստեղծու-  
թիւնը չէ սա եւ ոչ էլ վերջինը: Դրանից  
առաջ եւ յետոյ նա գրել է նոսեւ այլ բա-  
նաստեղծութիւններ, որոնց մէջ կան մէկ  
տասնեակից աւելի գլուխ-գործոցներ,  
բայց իմ կարծիքով «Տրտունգէք» այդ  
կայծակնային բռնկման լոյսերի մէջ է,  
որ առաւել խնամաւորութեամբ ու մեր դէմ  
իրենց ամբողջ գլխապտոյտ խորութիւնն  
են բացում նրա միւս գործերը: «Տըր-  
տունգէք» զորաւոր ժազնիօի նման իր  
չուրջն հաւաքած է պահում «Սիրելին ու  
«Դրժելը», «Լեակ», «Ինձի կ'ըսեն»,  
«Սեւ-սեւ», «Ենքա հետ», «Թրքուսիմ»,  
«Իմ մահը» եւ այլ բանաստեղծութիւն-  
ներ, որոնք միանալով ու ամբողջանա-  
լով, վեր են ածում մի մեծ համանու-  
զի, որի միակ խորագիրը, ըստ իս, կա-  
րող է լինել «Հանճարեղ արտունջ»...

Այս, եթէ նարեկացու, միջնադար-  
եան այդ մեծ տեսանողի, անհուն մատ-  
ենը երկուութիւններից ծուատուող մեր  
հոգու ալեկոծ հառաչանքն ու այլբա-

խութիւնն է, եթէ Ծրիկեան տաղը՝ ա-  
նահնկայ խիզախութեամբ ու ցաւագին  
ներթափանցումներով լի մեր դանդաղ  
է առ Աստուած, եթէ Քուլակ անուան-  
եալ դուստրի հայրենը մեր կենսայի, գը-  
ւարթ, ամօթխածութեան կապերից ձեռ-  
քազատ ոգու փառարանում է ու Սայաթ-  
նովան մարդկայնորէն գեղեցիկ մեր այ-  
րումը, ապա Դուրեանը արտունջն է, հայ  
ոգու արտունջը, որի հնչիւնները, սա-  
կայն, հայ իրականութիւնից ծնունդով ու  
պոկուելով այդ իրականութիւնից, ի-  
րենց արձագանքն են թողնում համա-  
մարդկային ոլորտներում:

Դուրեանի ստեղծագործական մեծա-  
զոյն սիրանքը հենց դա է, հայ բանաս-  
տեղծութեան, հայ մշակոյթին ժառու-  
ցած նրա ծառայութիւնը հենց այդ չա-  
փանիչով է, որ պիտի շափուի: Նոր ժա-  
մանակներում այդ քանակեայ, անյու-  
սորէն հիւանդ պատանին էր, որ ազգա-  
յին անձուկ սահմաններում կախարհա-  
կան շրջապտոյտ անող հայ երգի համար  
կարողացաւ նոր ընթացք ու նոր ուղի  
սահմանել: Զանելով ձեւական ոչ մի  
յայտնագործութիւն, շղիժելով ոչ մի  
արտառոյց միջոցի, նա ստեղծեց նորարա-  
րական մի երգ, որ դարապտուի էր քնա-  
րերգութեան համար: «Մենք բոլորս, —  
խոստովանում էր հանճարեղ Տոյտոյր, —  
Գոգոյի «Շիկնիչից ենք գուրս եկել»:  
Դուրեանին յաջորդած շատ բանաստեղծ-  
ներ, Մեծարենց ու Վարուժան, Տէրեան  
ու Թէգեան, նոյնպէս կարող էին տեսել,  
որ իրենց գուրս են եկել դուրեանական  
«Տրտունգէք» ու «Լեակ»ից: Եւ դա կը  
լինէր իրաւացի, քանի որ հայ նոր քնա-  
րերգութիւնը ժառանգելով դուրեանա-  
կան բանաստեղծութեան միտումները,  
մինչեւ օրս էլ ողիկան խաչածուկներ  
մէջ է նրա հետ:

Եւ սակայն Դուրեանի ստեղծագոր-  
ծական սիրանքի մեծութիւնն ամբողջու-  
թեամբ չի կարելի պատկերացնել, եթէ  
մի թեթեւ սկիւարի շնեռենք գրական այն  
մթնոլորտին, այն միջավայրին, որից  
այնքան բարձրացաւ նա, մեալով եղակի  
ու անհաս:

Հայր Աթոռն Բաղրատունու գրաբար ռասնաստեղծութեան շունչն էր, որ տիրապետող էր այն սոսկաբէզի վրայ, ուր մուտք էր գործում պատանի բանաստեղծը: Այլիչանի ու Պէշիկթաշլեանի տիրական հմայքով էր ապրում արեւմտահայ հասարակութեան միտքն ու հոգին: Եւ դա հասկանալի էր, հայ կեանքի իրավիճակը պարարտ հող էր ոչ միայն անկու այդ բանաստեղծութեան, այլև համընդհանուր ճանաչում ու զնահատութիւն բերելու նրան: Այլիչանի մի քանի ֆերմ, հայրենասիրական բարձր ու ազնիւ զգացմունքներով շարժուած բանաստեղծութիւնները շուրթից շուրթ էին անցնում: Պէշիկթաշլեանի տաղերը, որ հասել էին զարմանալի ճկունութեան, պարզութեան ու բարձր արուեստի, երգի փոխուած սաւառնում էին հասարակական մտայնութեան վրայ, Հեղինակին բերելով փառք ու համարում: Ասպարէզ մտնող պատանի բանաստեղծի համար ընական պիտի լինէր այդ՝ արգէն վրստահի, ճանապարհով ընթանալը: Եւ, յիրաւի, Դուրեանի առաջին հայրենասիրական գրաբարխառն թանաստեղծութիւնները դալիս էին ասելու, որ նա արդէն իսկ այդ վստահի ճանապարհն է ընտրել: Բայց զրանք գրական անխուսափելի նախափորձեր էին միայն: Դուրեանը հանճարեղ էր ծնուել: Նա պիտի այլ, նոր հայեացքով նայէր կեանքին եւ հայրի գրաման պիտի տարբարւումէր մարդու դրամայի մէջ ընդհանրապէս:

Ինձ թւում է, թէ Դուրեանը դիտէր, որ իր գործը անմիջապէս չէ, որ պիտի արձագանգի իր ապրած մթնոլորտում, դիտէր, որ ինքը չի վայելելու իր ստեղծագործական սիրանքն արժեւորուած սեփական բաւականութիւնն ու միտքորութիւնը, բայց հաստատիմ իր կոչմանը, ընթանում էր դժուարին ու տնկոխ ճանապարհներով, ընթանում դիմադրութեանը հակառակ: Եւ այդ շփումն էր, որ դուժարուելով անձնական ցաւին, ծընուած էր անխառն, բարձր ու մարդկային բանաստեղծութիւնը, որը հարիւր տարի

յետոյ էլ նշանակեց իսկ չի կորցրել իր հմայքից ու թարմութիւնից:

Եւ գրա գաղտնիքն, այո, ամէնից առաջ այն է, որ Դուրեանը կարողացաւ հայի գրաման, հայ հոգու տրամութիւնն ու ցաւը տարբարուծել մարդու գրամայի մէջ: Չանէր նա այդ սիրանքը, զարմեալ կը մնար փայլուն բանաստեղծ, թերեւս նաեւ մեծ բանաստեղծ, բայց միայն հայ բանաստեղծութեան եւ հայ իրականութեան սահմաններում: Մինչդեռ այժմ, համազօր թարգմանութեան ղէպքով, Դուրեանի բանաստեղծութիւնը վստահօրէն ու համարձակօրէն կարող է քայլել ղէպի համաշխարհային ընարկագութեան Պառնասը եւ այնտեղ աւանդ որեւէ զեղչի ու զղրումի իր տեղը գրաւել Հայնէի ու Լամարտինի, Շելլիի ու Միւսէի կողքին:

Դուրեանի բանաստեղծութեան ճիշդ կենտրոնում կանգնած է մեծուտառ Մարդը, կանգնած իր աստուածային սիրով, իր աստուապանքով ու արցունքով, իր թրուիչքներով ու թոխիքներին յաջորդող ցաւապին անկումներով: Միամտութիւն կը լինէր կարծել, թէ հոգեկան այդ ալեկոծութեան, այդ ոգեշունչ տրտունցի ակունքը միայն բանաստեղծի անձնական ցաւն էր ու հիւանդութիւնը: Միայն անձնականը ի վիճակի չէ տալու այդպիսի բարձր, համազգային ու համամարդկային մղումներ: Ինչպէս վերուում արդէն նշել եմ, այդ ցաւը, մօտայրուտ մահւան զգացողութիւնը եկան միայն խոտոցընելու ժամանակը եւ սեւեռելու նրա հանճարը, իսկ տրտունջը, մեծ ու ահաւոր տրտունջը, նա ստացել էր մ'ւ իր զենքի հետ, երբեք արեան դարաւոր ժառանգութիւն, է՛ւ իր ժամանակի ընկերային-քաղաքական մթնոլորտից, իբրեւ օդ ու շնչառութիւն:

Դուրեանն իր էութեան ծալքերից էր հանում ասելիքը եւ գրա շնորհիւ էր, որ նա համարեա՛ թէ ժամանակ չկորցրեց գրական վարպետութեան ու տեխնիկայի վրայ: Վարպետութիւնը դայիս էր Հենց Նիթի, ասելիքի հետ: Մեծ էր ասելիքը, եւ նրա պէտք էին ամենահասարակ,



պարզ, առօրեայ բառեր, իր մեծ զգացմունքն ու միտքը տեղ հասցնելու համար: Ասելիք շունեցողները կամ քիչ ունեցողներն են իրենք իրենց պղտորում, որպէսզի ծածկեն յատակը եւ խորութեան պատրանք ստեղծեն: Դուրեանը խոր էր թափանցիկութեան մէջ եւ չէր վախենում լինել ուղղակի ու նախնական: Չէր վախենում նաեւ իր բանաստեղծական ուժանտիկ թռիչքներին հիւսելու առօրեայ արձակը, առօրեայ դիպուածը, որ ժամանակի զեղադիտական բմբուռներով դիրքերից կարող էր քերթողական արուեստի դէմ կատարուած մեղանչում համարուել: Այդ իմաստով պուշկինեան ինչ-որ պատուութիւն ու բընականութիւն կայ Դուրեանի գործերում, ազատութիւն, որ բանաստեղծութեամբ լիփլիցուն լինելու վկայութիւն է անշուշտ: Եւ դրա շնորհիւ էր, որ Աստուծոյ հետ փիլիսոփայական մեծ գրոյցի նստող պատասխին, չէր խուսափում նաեւ իր սիրուհու ծոծրակին «ճալ-ճալ թափուող վարսից ալեակք»ը, նրա շրջազենտի շրջիւնը, աւելին, նաեւ կատարած իր գրօսանքը շատ արձակուենակ ստղծող նկարագրերուց («Հայտնիք»): Չէր խուսափում որովհետեւ բանաստեղծութիւնը իր մէջ էր:

Քամի մը պատառ թափքերու վրայ  
Արգունգճատ սողեր գրիք իմ,  
Անշուշտ քարեկամքս գայն պիտի  
պատուեն  
Եւ ամոնց արեւ տեսցեն:

Ո՛ր, բանաստեղծութեան քառակ չէ սա, հատուած է Դուրեանի մի նամակից, եւ ինքս սողատեցի, ցոյց տալու, որ նրա արձակ իսկ բանաստեղծութիւն է, իսկ ինքը՝ հաղուազիւտօրէն անխառն բանաստեղծ:

Դուրեանը զարմանալիօրէն ամբողջական է, զարմանալիօրէն, քանի որ այդ ամբողջականութեանը կարողացել է հասնել քանակապէս շատ քիչ գործերով: Ընդամենը երկու տասնեակից ոչ աւելի բանաստեղծութիւն է թողել նա, որոն-

ցից ութ-սասը ընտրանին են զուտ գուրեանական: Եւ դրանք են, որ հիւսուելով միմեանց, վեր են ածուած մի ամբողջական ու ողբերգական պատմութեան: Սիրով է սկսուած այդ պատմութիւնը:

Բայց մը հայտնուած է, փուկ մը ծպիտ,  
Քարս մը խօսք դիպեց իմ սիրտ...

Բայց չի ուշանում նաև այրումը:

Ո՛չ ոք քսու... «Մա տղին  
Փառաքեմ սիրտը տրտմագին,  
Նայինք ինչե՛ր գրուած կան...»  
— Հոն հրդեհ կայ, ո՛չ մտնեմ:

Հրդեհը, այրումը անբաժան է բանաստեղծից:

«Խօսիմէ», քսու — ո՛հ, խօսիլ  
Հատնիլ է լսիլ իմ համար...

Այրուելով սպառուելը գային է անհուսօրէն զբամաստիկ դարձնելու բանաստեղծի կերպարն ու քնարական պատմութիւնը: Բայց նա դատապարտուած էր այրուելով սպառուելուն, որովհետեւ այն էակը, որին տուել էր սիրտ ու սէր, թէպէտ ասեւ աչքեր» ունէր, սակայն այդ աչքերը սազալ չգիտէին: Նա դիսաւոր աստղի զեղեցկութեամբ էր երեւացել բանաստեղծին, բայց իր դիսաւոր զեղեցկութիւնից նրան թողել էր միայն «քար մը»... Եւ կուտակուած էր տառապանքը:

Ո՛հ, յատակն եմ իմ փրփուրներ...

Նրան այնպէս էր թուած, թէ աշխարհում ամէն ինչ հեղնուած ու ծաղրուած է իրեն, ու ծնուած էր ընդհանրացումը:

Խորը մը կար, որ գիտ չէր ծագեր,  
Այն լուս փսամ էր գերեզմանիս...

Սակայն մանրամասնօրէն շարադրել այդ պատմութիւնը, նշանակում է ամբողջութեամբ արտագրել Դուրեանի բո-

լոր լավագոյն գործերը: Ուստի *ստենք միայն, որ կեանքին ու նրա գեղեցկութիւններին այնպէս հաւատով ու յոյսով սիրահարուած բանաստեղծը, իր դէմ տեսնում էր մի գոյգ դինովցած «երկինքներ».*

Ույր մէկուն մէջ պաշտի նա.  
Եւ միսին մէջ ալ Աստուած:

*Ի վերջոյ այդ նոյն պաշտուած Աստուծուն նետում է իր շիկացած մարտահրաւէրը.*

Թագ անձի մ'ըլլամ ու կողզ խրիմ.  
Թող յորջորջիմ քեզ. զԱստուած  
  ոյներիմ... .

Այո՛, գարմանայիօրէն ամբողջական է Դուրեանը, նրա բանաստեղծութիւնը մի քնարական դրամա, նա ունի իր ուժմանտիկ ու գեղեցիկ սկիզբը, տանջալի ու ցաւոտ ընթացքը եւ ողբերգական վախճանը, որ վեր է ածուած ահաւոր սրտունջի ու աստուածամարտութեան: Բայց ոչ միայն ամբողջական նախաւարտուն բանաստեղծ է նա: Երբեմն կարծիքներ են յայտնուում. «Ինչե՛ր, կը գրէր Դուրեանը, եթէ աւելի երկար ապրէր»: Ես չեմ միանում այդ կարծիքներին, քանզի համոզուած եմ, որ որքան էլ երկար ապրէր (տա՛ր Աստուած), որքան էլ քանակով ու ծաւալով շատ գրէր, միեւնոյն է, *ստեղծի հանրագումարը նոյնն էր լինելու, նոյն վիթխարի ուժն ու աստուածամարտ սրտունջն էր նա մեզ բերելու: Համոզուած եմ, որովհետեւ Դուրեանի նման քնարական բանաստեղծները մէկ հիմնական ստեղծով են գալիս աշխարհ: Համոզմունքս պարզ դարձնելու համար ուզում եմ բերել Լեւոնտուրի օրինակը: Դուրեանի խառնուածքի եւ*

*Դուրեանի նման հանճարեզ մի բանաստեղծ, որ աւելի երկար ապրեց ու աւելի շատ գրեց: Գրեց բանաստեղծութիւն ու պոեմ, դրամա եւ վէպ: Եւ սակայն նրա ամենափոքր բանաստեղծութիւնն ու ամենամեծ պոեմը, դրաման ու վէպը տարբեր մեւերով, զեղարուեստական տարբեր հնարքներով նոյն փիլիսոփայութեան կրողներն են: Մովի մենաւոր ատաղաստն ու երկնքում թեւածող մենաուր դեւը, Պեշորինն ու Արբենինը վերջնական հանրագումարի մէջ նոյն կերպարներն են, բանաստեղծի նոյն ստեղծի տարբեր մարմնացումները: Հնարաւոր է, որ Եթէ Դուրեանն էլ երկար ապրէր, գրէր հատորներ, բայց այդ հատորները վերջնական հաշոււ մտի նրա թողած փոքրիկ գրքոյկի կշիռն ունենային:*

*Հետեւաբար, Դուրեանի ստեղծագործական մեծագոյն սխրանքներից մէկն էլ այն էր, որ նա այդքան կարճ ժամանակամիջոցում եւ այդքան ժլատ սողնորով կարողացաւ աշխարհին տալ այն ամէնը, ինչ բերել էր իր հետ: Իսկ բերածը մեծ էր ու անկուրի:*

Փա՛ռք, ուրեմն, այդ հանճարեզ պատանուն, որ ոչինչ չպահեց մեղանից, որ ծանր հիւանդութեան այրող տենդի մէջ իր գողոյով մատներէց վայր չգրեց գրիչը, մեզ կտակելու իր հողեւոր հալածութիւնը, որ անանձնական էր:

... Ո՛հ, խօսիլ,  
Հասնիլ է լռի իմ համար...

Այո, նա այդ գիտէր, բայց մինչեւ իր վերջին շունչը խօսեց, սպառուեց, հողին տանելով ծուառուած մի մարմին ու մեզ թողնելով իր բանաստեղծական հրաշքը, որ վիթխարի սիրով ու մերկայի սրտունջով պիտի մղուի դէպի դարերը եւ յարատեւի:

ՎԱՀԱԳՆ ԴԱԿԹԵԱՆ

ԱՐՐԱՀԱՄ ԱՆԻՔԵԱՆ



**ԻՄ ԳՈՒՐԵԱՆԸ**

*Մանուան հարբարակներ*

Ա.

Երբ նիւզերի ծայրին բոյր է մանուս ու բոյր,  
 Եւ ճախրում երկրի խնամկարն արդէն,  
 Երբ օրերն են թափում բաւուտ մայրամուտում,  
 Որ վաղարդեան լռչին չապանելով ցայտեն,

Երբ կարօտը կեանքի մի խելօքիկ քփի  
 Կիսաստուերի մէջ իսկ ճիւղօքներ է ցանցնում,  
 Եւ թախիծը, ճամած անկուսքին աւ թմբիր  
 Խեղճուտ սիւք է բաշխում երազանքի կնճնուն,

Երբ գամբորէն կածանն է մեկնում դունչ ու թաթ,  
Երբ որ ձիւնն է շրջում, ինչպէս թռչի կաթուկ,  
Երբ յառնում է հողից մի ինճամփոփ ջուրակ՝  
Ես Դուրեան եմ կարդում:

## Բ.

Եթէ գիտնայի օրը յամի տեսն  
Հագար ութ հարիւր ծօթանասուն մէկ,  
Երբ ամեհօրէն մի մանուկ Դուրեան  
Կայծակնակերտեց «Տրտուեջք»ն ստորաշէկ  
Եւ ընթացէի մէջ դրեց նշյնեսայն  
Լինելութեան մէջ առկախ մի տարերք՝  
Ես ամէն տարի ա՛յդ օր մանաւանդ  
Կը գգայի մի թիւք, անամբողջ երէկ,  
Որ նախորդել էր այդ անեղ օրուան,  
Եւ բարվառելով գոհութեան օրհներգ  
Նրա ինձ բաշխած լոյսի հանդիման՝  
Ձէի ըմբռնի թերեւս երթեմ,  
Թէ ինչո՞ւ, ինչո՞ւ, ինչո՞ւ անպայման  
Պիտի «Ջրջուտ»ը գզար «օր մը ետք»  
Եւ ներում հայցէր, որ մօր վշտարեկ  
Արցունքի շիթով ժայթքել է նման  
Չաստուած դորդոզ երգի տիեզերք:

## Գ.

Դարն անցել է անվերադարձ, քանզի դու կա՛ս,  
Դու՛ խուսափուկ առիթի սուր նշանախն:  
Տարածութեանց կայայտն, ինչպէս գարնան Լուսասող,  
Նօտրանում է, հպանցելով քա ցարասուն:

Ի՞նչ անուվոր է քա կեանքի հեռուն սգող  
Ամէ՛ն ամեակ՝ յոքելեան փող թէ տարելից.  
Ժամանակի լնակի մէջ բախտն էր, որ քա  
Դէմքին կննին իսկ դարձրեց անկարելի:

Ո՞վ էեզ նման գիտէ շնչել յիշատակի  
Հովտում բուրոզ հովտաց շաշանը գոհութեան.  
Յոյզերս քա դէմքն լուսել շուրջանակի,  
Ինչպէս վանքի լուսանցոյց երդ ու պատուեան:

Գռ՞հ ես, գռ՞հ ես, հրահեղեղ, ամեն՞ւն տղայ,  
Երախտի՛քի ծուխ ու նեճնից այս վեր խուճռո՛ղ .  
«Նու յիշատակս ալ թառամի» էլ չե՞ս միայ,  
Երբ ազգովին մխուս մեճ մեճ քա՛ն վերյուշով :

Կը թողնե՛ի՞նք քա հողակոյտը աննշան...  
Սակայն հրկրի մի այնպիսի խորշում է նա,  
Ուր, չիմացա՛ր, երանաւ՛տ, սնրի, արեան  
Մոճաւանքը տակա՛նքորէն սուգուեց, մնա՛ց :


Ո՞վ կը տար ինձ, Որփէսսի պէս, Հաթէսի  
Այդ աշխարհը իջնել, որ ես տիւ ու գիշեր  
Տուն կրէի փռչի-փռչի, տեսիլ-տեսիլ  
Հողակոյտըդ եւ դեռ, ա՛յս, ի՞նչ հողակոյտեր :

Բայց դարձեալ կուս կուսի մէջ համակերպման  
Փչելով ինձ մրկող տասը տուայտանքիս,  
Յուշըդ գրկած՝ մասու՛նքներիդ դէմ-հանդիման  
Իմ ազօրքն եմ վառում ի քեզ հոգեհանգիստ :

Եւ մաքրում եմ, ճայնագերծում հոգիս, ինչպէս  
Աստղաթափով նախըզ գիշերը պարզկայ,  
Որ շանթածիգ հառաչներիդ մրրիկը ես  
Իմ լռութեան առաջաստում յանա՛խ զգամ :

ԱՐԲԱՀԱՄ ԱԼԻՔԵԱՆ





Ն. ԶԱՐԻՈՒՏԵԱՆ

ԺԵՐԱՐ ՏԸ ՆԵՐՎԱԼ

1808 — 1855

Գրող Ժերար առ Ներվալ ունեցած է ներկայումս երկու հանգրուաններ, որոնք կը քնորոշեն իր տաղանդին երկու երեսները: Այդ հանգրուանները ուսումնասիրելով առիթ պիտի ունենանք սահմանելու այն տարբերությունը, որ կայ տաղանդաւոր քերթողի մը եւ հանճարեղ բանաստեղծի մը միջեւ եւ, ինչո՞ւ չէ, վերլուծումի ենթարկել իրաւ բանաստեղծութեան հուսիւնը եւ գաղտնիքը: Ինչո՞ւ 1852էն առաջ Ներվալ օտարած տաղանդաւոր դրող ու քերթող մըն էր եւ, յանկարծ, դարձաւ հանճարեղ բանաստեղծ եւ տիեզերքի դաղտնիքի սուր խուզարկուն: Ի՞նչ փոխուեցաւ իր ներաշխարհին մէջ, որպէսզի յանկարծ կամարթիւններու եւ ձիւկոններու այս հետեւորդը, զատնայ նոր Որփէոս մը, հաւասարը եւ, ինչո՞ւ չէ, երբեմն գերազանց իր մեծ վարպետներուն: Ահա այս է գաղտնիքը այս անգուրպական մարդուն: Ներվալ՝ զգայուն, գոբախտ ու ե-

րազուն տղայ, շատ կանուխէն ունեցած է գրելու ծարձաջը: 13 տարեկանին արդէն շարագրութեան տեւրակներու էջերուն մէջ ան կը շարէր Հայրենասիրական ոտանաւորներ, զասական պարունակութեամբ ու կառոյցով:

Ինչ զոչէճը չաւարտած՝ ան արդէն պատրաստ ունի ոտանաւորներու հաւաքածոյ մը, զոր պիտի հրատարակէ հետագային՝ Ազգային էլեգիաներ անունին տակ: Գրած է նաեւ կատակերգութիւն մը: Իսկ 1827 թուականին, այսինքն՝ Երկրորդական ուսման վերջին տարին, ան արդէն վերջացուցած է կէօթէի հրոշակաւոր «Պատասխան թարգմանութիւնը, որ հիացում պատճառեց հեղինակին իսկ, ինչպէս տեսանք Ներվալի կենսագրութեան մէջ:

Դպրոցը աւարտելուն պէս, Ներվալ արդէն որոշած է իր կենքի ուղին, իր միակ ասպարէզը՝ գրականութիւն եւ միայն գրականութիւն: Եւ կ'արտագրէ

անդադար, զիւրեք ու ցերեկ: 1829ին, թատերգութեան կը վերածէ Վիգթոր Հիւկոյի «Համ տ'իլլամտ» մէջը: 1830ին, կը հրատարակէ թարգմանութիւններու հատոր մը՝ գերմանացի բանաստեղծներէ:

Չմոռնանք ըսելու, որ Ներվալ էր մայրենի լեզուին պէս գիտէր գերմաներէնը: 1831ին կը փոխէ իր անունը. Ժերար Լայպրենին կը դառնայ Ժերար տը Ներվալ:

1834ին, իր մօրը հօրմէն կը ժառանգէ կոկիկ դուժար մը եւ անմիջապէս կը հիւնէ «Լը Ման Տրամաթիկ» թերթը, դերասանուհի Ժենի Քոյոնի սաղանդը նանթօթացեայ ճամբը ընթերցողներուն: Կաշատակցի նաեւ «Լը Ֆիլարօ» օրաթերթին: Ժենի Քոյոնի Համար կը գրէ թատերգութիւններ, «Փիքիօ», «Լէօ Պարֆարթ», «Ալիսիազտը», եւայլն:

Իր երկար շրջապտօյան վերագարձին՝ կը գրէ իր «Ճամբորդութիւն դէպի Արեւելք» անդուգական գործը: Նոյն տարին կը սկսի յօրինել օփերա մը՝ «Լէ Մոնթեմեկրէն», 1850ին՝ «Կարմիր սատանա», «Փառաւոր ձեռքը» եւ կը կատարէ թարգմանութիւններ գերմանացի դրողներէ:

1852ին, կը վերջանայ Ժերար տը Ներվալի գրական ասպարէզին առաջին հանդրուանը: Իտական գրագէտ մը, որ խորութիւն չի դներ մշակուած սէքերուն միջեւ. ոտանաւոր, օփերա, թարգմանութիւն, գրական եւ զեղարուեստական քննադատութիւն, ճամբորդական յուշեր, պատմուածքներ, թատերգութիւններ. մէկ խօսքով՝ գրական բոլոր սեռերը անխտիր՝ արձակ կամ ոտանաւոր: Եթէ Ժերար տը Ներվալ մեռած ըլլար այդ թուականին, իր անունը պիտի մնար գրականութեան պատմութեան մէջ իբր երկրորդական ու կրտսեր գրող մը, որմէ երբեմն-երբեմն ոտանաւոր մը կամ արձակ էջ մը լոյս պիտի տեսնէր հաւաքածոներու մէջ, ինչպէս կ'ընէին գրականութեան շատ մը մասնագէտները մինչեւ 1930ական թուականները եւ նոյնիսկ աւելի ուշ: Մինչեւ 1939 տպուած

գրականութեան պատմութեան մեծահատոր գիրքերուն մէջ իսկ, Ժերար տը Ներվալի անունը հազիւ կը յիշուէր քանի մը տողով միայն, Լերոզիական գրողներու շարքին:

1852ին, կը սկսի Ներվալի գրական կեանքին երկրորդ հանդրուանը: Իր առջեւ ունի երեք տարուան դժնդակ կեանք մը, յատկատեսութեան եւ խելագարութեան շրջաններով: Պահերձ՝ երբ ուղեգրային տաղանայներու պատճառաւ ան կ'իջնէ դժոխք, անկէ մէկ ոտուամով բարձրանալու Համար մինչեւ դրախտին դուռները: Եւ այդ յատկատեսութեան շրջաններուն է, որ վերջիւլուով իր այցելուութիւնները խաւարի թագաւորութեան, նոր Որփէնսը կը յօրինէ իր արձակ եւ ոտանաւոր գլուխ-գործոցները, որոնց նմանը դժուար է գտնել որեւէ՝ գրականութեան մէջ:

Այդ արձակ եւ ոտանաւոր գլուխ-գործոցները կը կոչուին. «Երակի աղջիկները», «Լէ Շիմէր», եւ «Օրելիա», որուն ձեռողիբը, ինչպէս ըսինք, գտնուեցաւ իր գրականին մէջ, երբ իր գիտէր կախուած դրան Հին-Լայպտեր փողոցի պատահաններէն մէկէն:

Ներվալի ամբողջական գործերը կրթնան հատորներ լեցնել: Արդէն «Լա Փիլյա» շարքին մէջ ան սկսած է լոյս տեսնել 2 կամ 3 հատորներով: Այս շարքին մէկ հատորը կրնայ պարունակել ամբողջ Աստուածաշունչի մատեանը, իր 1500էն 2000 լայն էջերուն մէջ: Սակայն իր անունը անմահացնող դործերը կարելի է գետեղել սովորական հատորի մը մէջ, ինչպէս կ'ըլլայ ընդհանրապէս:

Այդ 250էն 300 էջոց հատորը կը պարունակէ քանի մը ընտիր բանաստեղծութիւններ, «Լէ Շիմէր»ի 12 աղամանդեայ հնչեակները, «Քորիլա» թատերգութիւնը, «Երակի աղջիկներ»էն առնուած «Սիլվի» երկարաշունչ պատմուածքը, «Օֆթալի», «Երիս» եւ խորհրդաւոր, հմայող ու անմեկնաբանելի երկու ուրիշ գրութիւններ՝ «Լա Փանտարա» եւ «Օրելիա»:

«ԿՐԱԿԻ ԱՂՋԻԿՆԵՐԸ»

«Կրակի աղջիկներ»ը Հատորը բաղկացած է եօթը կտորներէ՝ 6 պատմուածք, իւրաքանչիւրը աղջկան մը անունով՝ «Անժելիք», «Սիլվի», «Օքթալի», «Եւփիլի», «Իդիս», «Ժեմի», 1 թատերգութիւն՝ «Քորիյա» եւ 1 ոգեկոչում, «Նրգեյ» եւ առասպելներ վայրաւ ցահանգեմ»:

Այս գործերը ունին անհասարար սթիլ. այդ պատճառաւ շատ քիչ անգամ տեղ կը գտնեն հեղինակին գործերուն մէջ «Անժելիք», «Ժեմի» եւ «Եւփիլի» պատմուածքները եւ «Քորիյա» կարճ փոքր:

Այս Հատորին լաւագոյն կտորները կը կոչուին «Իդիս», «Օքթալի», իսկ գլուխգործոցը՝ «Սիլվի», որ հեղինակին սպանումէն էր որոշ համարաւ՝ իր կենդանութեան իսկ:

Նախ ինչու վերոյիշեալ վերնադիրը: Ներջալ մեծ հաստք կ'ընծայէր կախարդական դիտելիքներուն, առասպելներուն եւ խորհրդաւոր գիտութիւններուն: Իր գործը հասկնալու համար անհրաժեշտ է որոշ ծանօթութիւններ ունենալ այդ դիտութիւններու մասին: Կրակի զաւակները կը հակադրուին հոգի գաւակներուն: Անոնք կը պատկանին միութիւն եւ հոգեկան աշխարհին, իսկ վերջինները՝ մարմնական եւ նիւթական աշխարհին: Իր «Ճամբարդութիւն դէպի Արեւելիք» գիրքին մէջ կը կարդանք հետեւեալ տողերը. «Ժամանակներու սկիզբէն ի վեր, կ'ըսէ Կայէն, պայքար կայ էյժեհիմներու, այսինքն՝ կրակի գաւակներուն, եւ հողէն ծնած Լայկներուն միջեւ: Մարդկութիւնը կրակի գաւակներուն կը պարսի արուեստները, գիտութիւնները եւ ֆարսարարութիւնը»: Ներջալ ինքզինք կը դասէ կրակի զաւակներուն շարքին, «բարեմ կարուած ամբսիմ մէջ, կը կրակից յաւաքաք քաղմութիւններու յայտը, կ'աշխատին իրենց ֆակտին քաղմութիւնը եւ միշտ կը բախին մարդաց ապերախութեան»:

Պրոմէթէոսը կրակի զաւակներուն

անդրանիկն էր: Ներջալ, որ կրակի որդիներէն է՝ կը փնտէ կրակի այն աղջիկը, որ իրեն ճակատագրուած էր սկզբանէ:

Պրական տեսակէտով, այս Հատորին գոհարը անկասկած որ «Սիլվի» երկարաշունչ պատմուածքն է: Առանց անտեսելու «Օքթալի» եւ «Իդիս»ի խորհրդաւոր գեղեցկութիւնը, ժերար որ ներջալի զրական սաղանդը, իր բոլոր երեսներով կը յայտնուի այս գրութեան մէջ:

«ՍԻԼՎԻ»

Այս վիպակը առաջին անգամ լոյս տեսաւ 15 Յոստոս 1853ին, «Էլա Ռըվիլ» տէ՛տե՛ Մանտ» գրական պարբերաթիւթի մէջ: Ծիշէ է, որ այդ պատմուածքին դադարաբար տարիներէ է վեր կը յաճախէր իր միտքը, բայց անոր յղացումը տեղի ունեցաւ 1853ի սկիզբները, երբ ժերար գուրու կու գար Փասիի հիւանդանոցէն, ուր անցուցած էր խնդրաւորութեան երկար նոպայ մը: Երբ գուրու կու գար իր հոգեկան դժոխքէն, ժերարի միտքը կը դառնար ջինջ ու յստակ, տաղանդը կը բիրեղանար: Բազմաթիւ անգամներ խնդարութեան նոպաներ անցրնելէ հետք, ան ունեցաւ յստակատեսութեան այնպիսի՛ պահեր, որոնց կը պարտինք իր գլուխգործոցները:

«Սիլվի» վիպակը վերակենդանացումն է հեղինակի մանկական աշխարհին: Գործողութեան թատերաձայրը վայրուս նահանգին մէկ մասն է, ուր որք ժերար անցուց իր մանկութիւնը՝ իր մեծ մօր խնամքին տակ: Վայրուս նահանգը կը գտնուի Փարիզի հիւսիսակողմը: Այդ շրջանին մէջ է, որ «ճագար տարի շարունակ քարայտից Ֆրեմուայի սիլարք», ինչպէ՛ս կ'ըսէ գրագէտը: Հոն դու կենդանի կը մնային հին սովորութիւնները, աւանդութիւնները եւ առասպելները. հոն, փոքրիկ աղջիկները շուրջպար կը կազմէին՝ երգելով իրենց նախնիներուն երգած երգերը: Խաղաղ տեսարաններ, կանաչութիւն, դարաւոր ծառեր,՝ գեատակներ, լճակներ եւ գիւղեր, օրոնց՝ ա-



նունը դառն էր ու քաղցր՝ մեղեդի էր մը  
ձայնանքներուն պէս. Լուսազի, Մորթ-  
Փոնթէն, Լանյի, Շանթի, Օթիա, էլ, և  
ևայլն:

Սե ալս զեղեցիկ բնութեան վրայ կը  
աւառանին մեծամղձոտ պատկերները  
Ատրիէնի, Միլվիի, Օրէլիի, Քլէրիի և  
ուրիշներուն: Գծուար է ալս անուն-  
ներուն տակէն երեւան հանել իրական  
էականքու զիմազծերը: Ո՞վ է Ատրիէ-  
նը. անողոյսման աղնուական տիկին մը,  
ազնուազարդ իշխանուհի մը, որուն ե-  
րակներուն մէջ կը հասէր Վալուա Գեր-  
զաստանի թագաւորական կապոյտ արի-  
նը: Միլվի՛ իր անձին մէջ կը խտացնէ  
ժերարի բարեկամուհիները, ազգակա-  
նուհիները, խաղի ընկերուհիները: Օրէ-  
լին մեզի կը յիշեցնէ ժենի Քոյունը:

Կէօթէի «Վերթեր»ին, Թուսոյի «Նար  
էլոյի»ին, նկարիչ Վաթոյի իւրա-  
նկերուն կարգ մը ազգեցութիւնները  
նշմարելի են թէև ալ էջերուն մէջ,  
բայց ներվալի գործը կը մնայ ինքնու-  
րոյն և անդուպական՝ իր ստեղծած մրթ-  
նուրուով, իր շեշտով, իր ոճին յստա-  
կութեամբ և հարուստութեամբ: «Միլվի»  
անցնալին և յիշատակին նուիրուած ա-  
մէնէն զեղեցիկ գործերէն մէկն է ան-  
կասկած:

Ահաւասիկ ալս հրաշալի վիպակին  
նիւթը:

Ներվալ ներկայ կ'ըլլայ թատերական  
ներկայացումի մը, ուր զեք մը վերցու-  
ցած էր սիրած դերասանուհին՝ ժենի  
Քոյուն: Ուշ գիշեր է: Ներվալ կը տառա-  
պի առանձնութենէն և յանկարծ կը յի-  
շէ իր մանկութիւնը: Կը մտնէ անկողին,  
բայց աչքերը չի կրնար պոցել ու կը յի-  
շէ ալս հին դրեակը, որուն պարտէզին  
մէջ աղջիկներ շուրջպար կը դառնային:  
Ինչք ալ մաս կը կազմէր այդ շուրջպա-  
րին: Գղեակէն դուրս եկաւ բարձրահա-  
սակ ու զեղեցիկ խարտեալ աղջիկ մը և  
ժերարին հետ միասին պարեց ու երգեց  
ըրջանակին մէջտեղը, և համբոյր մը  
տուաւ պատանի տղուն: ժերար, իր կար-  
գին, դափնիէ պսակ մը դետեղեց աղջի-  
կան խարտեալ մազերուն վրայ: Միլվի,

իր գիւզացի ընկերուհին, վշտացած կու  
լար:

Սրբ Փարիզ կը վերադառնայ, ժե-  
րար կ'իմանայ, որ այդ ազնուական ու  
զեղեցիկ աղջիկը, որ կը կոչուի Ատրիէն՝  
մտած է վանքին մէջ:

Ատրիէն կորսուած է ընդմիջ: Բա-  
նաստեղծը կը հանդիպի դերասանուհի  
ժենի Քոյունին, և անոր մէջ կը փնտռէ  
կորսուած Ատրիէնին էութիւնը:

Այս մոլանանքէն աղատելու համար,  
ժերար կը ջանայ վերագտնել իրականու-  
թիւնը, շօշափելի անցեալը, ու կը մեկ-  
նի Լուսազի, Միլվիի մօտ:

Միլվիի ուրախութիւնը սահման չի  
ճանչնար: Ամբողջ նահանգը եռուզեռի  
մէջ է: Ամէն կողմ պատրաստութիւններ  
կը տեսնուին դաշտային աննախընթաց  
պարահանդէսին համար, որ տեղի կ'ու-  
նենայ ամէն տարի:

Միլվի մեծցած է ու զեղեցկացած:  
Սե մագիւր, սե աչքեր, ճերմակ մորթ՝  
Օրն ի բուն իր կարկուհին առջև նստած՝  
ոսկի թելերով ձեռագործ կ'ընէ: Երկու  
երկտասարդները կը հաշտուին ու, թե  
թեի մտած՝ կ'երթան զիւրիշ զիւր, ալ-  
ցելելու համար ազգականներ ու ծանօթ-  
ներ: Տոնակատարութիւններ իրարու կը  
յաջորդեն: Իրիկուն մը, Շասլիի վան-  
քին մէջ կը բնագործի Յիսուսի կեան-  
քէն սոնուած փէնս մը: Հրեշտակներու  
խումբին մէջ, ժերար կը ճանչնայ կոր-  
սուած Ատրիէնը: Անձանօթին վիհը կըր-  
կին կը բացուի իր քայլերուն առջև:  
Միայն Միլվիի ներկայութիւնը կրնայ  
զինք փրկել վերջնական անկումէ մը:  
Միասին կ'երթան անոր մօրաքրոջ տու-  
նը, կ'ելլեն ձեղնայարկը, ուր սնտուկի  
մը մէջ պահուած էին պատահին հարսա-  
նեկան հագուստները: Միլվի կը հագու-  
հարսի հագուստներ, ժերար՝ փեսայի  
հասգուստներ և, ձեռք ձեռք բռնած՝ կը  
ներկայանան մօրաքրոջ: Խեղճ կիներ կը  
յիշէ իր երկտասարդութիւնը և երջանիկ  
օրերը և կ'արտասուէ:

Յաջորդ օրը, պտոյանները կը շարու-  
նակուին: ժերար կը դաշայ, որ Միլվի  
նոյնը չէ այլևս: Ան դարձած է հասուն

և իրասան: Շուտով պիտի ամուսնանայ գիւղի երիտասարդներէն մէկուն չեա:

Ահա, ուրեմն, Սիլվիին ալ կորուսած է ընդմիջաւ: Ժերար կը վերագառնայ Փարիզ եւ ծաղկեփունջ մը կը զրկէ գեղասանուհիին եւ նոյն օրը կը մեկնի Գերմանիա: Տարիներ ետք՝ կրկին կը հանդիպի Սիլվիին, ան ամուսնացած է ու մայր՝ կրկու գաւազներու: Իրիկուն մը միտսին կ'երթան թատրոն՝ տեսնելու համար «Օրելիա»ն. կամ «Փեմի Գոլմ»ը:

— Տե՛ս, — կ'ըսէ Ժերար, — այս աղջիկը որքա՞ն կը նմանի Ատրիէնի:

— Այդ անկարելի է, — կը պատասխանէ Սիլվի, — Ատրիէն տարիներ առաջ մեռաւ իր վանքին մէջ:

«Սիլվի»ն, կը գրէ Քլեպէր Հեռենս, յիշատակի եւ երաժշտի պոետն է»: Հանձարեղ հեղինակը յաջողած է հրաշքով մը հուսաարահչուել իրական կեանքի պարզ հաճոյքները եւ երազին անդիմադրելի կախարհանքը: Յիշատակը մանկութեան եւ հրաժեշտ՝ խաղաղ ու երջանիկ կեանքին: Ժերար վերջնականապէս ընտրած է երազին խորհրդաւոր կախարհանքը:

Բացի իր գրական արժեքէն, այս գործը կը յստակացնէ հեղինակին բարդ ներաշխարհը եւ կը պարզէ անոր ներշնչման գլխաւոր թեմաները:

Նախ՝ երջանկութեան թեման եւ անոր յատկանշական վայրերը եւ արարողութիւնները: Պարտէզներով շրջապատւած հին դղեակ մը, երիտասարդ աղջիկներուն շուրջպարը, որ կը խորհրդանշէ անմեղութիւն եւ ուրախութիւն եւ, մանաւանդ, այլափոխութեան թեման, որ կը կազմէ Ներվալի ներշնչման առանցքը: Ատրիէն հասարակ էակ մը չէ, ան կը պատկանի կրակի սերունդին. ոսկեգոյն մազեր, գեղեցիկ ձայն, թագաւորական արիւն եւ դասինեպատկ: Բայց ահա իր քրոջ՝ լուսնի լոյսին տակ, ան կ'այլափոխուի, կը վերածուի անիրական եւ միսթիք էակի մը: Իշխանուհի վերածուած է սրբուհի մը: «Այս առանձնաշրճարհեալ պահը, կը գրէ Ալպիէր», յայտ-

նութեամբ մը պահն է: Ժերար կը փոխադրուի իրական աշխարհէն դէպի երազի աշխարհը: Ան գիտէ, որ կեանքը որոնում մըն է, եւ որոնումը՝ կորուսած, բայց անձամբ բանի մը»:

Կայ նաեւ կրակի թեման, որ կը ծնի հեղուկէն, երբեմն ճահճներէն, բայց սնունդ չգտնելով իր ծննդավայրին մէջ՝ կ'ըլլայ թափառական, ինչպէս եղաւ ինք՝ բանաստեղծը:

Չորրորդը՝ հոգեփոխութեան թեման է, որ կը զարգանայ իր բոլոր գործերուն մէջ: Այդ թեման հիմը կը կազմէ կարգ մը կրօններու հաւատածքին: Ներվալ այդ հաւատածքին մէջ կը փնտռէ միսթարութիւն մը իր անբուժելի մոգաւանջին: Այդ մասին լուսաբանուելու համար է անկասկած, որ Ներվալ կատարեց իր երկար ճամբորդութիւնը դէպի Արեւելք, մանաւանդ դէպի Եգիպտոս, Պաղեստին ու Լիբանան, ուր ծնած են աշխարհի մեծագոյն կրօնները: Ներվալ նշանուցաւ Տիւրքի աղջկայ մը հետ, ու երկար ապրեցաւ Լիբանանի տիրպի գիւղերուն մէջ, որովհետեւ իմացած էր, որ տիրպիները կը հաւատան հոգեփոխութեան: Ահա ինչ կը գրէ իր «Ճամբորդութիւն դէպի Արեւելք» գիրքին մէջ. «Իրաւական իրավայրիկան կը մեռնի մարդ մը ու կը ծնի ուրիշ մը: Բաժնուող եզրին կ'երթայ ու կը միանայ նոր կազմուող մարմնի մը, եւ աստղերը իրենց ազդեցութիւնը կը գործեն այս փոխադրումներու փոխանակումին»:

Ժան Սթէյնմանի համար. «Սիլվի, Ատրիէն, Օրելի երեք պարիկներ են, որոնց զիմագծերը իրարու կը խառնելին, իրարմէ կը բաժնուին: Անոնք կը խորհրդանշեն Մանկութիւնը, Բանաստեղծութիւնը եւ Ազօրքը...» Նոյն քըննագատը կ'աւելցնէ. «Ատրիէն եւ Սիլվի անհետացած են, կը մնայ միայն Օրելիան: Ժերար կը փափաքի, որ Օրելիա իր մէջ խոսցնէ Ատրիէն եւ Սիլվիի էութիւնը՝ մանկութիւնը եւ ազօրքը: Բայց կը ձայնողի, որովհետեւ այդ բանը կըրճակուի կարելի դառնալ միայն երազի անիրական աշխարհին մէջ»:

«ԷՆ ԵԻՄԷՐ»

Եիմէր բառը ունի երկու իմաստ: Բուն առումով կը նշանակէ առասպելական արարած մը՝ կէս կին, կէս կենդանի, որուն տեսքը շարքաւորուած է ու վրատանգուոր: Փոխարեւորական իմաստով՝ շիմէր կը նշանակէ ցնորք, պատրանք:

Ներվալի մտքին մէջ, բառը ունի այս երկու իմաստներն ալ:

Այս հասկացածն կը բաղկանայ 12 հնչեակներէ, ընդամենը 168 տող, սովորական քերթուածի մը երկարութիւնը: Բայց այդ 168 տողերը կը հանդիսանան ա՛յն հունարէրը, որոնցմէ ծնունդ առաւ ամբողջ արդիական բանաստեղծութիւնը, մա՛նաւանդ խորհրդապաշտութիւնը եւ գերիրապաշտութիւնը:

Ներվալի դրած նախկին քերթուածներուն մէջ, կարելի է գանազանել հազիւ քանի մը կտորներ, որոնք նախատեսել կու տան «Եիմէր»ներու հրաշալի ծնունդը: Ինչպէս «Ջարթնում կառփի մէջ», «Լիւսամալարկի Կառն», «Սու կամարըք» եւ, մա՛նաւանդ, «Յանքէզի» հնչեակը:

Ինչպէս կը խոստովանի ինք. «Բանաստեղծութիւնը իմ հագիլս մէջ մտած էր ոսկի խօսքերով աստուածուհիի մը պէս, ամիկա դուրս ելաւ յանկարծ տառապանքի ճիւղեր արձակելով պիւքեան հարցուկին պէս... Առաջիմ աստուածուհիս գրեցի մզաւած երկասարդութեան խանդավառութեամբ, յաջորդները՝ սիրոյ մերշնչումով, իսկ վերջինները՝ յուսահատութեամբ»:

«ԷՆ ԵԻՄԷՐ» հաւաքածուն կազմող հնչեակները գրուած են գանազան շքրջաններու, բայց մասնաւորաբար 1853-1854 թուականներուն:

14 Նոյեմբեր 1853ին, Ներվալ իր բարեկամ Ալեքսանդր Տիւմային գրկեց երկու հնչեակներ, հաւաքածոյին գեղեցկացոյցները՝ «ԷՆ Տեսիլատո» եւ «Արտեմիս», հրատարակութեան համար Վըրմաուքթերք պարբերաթերթին մէջ: Տիւմայ շատ բան չհասկցաւ այդ գերբնական զարեքէն եւ յօդուածով մը՝ ըն-

թերցողներուն բացատրեց հեղինակին մտային վիճակը եւ խնդրեց անոնց ներողամտութիւնը: Վեհանձն բանաստեղծը չնեղուեցաւ իր բարեկամին այս թուաւոր ու նենդ յօդուածէն, այլ մտադրեց մնացեալ հնչեակներն ալ հրատարակել գերբէ մը մէջ, որովհետեւ հաւատք ունէր իր տողերուն վրայ: Միայն նամակով մը շնորհակալութիւն յայտնեց «Մոնթէ-Քրիսթո»յի հեղինակին: Այդ նամակին մէջ աչքի կը զարնեն հետեւեալ տողերը. «Գոմէ ընդունեցէք, որ արտայայտուելու արժանիքն ունիմ: Հաւանաբար իմ վերջին խնձրութիւնս պիտի ըլլայ իմ գիմքս բանաստեղծ կարծիս»:

Այս հնչեակներուն մէջ տիրական թեման ներշնչուած է Որփէոսի եւ Պիւթակորասի խորհուրդներէն եւ փոխտախտութեանէն. հողիները կ'անցնին ուրիշ մարմիններու մէջ. մեղքերը կարելի է ջնջել մաքրագործութեամբ. աստուածային կայծ մը կը զոյատեւէ մարդոց հողիներուն մէջ: Ասոր վրայ աւելցնենք տիեզերական աստապելներու վերջիլուծը, եւ կախարդական ու մոգական կարող մը խորհրդաւոր գիտելիքներ եւ խորհրդանշաններ:

«Գերբնական երգամբի ընթացքին, կը գրէ Լուի Սեյիէ, կը քանդուին այն սահմանները, որ կը բաժնեն իրական աշխարհը հագիներու աշխարհէն եւ կ'իրականանայ երգիլի եւ կեանքի համադրութիւնը»: Բանաստեղծին համար անցեալը կը գաղտնի անցեալ ըլլալէ: Անցեալը եւ ապագան կը ձուլուին յաւիտենական ներկային մէջ: Մարդկային մտքին մէջ գոյութիւն ունի կէտ մը, ուր կեանքն ու մահը, իրականը եւ երեւակայականը, անցեալն ու ապագան կը զաղրին հակասական տուեալներ ըլլալէ:

Ներվալի համար երազի աշխարհը անգոյ աշխարհ մը չէ, ան գոյութիւն ունի իսկապէս եւ կարելի է գոյն միաժողով իրական կեանքին հետ: Ներվալ ոչ մէկ ատեն կը կորսնցնէ իր գիտակցութիւնը. ան չի գրեր մութ ուժերու մը զուգորդումով, այլ՝ յատկապես թեմայի

*կը կառուցանէ իր հրազր եւ կը հաւատայ լաքածոյին ամէնէն յատկանշական հըն-  
անոր իրականութեան : չեակներուն թարգմանութիւնը եւ մեկ-  
Ստորեւ կու տանք «Լէ Շիմէր» հա- նարանութիւնը .*

**ԷԼ ՏՅՍՏԻՉԱՏՕ (ԼՖուածը)**

Ես խաւարամածն եմ, այլիմ, անխիթարը,  
Աֆիթէնի դուհւր՝ քանդուած աշտարակով :  
Միակ առողջ մէտած է, — եւ տալիս աստղազարդ  
Կը կրէ Մելամաղձատութեան սեւ արեւը :

Գերեզմանիս խաւարին մէջ, դուն որ գիս միթիթարեցիր,  
Ինձի վերադարձուր Փօփոխիքը եւ ծալը խալիւն,  
Այն ծաղիկը, որ կրնար սփոփել սիրտս  
Եւ այն որթատունկը, ուր սարփինամ կը միախառնուէր վարդին :

Ո՞վ եմ ես . Սիրոյ աստուածը, թէ Ֆեպիս . Լուսինեա՞նը, թէ Պիրան :  
Հակասու դեռ կարմիր է քաղաւիին համբոյրէն .  
Երագեցի այն քարայրին մէջ, ուր կը լռաք յաւերժահարսը :

Եւ յազքական՝ երկու անգամ կտրեցի մահուամ սեւ Գետը,  
Նուագելով հերթաքար Որփեոսի ճնարին վրայ՝  
Սրբուհիին հառաչները եւ պարիկին միջերը :

**Մեկնաբանութիւն**

Ճոխ ու բաղձակողմանի իմաստներ  
ուներն այս տողերը, զորս կարելի չէ բա-  
ցատրել դասական բանաստեղծութեան  
մը տողերուն պէս : Շատեր դիմած են  
այլբովազիտական խորհրդանշաններու,  
կախարդական գիրքերու, գիցարանու-  
թեան : Ամբողջ գիրք մը գրուած է այս  
14 տողերը բացատրելու եւ մեկնաբանե-  
լու համար : Իրնէ ժան կ'ընէ հետեւեալ  
արամբանական հաստատումը . «Այս  
հնչեակներուն մախամիւրը խտացումն է  
հեղինակին ամբողջ կեանքին, փորձա-  
տութեան, ըմբիւրցումներուն եւ մտա-  
ծումներուն» :

Այս հնչեակին կեդրոնական թեման  
բաւական բարձ է . անիկա հիմնուած է

ա՛յն աղերսին մէջ, որ կայ արուեստին  
եւ տառապանքին միջեւ, եւ արուեստին  
ա՛յն թաքուն զօրութեան մէջ, որ կարե-  
լի կը դարձնէ տառապանքին եւ մահուան  
նուաճումը :

Վերնագիրը՝ «Էլ Տեստիչատօ», սպա-  
ներէն բառ մըն է, որ կը նշանակէ ԼըՔ-  
ւածը : Այս բառը իբր բնաբան կը ծառա-  
յէր Ուոյթըր Սքոթի «Այվնիօ» վէպին  
հերոսներէն մէկուն :

Ամբողջ առաջին տունը եւ երկրորդ  
տունին առաջին տողը օժուած են յու-  
սահատական եւ խաւարային մթնոլոր-  
տով : Յետոյ տեսարանը կամաց-կամաց  
կը լուսաւորուի, շփոթի մատենելով բա-  
նաստեղծը : Իսկ կտորը կը վերջանայ  
սրբուհիին՝ Ատրիէնի եւ պարիկին՝ Ժե-  
նիի ողբերգումով :

**ԱՆԹԵՐՈՍ (Հակա էրոս)**

Կը հարցնես . իճե՞ս՝ այնքան գայրոյթ կայ սրտիդ մէջ  
Եւ ճկուն վզիդ վրայ գլուխ մը անընկճելի :  
— Գիտցի՞ր, որ ես կը պատկամիմ Աճթէյի սերունդին,  
Եւ մետա կ'ուզեմ յազքական աստուծոյն դէմ :

Այո՛, ես ամենցմէ եմ, գոթս կը հրահրէ վրիժառուն.  
Ան ցակատս դրոշմեց իր բարբոսած շրթունքով:  
Արեւի դալկութեան տակ, աւա՛ղ, արիւնտաժ,  
Յամախ կը զգամ Կայէնի անոգո՛ք կարմրութիւնը:

Ետովա՛, հանճարիդ վերջին գոյը,  
Մ'ն՛ որ դժոխքին խորքերէն կը պոռար. «Ո՛վ բոնութիւն»,  
Իմ ցախահայր Պապիւմ է, կամ իմ հայրս՝ Տակոմ... .

Անոնք երեք անգամ զիս մխրճեցին դժոխքի շուրթերուն մէջ,  
Եւ ես միմակս պաշտպանեցի Ամալիգիդ մայրս,  
Եւ անոր ոտքերուն տակ ցանեցի ծեր վիշտային ակաւանդը... .

**Մեկնարանութիւն**

Ըմբռնութեան երգն է այս Հնչեա-  
կը:

Ներվալ ինքզինքը կը դասէ պարտը-  
ւածներու, անիծեալներու շարքին: Էրոս  
սիրոյ աստուածն է, Անթէրոս՝ անոր Հա-  
կառակը: Անթէրոս կը խորհրդանշէ ա-  
րարչութեան մեծագոյն անիծեալը՝ Կա-  
յէնը: Կայ նաեւ ուրիշ անիծեալ մը, ու-  
րուն կ'ակնարկէ Ներվալ՝ Ամալէք, որ  
թողնիկն է Եսաիին, ժառանգազրկուա-  
ծը, ինճոյքն վատրուածը:

Էրոս եւ Անթէրոս ծնած են նոյն ա-  
տեն՝ պատերազմի շատուած Արէսէն  
եւ սիրոյ շատուածուհի Ափրոսիթէէն:  
Ներվալ ինքզինքը կը նոյնացնէ Անթէրո-  
սի: Ներվալ իր դժբախտ մայրը կը  
պաշտպանէ բնութեան անտեսանելի եւ  
անզուժ ուժերուն դէմ:

Գիցաբանութեան եւ առասպելներու  
դարձածութիւնը բանաստեղծութեան մէջ

կրնայ յաճախ տաղտկալի ըլլալ. բայց  
Ներվալի պարագային հին աստուածները  
եւ անցեալի դէժքերը կը դառնան մէկ-  
մէկ խորհրդանիշ, մէկ-մէկ դերակա-  
տար բանաստեղծի արտասովոր կեանքէն  
ներս:

Անցեալի ոչեկոյումները՝ ամբողջ  
ներկան կը ծանրաբեռնեն իրենց Հարուստ  
թելազրութիւններով եւ Ներվալի ճակա-  
տադրին կու տան յաւիտենականութեան  
տարողութիւնը:

Այս Հնչեակը ունի ուրիշ արժանիք  
ժըն ալ. անիկա ներշնչած է երկու մեծ  
բանաստեղծներ, երկուքն ալ գրեթէ Ներ-  
վալին ժամանակակից: Առաջինը Հան-  
ճարեղ Պօսլէնն է, որ Ներվալի օրինա-  
կին հետեւելով գրած է «Աստուանի իր-  
քանիտաները», «Արեւ եւ Կայէն», երկ-  
րորդը՝ մեծատաղանթ պատնասեան բա-  
նաստեղծ Լըքոնթ աը Լիլին է՝ Հեղինա-  
կը «Կայէն» երկարաչունջ քերթուածին:

**ԱՐՏԵՄԻՍ**

Տասներորդը վերայարձաւ... Ան միշտ առաջի՞մ է.  
Եւ միշտ միակը... կամ միակ պսիւր.  
Արդո՞ք, Թագուհի՞՜ ես, ո՛վ դուն, առաջի՞մը կամ վերջի՞մը:  
Թագաւո՞ր ես, ո՛վ դուն, միակ եւ վերջին սիրահարը...

Սիրէ ան՝ որ Քեզ սիրեց օրօրոցէն մինչեւ դագաղ,  
Ան՝ որ միմակ սիրեցի, զիս կը սիրէ գործագիւմ,  
Մահն է ան, կամ մահացած կի՞նը... ո՛վ հեշտանք, ո՛վ սամբանք,  
Անոր գրկած վարդը, դամասկալարզն է:

Ձեռքերդ լոյսերով գեղում, Եսփոյիցի սա՛րք աղջիկ,  
Բոսոր սրտով վարդ, Սրբուհի կիսուրի ծաղիկ  
Արգեօֆ գտա՞ր խաչդ երկինքներու ամայութեան մէջ:

Ճերմակ վարդեր, իջ՛ւ՛ք, դուք կ'աճարգէ՛ք մեր աստուածները,  
Իջ՛ւ՛ք, ճերմակ ստուերներ՝ բացալստ մեր երկինքէն:  
— Անդունդներու սրբուհի անկի սուրբ է ինձի համար:

Մեկնաբանութիւն

Արտեմիս անունն է յունական դիցաբանութեան ամէնէն խորհրդաւոր շատուածուհին: Որսի եւ բնութեան շատուածուհի, նոյն ասան խաւարի տիրուհի, մէջնորդուհի աստուածներու եւ մարդոց մէջեւ, միւս կոյս: 13 թիւը սուծի կախարհական զօրութիւն, ան մէջն է ու սկիզբը: Տասներորդ ժամը առաջին ժամն է: Ակնարկութիւններ կան ժերարի ճանչցած կորդ մը կիներու մասին: Միջնագային գրականութեան ամէնէն խորհրդաւոր եւ ամէնէն պեղեցիկ դո՛ւարներէն մէկն է «Արտեմիս» հնչեակը, անհիկա գլխապայտոտ տուող յորձանք մըն է, ուր կը խառնան ներվալի բոլոր տեսիլները, բոլոր երազները, բոլոր

ակնկալութիւնները: Դէ՛մ յանշիման կը կանգնին ալքիմիազիտութեան թագաւորն ու թագուհին, վարդը եւ խաչը, կրակի եւ ջրիտունէութեան աշխարհները, սիւրոյ բազմադոնութիւնը եւ միութիւնը, ջրիտունէութեան կոչը եւ կայէնական ըմբոստացումը:

Այս բոլորին հետ միասին, կայ նաեւ ժամանակի թեման, ժամերու շուրջաւորը, որուն շարունակութենէն, տիեզերքի կեդրոնին վրայ, պիտի ծնի յաւիտենական ու միակ ժամը, որ իր մէջ պիտի խտացնէ միւս բոլոր ժամերը:

Գեղարուեստական ստեղծագործութիւնը կը նմանի մագնիսի մը, որուն շուրջ երկաթէ փոշիներու պէս կը հաւաքուին բաւերը՝ բանաստեղծին կամ ջին հնարանդելով:

Մ Ի Ր Թ Օ

Կը մտածեմ՝ ինչ մասինդ, Միրթո՛, աստուածային կախարդուհի,  
Բարձրամիտ ֆոփոխիփին՝ հագար լոյսերով փողփողում,  
Արեւիքի ճառագայթներով ողողուած ինչ ցակտիդ,  
Ոսկեգոծ հիւսկերուդ՝ խառնուած սեւ ողկոյզներուն:

Քու բաժակիդ մէջ է, որ խմած էի արեցութիւնը,  
Ինչպէս նաեւ ծպտում աչքիդ խուսափուկ փայլին,  
Երբ կ'աղօթէի Տիանիզոսի ռաբերուն առջեւ,  
Որովհետեւ Մուսան զիս դարձուցած էր Յունաստանի գաւակ:

Գիտեմ ինչու այնտեղ բարբոքեցաւ հրաբույժը...  
Երէկ, ճիւղում ու թեթիւ ստեղ ղպաւ անոր գագաթին  
Եւ հորիզոնը, յանկարծ, ծածկուեցաւ մոխիրներով:

Այն օրէն, երբ նորման դու քս մը վիշրեց կաւէ աստուածներդ,  
Անդադար, վիրգիլիոսի դափնիին ճիւղերուն տակ,  
Ճերմակ հորբանսիան կը միանայ կամաչ մրտեմիին:

Ո Ս Կ Ի Տ Ո Ղ Ե Ր

(Հատուած)

.....

Յարգէ անասունին մէջ ապրող գործօն ոգին:  
Իւրաքանչիւր ծաղիկ հոգի մըն է բացուած բնութեան մէջ.  
Սիրոյ խորհուրդ մը կը հանգչի մետաղէ գանգուածին մէջ:  
Ամէն ինչ զգայուն է: Եւ ամէն բան կ'ազդէ էութեանը վրայ:

Զգուշացի՛ր. կռոյ պատին մէջէն այժ մը քնդ կը լրտեսէ.  
Անշարժ միւթն իսկ ունի իր սեփական լեզուն...  
Մի՛ գործածէր գայն անարգ նպատակի մը համար:

Յամախ խաւար էակին մէջ կ'ապրի քաբուն աստուած մը.  
Եւ ինչպէս կռպիրով ծածկուած նորածինի այժ մը,  
Հարագատ հոգի մը կ'անի քարերու կեդեւին տակ:

Մեկնաբանութիւն

Առաջին հնչեակը՝ «Միրքօ», կը խորհրդանշէ Հեթանոսութիւնը եւ անոր պարտութիւնը Հարաւային Իտալիոյ մէջ, Նորման Գուբերու կողմէ:

Իսկ երկրորդ հնչեակը կը խտացնէ յոյն փիլիսոփայ եւ խորհրդախոյզ Պիւթակորասի զաղափարները, թէ՛ նոյնիսկ Հանքային Նիւթերը, քարերը եւ մետաղները ունին հոգի մը եւ կը տեսնեն ու կը զգան:

«Օրէկիւն»

«Օրէկիւն» վէպ չէ, պատմութիւն չէ, յուշագրութիւն չէ, այլ տեսիլքներու շարան մը, ուր կը խառնուին կեանքն ու երազը՝ անգրեթէ կրային մթնոլորտի մը մէջ, լուսաւորուած բանաստեղծական անգերագանցելի էջերով:

Ինչպէս ըսինք, «Օրէկիւն»-ի ձեռագիրը դանուած էր Ժերարի գրպաններուն մէջ, իր անձնասպանութեան օրն իսկ: Չանապան մեծութեամբ թուղթեր ու թղթիկներ, որոնց լուսանցքին վրայ կային կարգ մը տարօրինակ գծագրութիւններ: Ըստ մասնագէտներուն՝ Ներվալ «Օրէկիւն» գրած է 1853 եւ 1854 թուականներուն, երբ կը գտնուէր Տօբթ. Պլանչի

հեռանդանոցին մէջ, այն պահերուն, երբ միտքը յատակ էր: Անհաւանական չէ, որ զործը վերջնական ձեւ առած է սրճարաններու սեղաններուն վրայ, երբ Ներվալ անխոհեմօրէն դուրս կու գար բուժարանէն եւ կը թափառէր տունէ տուն եւ փողոցէ փողոց:

Այս գրութեան նիւթը կարելի չէ պատմել քանի մը տողերու մէջ, որովհետեւ անիկա կը պարունակէ Ներվալի ամբողջ կեանքը, յուսախաբութիւնները, վիշտերը, ուրախութիւնները, երազներն ու ցնորքները:

Գործը կը սկսի Հետեւեալ յատկանշական նախադասութեամբ. «Երազը երկրորդ կեանք մըն է»: Ուրեմն այս գործը երազի մը ողկոյնումն է եւ իտալականացած իրականութեան մը վերաբառագրութիւնը, ուր բանաստեղծին շուրջ կը զառնան այն իրական եւ առասպելական կերիները, որոնք լուսաշող աստղերու պէս լուսաւորեցին իր կեանքը մանկութենէն մինչեւ մահ. մայրը, Ատրիէն, Սիլվի, ձենի Գոլոն, Մարի Փլէյնէլ, Իզիս, Արտեմիս, Միլթօ եւ շատ մը ուրիշներ: Եւ զարմանալին հոն է, որ այս ցնորական աշխարհին մէջ, ուր իրականութիւնն իսկ կ'ալլափոխուի, Ներվալ կը մնայ յատկապէս ու արամբարանող: «Այդ օրէն ի վեր, ամէն ինչ ինձի կը

ներկայանար երկու դիմագծով, առանց որ միտքս կորսնցնեմ իր բանականութիւնը» :

*Առաջին էջէն իսկ՝ Ներվալ կը զգայ մահուան անդիմադրելի կանչը: Բայց այնքան ստեղծ, որ չէ յուսահատած մահացած սիրուհիներուն էութիւնը զտնելու ուրիշ աղջկան մը մէջ, ոն կը մերժէ պատասխանել մահուան կանչին:*

*Գործողութեան մեծագոյն մասը տեղի կ'ունենայ ոստիկանատան մը խցիկին մէջ, ուր Ներվալ արգելափակուած էր փողոցներու մէջ ունեցած իր տարօրինակ եւ անհեթեթ վարմունքին համար: Երկնցած կարծր մահիճին վրայ, անտեղեակ՝ կարմնաւորի իր վիճակին, ան թրտիչ կու տայ իր երեսակայութեան եւ կ'աղբի սնցեալի զրուագիւնը եւ, կրակային մթնոլորտի մը մէջ, կը վերսիւնէ իր կեանքին ամէնէն յասկանջական զէպքերը:*

*Ներվալ ինքզինքը կը զտնէ յանկարծ իր մանկութեան վայրերուն մէջ:*

«Կը գտնուի պարտզի մը մէջ, ուր կային ողկոյզներով ծանրաբռնուած որքատուկներ: Տիկին մը կը փախար արիւնքներուն տակ: Հետեւեցայ անոր եւ միասին գտնուեցանք բացառեալ մը մէջ, ուր կը բուսնէին վայրի ծաղիկներ՝ հաստաբստ ծառերու շտփբում շուրջ: Տեղանք կանգնած էին կոտորուած աւսեցած արձաններ, ժայռեր, որոնց տակէն կը ցայտէր անապակ ջուրի ակ մը, որ կը հաւաքուէր աւազանի մը մէջ:

«Տիկինը, որուն կը հետեւէի, բարձրացուց իր հասակը, հայելիացնելով թափշէ իր երկար շրթագեղարկած ծաւիւրը, եւ իր թերեւս գրկեց դամասկալարդի մը բարձր ձողը, եւ սկսաւ մեծնալ լուսնին լոյսիմ տակ, այնպէս որ՝ կայացկաւանց ամբողջ պարտզը կը միաձուլուէր անոր եւ ծաղիկները կը գարգարէին իր շրթագեղարկ, մինչ իր թերեւս եւ դիմագիծը ձեւ կու տային երկինքի բոսոր ամպերուն: Յետոյ անեծտացաւ իմ այնքիս, կարծէք կը կորսուէր իր իսկ մեծութեանը մէջ: «Ո՛հ, աղաղակեցի, մի՛

մեկնիր, որովհետեւ բնութիւնը պիտի մեռնի քեզմով»:

«Այս ըսելով՝ սկսայ արագ փախի փուշերու եւ տատակներու մէջ անոր խուսափող ստուերը բռնելու համար, բայց գայթեցայ կնոջական կիսանդրիի մը վրայ: Վստահ էի, որ այս կիսանդրին զայն կը ներկայացնէր... Այն ատեն ողկատեցի, որ պարտզը վերածուած էր գերեզմանացի մը: Ձայներ կ'ըսէին. Տիեզերքի խաւարի մէջ է»:

*Ներվալ պիտի իմանար, որ այս երազը կը զուսակէր Օրէլիայի մօտալուտ մահը: Վերած Օրէլիայ կը պատկանէր ինծի, անիլի քան երբ կ'այրէր»:*

*Յետոյ Ներվալ կը պատմէ իր ճամբորդութիւնները, վերադարձը եւ խելագարութիւնը: Բուժարանի սենեակներուն կամ պարտէզին մէջ Օրէլիայի գոյութիւնը տիրական է իր երեսակայութեան վերջայ: «Փորձեցի կախիմ մէջ յաւերժացնել անոր մարմնին ձեւը, պարտէզին մէկ անկիւնը: Բայց ամէն անտու պէտք էր կրկնէի նոյն գործադրութիւնը, որովհետեւ խեղճերը՝ նախանշելով իմ երջանկաբեանս, հաճոյք կը զգային ճանդիլով անոր պատկերը»:*

*Յետոյ՝ բանաստեղծին երեսակայութիւնը զինք կը տանի աստղերու հոլիին մէջ, ուր հանդիսատես կ'ըլլայ աշխարհներու ստեղծման եւ աշխարհման եւ բարի ու չար ոգիներու պատերազմին, ջրհեղեղին, տապանի շինութեան:*

*Յուսեցին մէջ արգելափակած են ուրիշ մարդ մը, որ իրեն կը նմանի: Այն ատեն Ներվալ կ'անդրադառնայ, որ մարդը երկուք է. «Իմ մէջս կը զգամ երկու անձ», դրած էր Եկեղեցւոյ Հայրերէն մէկը:*

*Այս դադափարը կը սարսափեցնէ բանաստեղծը, որովհետեւ այն երկու անձերէն մէկը բարի է, միւսը՝ չար: «Արդեօք ես բարի՞ն եմ, թէ չարը»: Ինքնիրեն հարց կու տայ ժերմար: «Եթէ բարին եմ, ուրեմն չարը միւսն է, այն մէկը, որ Օրէլիան խլած է ինձմէ»:*

*Այս դադափարը կը սարսափեցնէ զինք եւ կ'առաջարկէ պայքարել միւսին*



դէմ եւ անկէ իւր իր յաւտենական սիրուէին: Բանաստեղծին միտքը կը շարունակէ իր երազային ճամբորդութիւնը: Կը հասնի հսկայ շէնքի մը մէջ, ուր դործաւորներ կ'աշխատին:

«Այդ պահուն գործաւորներէն մէկը երեցաւ: Ձեռքին բռնած էր երկաթէ անոց մը, որուն մէկ ծայրը կազմուած էր շիկացած գունտով մը: Ուզեցի վրան յարձակիլ, բայց շիկացած գունտը կը սպառնար գլխուս... Միւս գործաւորները զիս կը ծաղրէին իմ անկարողութեան համար: Այն ատեն գացի մինչեւ սրահին կեդրոնը, հոգիս զեղուն անասնի հարստութեամբ մը եւ թեւս բարձրացուցի՝ մագական նշան մը ընելու համար: Այն ատեն լսեցի կնոջական ճիւղ մը թրթռում ու սրտակեղծ եւ արթնցայ ընդաստ: Մտնկի ինկայ եւ սկսայ աղօթել...»



*Օրէկիայի երկրորդ մասը կը սկսի յուսահատական նախադասութեամբ:*

«Եւրիսիկէ՛, երկրորդ անգամ կորսընկայր...» Ինչպէս ցոյց կու տար առաջին մասին վերջին նախադասութիւնները, ժերար կ'անդրադառնայ, որ Մահը յաղթելու միակ ապաւէնը իր հայրերուն Աստուածն է. քրիստոնէութեան Աստուածը: Բայց Ներվալ երկար տարիներ մեղսանած է Աստուծոյ դէմ՝ հետեւելով զանազան հաւատամքներու եւ կուռքերու: Ինչպէ՞ս պիտի արժանանայ ներումի:

«Կը հասկնամ հիմա, որ ես նայեցուրեցի արարածը Արարիչէն. աստուածացուցի սէրս եւ պաշտեցի գայն հեթանոսական ծէսերով, երբ իմ սիրուելիս վերջին հատաչին մէջ կը լռուէր Քրիստոսի անունը: Բայց քրիստոնէութիւնը կ'ըսէ, որ Աստուած կրնայ դեռ ինձի ներել:

(Շար. 3)

Կրնայ զայն ինձի վերադարձնել, եթէ խոնարհիմ իր առջեւ...: Կը քափառէի փառացներում մէջ: Հանդիպեցայ յուզարկաւորութեան մը, որ կ'ազգուէր դէպի այն գերեզմանատունը, ուր առ քաղաւած էր: Հետեւեցայ յուզարկաւորներուն: Ժամերով փնտսեցի Օրէկիայի շիրիմը, բայց չկրցայ գտնել: Ձեռնարձակեցայ պահուկներուն ըսել մեռելիքի անունը, որովհետեւ ոչ մէկ իրաւունք ունէի անոր ամսին վրայ... Կը գտնուէի ամայի վայր մը. կը ֆալէի ֆարերու եւ փուշերու մէջէն: Ժամ մը հնչեց: Այլեւս շատ ուշ է, ըսի ինքզինքիս: Ձայներ պատասխանեցին. «Ան կորուած է այլեւս»: Այս՛, ան կորուած է ինձի եւ բոլորիս համար:

« — Աստուած իմ, Աստուած իմ, ներէ՛ ինձի, միայն ու միայն իրե՛ն համար: »

« ..Գիշեր մը, երաշալի տեսիլ մը ունեցայ: Աստուածունքի երեցաւ ինձի ու ըսաւ. «Ես Աստուածամայրն եմ, մայրրդ եւ այն բալոր կիները, գար սիրեցիր զանազան կերպարաններու տակ: Քու փորձութիւններդ վերջ պիտի գտնեմ»: Ուրախութիւնս այնքան մեծ եղաւ, որ պատասխանեցի. «Այս դիւեր դուն ինձի այցելեցիր»:

«Օրէկիայի վերջին էջերը կը հանդիսանան դերիբազաւո բանաստեղծութեան կատարեալ նմոյշներ:

«Ո՛վ Մահ, ո՞ւր է յաղթանակդ: Երբ Մեքիան կը ֆալէր մեր երկուքին մէջտեղը: Ասող մը փայլեցաւ յանկարծ եւ ինձի յայտնեց աշխարհին եւ աշխարհներուն գաղտնիքը...»:

«Օրէկիայ» սեւ ազամաններով եւ բոսոր յակինթներով զարդարուած գրական գոհար մըն է, որուն զեղեկութեան հազիւ կը մօտենան իտիալ Ալան Փօ մը, Գոկոլ մը, կամ Ուիլեյմ Պլէյք մը:

ՆՈՒՊՈՒՐ ԶԱՐԽՈՒՏԵԱՆ

Լ. ՄԿՐՏՁԵԱՆ

**ԲԱԶՄԱՏԱՐՐՈՒԹԵԱՆ ԵՒ  
ԲԱԶՄԱԿԵՆՏՐՈՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԵՐԸ  
ԱՐԴԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**



Ժամանակակից աշխարհում, ընթացիկ մամուլի ու պարբերական հրատարակությունների և առաւելագէտ հասարակաշխարհային գրականութեան էջերում յաճախ է հանդիպում «պլիւրալիզմ» արտայայտութիւնը, ինչ որ նախընտրելի է թարգմանել «բազմաարտոյութիւն» բառով՝ յատկապէս այն դէպքում, երբ վերաբերում է հասարակական կեանքին: Թէեւ «պլիւրալիզմ»ը կարող է գործածուել զանազան առումներով և տարբեր առիթներով, ներկայումս դա հիմնականում ընկալւում է երկու ուղղութեամբ՝ փիլիսոփայական և հասարակագիտական:

Այդ հասկացութիւնը իր փիլիսոփայական գործածութեամբ սովորաբար կապւում է Լայբնիցի մշակած համակարգի և հետագայում ասպարէզ մտած փիլիսոփայական մի շարք այլ զարոյցներին հետ, մինչև մեր ժամանակները: Պարզ է, որ մասնաւնդ զմարքս-լենինեան մոնիստական (միարմատեան) աշխարհայեացքը դաւանողները տեսականորէն ու գործնականում դառնում են «պլիւրալիստներին» հակառակ ճամբարում, քանի որ վերջիններս այս կամ այն պատճառաբանութեամբ մերժում են աշխարհի մոնիստական, նոյնիսկ պարզ «դուալիստական» (երկարմատեան) ըմ-

բանումը, թէեւ «դուալիզմ»ը ինքնին փիլիսոփայական «պլիւրալիզմ»ի ամենատարրական առիճանն է և երակէտը: Իսկ այս յօդուածում սկզբից ևեւթ մի կողմ պիտի թողնուի հարցի փիլիսոփայական ըմբռնումը, քանզի նպատակ է դրուած առաջ քաշել սոսկ հասարակագիտական առանցքային դրոյթներ:

Ի հարկէ, երբ նկատի ենք առնում, որ «պլիւրալիզմ»ը, որպէս այդպիսին, հասարակագիտական շրջանառութեան մէջ է դրուել ընդամէնը 20րդ դարում՝ 60-70 տարուց ի վեր, դա բնաւ չի նշանակում, թէ հասարակական կեանքի «պլիւրալիստական» երեւոյթը նորութիւն է: Ընդհակառակն: Մարդկութեան կեանքի պատմութիւնը ըստ էութեան բազմաթիւ ուղիների և ինքնավար գործօնների մշտական ու փոխազդած ազդեցութեան պատմութիւն է: Դա այդպէս է եղել ոչ միայն աշխարհագրական դժուարների ինքնին հասկանալի բազմազանութեան հետեւանքով: Եթէ այդպէս չլինէր, ապա հասարակական համակարգի որեւէ քարացած ձեւ «կարաբնագործւէր» անիմանալի հրաշքով և նոյնը կը մնար յաւիտենից յաւիտեան: Մինչդեռ նման բան չի եղել և չկայ: Ինչի՞ նշան են, առեւ, երբեմնի «բազմապետութիւնները», աւատաստիրական ժամանա-

կաշիջանի խայտաբղէտ ու աստիճանակարդուած իշխանութիւնները կամ վերջին դարերի ժողովրդավարական շարժումների ծնունդ բազմատեսակ ներհասարակական ինքնավար կազմակերպութիւնները, եթէ ոչ բազմատարրութեան կենսական իրողութեան, երբ դուժարելիներն են տեղափոխուել, բայց գումարը դուժար է մնում: Բազմատարրութիւնը, մասնաւոր ախոր, անպայման որոշակի ու համասեռ ուժերի սլաքների ներդաշնակման եւ հաւարական ձեռնարկների ժխտումը չէ, ոչ էլ կենտրոնախոյտ արամալրութիւնների համախիչ: Դա պարզապէս նշանակում է, թէ քանի որ իւրաքանչիւր, մասնաւոր դարդացած ու բարդ կեանքով ապրող հասարակութիւն արդէն իսկ ի բնէ բազմատարր է, ուրեմն այդ պարագան պէտք է արտայայտութիւն դնի եւ հասարակական կեանքի կառուցուածքի, կազմակերպման ու ձեւերի մէջ:

Այգուհանդերձ, թերեւս պատահական չէ, որ յատկապէս մեր դարում երեւան եկաւ «պլիւրալիզմի» ուժանցը, որպէս տեղութիւն եւ մարդկային հասարակութիւնների կեանքը ուսումնասիրելու ու քննութեան առնելու սկզբունք: Դա մի տեսակ հակազդեցութիւն է ամբողջատիրական ու բռնատիրական ուժերի աշխուժացման նկատմամբ: Դա փաստորէն շատ աւելին է նշանակում, քան մի պարզ բառային նորամուծութիւն եւ համապատասխան բառակազմութիւններ: Դա ու բառակազմութիւնների ազդերը: Խօսքը վերաբերում է ոչ այնքան իրերի ու երեւոյթների քանակական «յոգնակիրութեան» ու «բազմակիրութեան», ինչ որ տեսանելի է ամէնքին, այլ հասարակութիւն կազմող մարդկային տարրերի որակական առանձնաշատկութիւններին, անյուժելի եւ անարճելի ու սեփական ուղու հետամուտ ձգտումներին: Եւ հենց դրա համար էլ ըստ իս նախընտրելի է պլիւրալիզմը՝ ներկայացնել ամբողջ հասարակութեան բազմատարրութեան իմաստով, որպէս բազմաբնուէր արժէքային միաւորների զուգորթ:

Անցեալում բազմատարրութեան հարցը, ամենայն հաւանականութեամբ, այլ ձեւով է ներկայացել, քան այսօր: Այն ժամանակ, երբ ունէ հասարակութեան յաջողում էր որոշակի տարածութեան վրայ հիմնը հիմնել, լայն իմաստով վերցրած համայնքային կեանքով ապրել եւ իր կուրքերը կամ աստուածներին պաշտել, նրա հիմնական, եթէ ոչ միակ մտահոգութիւնն էր քաղաքականապէս սահմանադատուել ուրիշներէջ եւ ինքնուրոյն ամբողջական միաւոր դառնալ: Կեանքի մատչելի եւ ոչ բարդ պայմանները նպատակ էին, որ ներքին բազմատարրութեան շեղակի հարց շտապի կամ էլ գէթ, ծաղելու ղեկը, յատուկ անհանգստութեան պատճառ լծառայի: Այդ ղեկը բազմատարրութեանը բոս էութեան հորիզոնական արտայայտութիւն ունէր, այլ ոչ թէ ուղղահայեաց կամ ներխառնային:

Սակայն դարերի ընթացքում քանի՞ քանի՞ անգամ խախտուեցին սահմանները եւ յաճախ այս կամ այն գոտում նոյն մականի տակ դրուեցին մարդկային դանաղան խմբեր, որոնք նոյն ձեւով մտածելու եւ ապրելու, նոյն գաստուածներին պաշտելու» ոչ մի հիմք չունէին: Ասենք հենց նոյնիսկ միեւնոյն, բայց մեծազանգուած հասարակութիւնների մէջ զնայով աւելի շեղուեց արամալրութիւնների, մտայնութիւնների, ձգտումների տարատեսակութիւնը, տարբերացողութիւնը: Եւ ամէն անգամ բռնութեամբ յաղթողը, երկրից դուրս կամ երկրի ներսում, աշխարհի որոշ մասերում մինչեւ հիմա էլ նորահասակներին ստիպում է ո՛չ միայն հնչուն դրամով հարկեր վճարել ու գանազան պարհակներ կատարել, այլեւ ճանաչել իր մենաշուք նորհեալ գերակայութիւնը հիւսաւակտն», «գաղափարական», «բարոյական» եւ այլ տարբերակներում: Հասարակութեան բոլոր խաւերի գոյութիւնն ու պահանջները հաշուի չառնելու այդպիսի տրամադրութիւնը իր գերադոյն արտայայտութիւնն է գտնում 20րդ դարի ամբողջատիրական վարչակարգերի եւ գաղափարախօսու-

թիւնների մէջ: Ահա՛ եւ այս պայմաններում յատուկ նշանակութիւն է ձեռք բերում բազմատարրութեան երեւոյթի գիտակցութիւնն ու այդ ուղղութեամբ գործելու կամքը: Ահա թէ ինչու բազմատարրութեան սկզբունքը առաջ է քաշուում որպէս հակադրութիւն ամբողջատիրութեանը:

Տարակոյս չկայ, որ իւրաքանչիւր հասարակութիւն ապրելու համար կազմակերպուելու կարիք ունի եւ միայն կազմակերպուածութիւնն է նրա կեանքը արդիւնաւէտ ու իմաստալից դարձնում: Իսկ կազմակերպուելն էլ իր հերթին միաժամանակ շատ բան կարող է նշանակել: Կայ դիտակէց ու կամաւոր կազմակերպման ճանապարհ, կայ եւ հակառակը՝ բռնութեամբ այլեւայլ վանդակների մէջ տեղաւորում: Դրանք նոյնը չեն ո՛չ շարժառիթներով, ոչ էլ արդիւնքներով: Կազմակերպուել նշանակում է համախմբուել, իսկ բազմատարրութեան սկզբունքը չի բացառում համախմբուելու կարիքն ու հնարաւորութիւնը, այլ այդ ուղղութեամբ բնթանալու իրաւունքը վերապահում է բոլորին ու մերժում է ուսմանց՝ ուրիշների վրայ տիրաբար իշխելու յաւակնութիւնը: Պատմութեան ընթացքում, կրօնական կամ այլ դրօշի ներքոյ, շատ ուսմունքներ են ստեղծուել ու տարածուել, նպասակ ունենալով միասնական վարքագիծ սահմանել բոլոր մարդկանց համար, միասնական ուղիով առաջնորդել նրանց, սիրոյ եւ ատելութեան նոյն թիրախները հրամցնել եւ միասնական արժէքների ծնունդ տալ: Իսկ այսօր ապացուցելու հարկ չկայ, որ այդ կարգի ուսմունքները, նոյնիսկ որքա՛ն ժամանակ ամենայայն ճանաչում դասնելու դէպքում, ոչ մի տեսական միասնականութիւն չեն ապահովել:

Եւ մարդկութեան գոյութեան այսօրուայ փուլում, աւելի քան երբեւէ, կարիք է զգացւում զգուշանալ կեղծմիասնական պատրանքներից ու իրականութիւնը տեսնել իր իսկութեան, բարձրագոյնութեան մէջ, ըստ այդմ էլ հաշուի առնել բազմատարրութեան հրամայական

նը: Դա առուել յուսալի ճանապարհ է այս կամ այն աստիճանի, այս կամ այն օղակի կազմակերպուած միասնութեան հասնելու համար, քան հասարակութեան բաղկացուցիչ տարրերի ինքնակայ գոյութիւնն անտեսելը, նրանց մէկ գոյնով ներկելն ու նոյն առասպելներով կերակրելը, նրանց համար միակողմանի եւ արհեստական պարտազիր հեղինակութիւններ ստեղծելը: Իսկապէս իմաստ ունի հասարակէս՝ թէ՛ հասարակական ու քաղաքական եւ թէ՛ մշակութային, գաղափարական ու բարոյական կեանքի ասպարէզներում: Քանզի նոյն հողի վրայ եւ նոյն ժամանակ սովորաբար կողմնակողմ ապրում են, գործում ու իրենց հասկացած ձեւով ինչ-որ բան ստեղծում բոլորովին այլազան չափանիշներ ունեցող էակներ: Լաւագոյն հասարակութիւնն այն չէ, որ ոմանց աստուածացնում, իսկ միւսներին ստրկացնում է, այլ այն, որը ապրելու միջավայր է հանդիսանում անխտիր բոլորի համար, նրանց թանձրացնելով փոխյարաբերութիւնների հարցի լուծումը թողնելով հենց իրենց, ապահովելով միայն ընդհանուր կարգուկանոնը եւ օրինականութիւնը:

Ինչի՞նչ այդ, ինչպէս միշտ, այսօր էլ կողք կողքի ապրում եւ աօրեայ շրփման մէջ են գտնւում, կամայ թէ՛ ակամայ, նաեւ ձեռներէջն ու անճարակը, խելացին ու տկարամիտը, վսեմն ու զլուսեհեղը, յոյսի ու խաւարի երկրպագուները, իրենց բոլոր միջանկեալ երանգներով ու աստիճաններով: Իւրաքանչիւրը, բնականաբար, իրեն է նախապատուութիւն տալիս եւ ներքնապէս առնուազն մտովին մերժում միւսների, այսինքն՝ ոչ նմանների ապրելաձեւն ու ձգտումները եւ նոյնիսկ գոյութիւնը: Իսկ բոլորն էլ իրական ու անբաժանելի հասարակութեան մաս են կազմում եւ իւրաքանչիւրի ենթակայական ճաշակն ու ըմբռնածը վաւերական ու անփոխարինելի է իր համար: Այստեղից է սկսւում խնդրի բարդութիւնը: Ո՛չ կարելի է անտեսել իւրաքանչիւրի ատանձնայատկութիւններ

բը, ոչ էլ ամբողջ հասարակութեան ներդաշնակ գոյութեան պահանջները: Ինչպէ՞ս հաշտեցնել առանձին անհատներին ու խմբերին եւ ամբողջ հասարակութեան փոխյարաբերութիւնները: Ներկայումս ժողովրդավարական երկրներում այդ ուղղութեամբ մտածում եւ գործում են, երակէս ունենալով բազմատարրութեան սկզբունքը: Հետեւապէս այնտեղ բաղմատարրութեան սկզբունքը ընդունելու կամ մերժելու հարց չկայ, այլ կայ միայն նրա կենսագործման, միջոցներին հնարաւոր կատարելագործման հարց:

Տարբեր է միեւնիւր ամբողջատիրական, ինչ որ այսօր փաստօրէն նշանակում է՝ կոմունիստական երկրներում: Այնտեղ ո՛չ տեսականօրէն, ոչ էլ գործնականում չի ընդունւում բաղմատարրութեան սկզբունքը: Հարկ չկայ բացատրելու, թէ ինչու: Միայն հարկաւոր է ընդգծել, որ հակառակ բոլոր պաշտօնական յայտարարութիւններին ու հաստատագրումներին, կոմունիստական աշխարհում եւս գոյութիւն ունի բազմատարրութեան հասարակական պահանջ, ինչ որ արտայայտութիւն է դառնում աշխարհին յայտնի դանդաղան ձեւերով: Աւելին՝ զբաղմատարրութեան» փոխարէն գոյութիւն ունի եւ զբաղմակենարոնութիւն» (գալիթցեհորիզմ) արտայայտութիւնը, սրբ կոմունիստական աշխարհից դուրս առհասարակ գործնական որեւէ իմաստ չունի, մինչդեռ վերին աստիճանի յատկանշական է կոմունիստական իրականութեան համար եւ ինքնին շատ բան է վկայում: Ընդամէնը 15 տարի առաջ էր, որ որոշակի իմաստով չըջանառութեան մէջ դրուեց զբաղմակենարոնութիւն» հասկացութիւնը եւ զնալով աւելի պարզուեց, որ դա պատահական, ճարտասանական արտայայտութիւն չէ:

Յայտնի է, թէ երկու ժամանակ ինչ էր նշանակում Մոսկուան համաշխարհային կոմունիստական շարժման համար, իր կոմիտեներնով եւ այնով: Բայց Միկրորդ Աշխարհամարտից յետոյ նրա դերը, որպէս միակ զինարոնին», աստիճա-

նորաբ նուազեց ու միեւնիւր: Առաւել տարածում գտաւ իշխանութեան գլուխ դառնուող կամ չդառնուող իւրաքանչիւր կոմկուսակցութեան զանախութեան» եւ «զերիշխանութեան» գրոյթը: Ընդէ է, աշխարհի շուրջ 90 մեծ ու փոքր, յաճախ մանրանկար կոմկուսակցութիւնները, իրենց ընդհանուր հաշուով մօտ 50 միլիոն անդամներով, միեւնոյն վերաբերմունքը չունեն այդ հարցի նկատմամբ: Բայց դա էլ հենց նշանակում է, որ ներքին ճեղքերն ու տարամիտումները իրական են եւ զբաղմակենարոնութեան» պահանջն էլ հիմնաւոր: Սկիզբից եւեթ արժէ նշել, որ բաղմակենարոնութիւն նշանակում է բուն կոմունիստական շարժման ներքում որեւէ միակ ու մենաշնորհալ կենտրոնի անընդունելիութիւն եւ, հարկ եղած դէպքում, մի քանի գօտային կենարոնների ստեղծում, առանց դիպչելու կոմունիստական ուսմունքի եւ ուղեգծի հիմնական ու այրբենական գրոյթներին: Դա, անշուշտ, իսկական ժողովրդավարութեանը քիչ թէ շատ փոխարինող՝ գէթ նուազագոյն հաւաքական ինքնավարութիւնն էր ապահովելու ճիգ է, բաղմատարրութեան ոչ ու համաձայն, կեանքի թելագրանքով:

Քրաղմակենարոնութիւն» արտայայտութիւնը պատմականօրէն կապուած է իտալական կոմկուսակցութեան երբեմնի ղեկավար Պալմիրո Տոլիատիի անուն հետ: Խորհրդային Միութեան կոմկուսակցութեան 1956 թուի սկզբի 20րդ համագումարում, որտեղ ներկայ էր եւ Տոլիատին, Խրուշչովն արտասանեց իր նըշանաւոր պաղտնի ճառը եւ այդ պահից սրոյ կերպարանք ստացաւ Մոսկիւի պրօնակազմերման հետամուտ շարժումը: Եւ ահա նոյն թուի Յունիսին, Տոլիատին հարցազրոյց ունեցաւ իր կուսակցութեան «Նաւոլի արգոմենտի» պարբերականի աշխատակցի հետ՝ հուշակերտ բաղմակենարոնութեան սկզբունքը միջազգային կոմունիստական շարժման մէջ: Մի շարքից անց՝ նա հանդէս եկաւ իր կուսակցութեան կենտրոնի լիակազմ նիստում, խորհրդային կոմկուսակցութեան

այն ժամանակուայ ղեկավարներին մեղադրելով, թէ նրանք Ստալինին մեղաակից են եղել եւ թէ պէտք է կայուն երաշխիքներ տրուեն ստալինեան ժամանակի սարսափները երբեւէ կրկնուելու զէմ: Այդ իւրաշատուկ մարտահրաւէրը, քնականարար, զժգոհութիւն պատճառեց խորհրդային ղեկավարներին եւ նոյն ժամանակ զարմացրեց Համաշխարհային Հասարակայնութեանը: Տոյիտին այդ առթիւ միջանկեալ յայտարարեց, որ 1951 թուին Ստալինը կամեցել է իրեն Հեռացրել տալ Իտալիայի կոմկուսակցութեան ղեկավարութիւնից, եւ այդ հարեւանցի յայտարարութեան իմաստը ամբողջովին պարզուեց միայն 14 տարի անց՝ 1970 թուի Մարտին:

Թերեւս պատահական չէ, որ այդպիսի կտրուկ յայտարարութեամբ Հանդէս եկաւ յատկապէս Տոյիտին: Նա ՅՍԽՍՀ-ի Թուրքիայի ղեկավարներին, Մուսոլինիի իշխանութեան տարիներին, ապրել է վտարանդիութեան մէջ՝ Մոսկուայում, եւ իր աչքով տեսել ստալինեան սարսափները: Ժամանակակիցների վկայութեամբ, Տոյիտին, որը կրում էր էրկուլի կեղծանունը, կոմիտեաներական ղեկավարների շարքում աչքի է ընկել իր մտաւոր պատրաստութեամբ ու բազմակողմանի Հետազոտութիւններով, ինչպէս եւ վերապահ ու զգոյշ առօրեայ դարբանով: Իսկ Տիտոյի վկայութեամբ, Ստալինը նրան չափազանց մեղմ ու ազատախոհ է համարել եւ Հեղինակով բնութագրել որպէս «մի պրոֆեսոր, որը կարող է լաւ յօդուած գրել թերթի համար, բայց բացարձակապէս անընդունակ է ժողովրդին միաւորուելու կոչ անել»: Թերեւս պատահական չէ նաեւ, որ 1950 թուի վերջին եւ 51-ի սկզբին, Ստալինը յատկապէս նրան էր ուզում Հեռացնել տալ հայրենիքից եւ Թակարդ պցել՝ Կոմինֆորմի ղեկավար նշանակելով: Տոյիտին առհասարակ աչքի է ընկել մտածելու անկախութեամբ, որքան որ դա թոյլատրելի եւ Հնարաւոր է կոմունիստական շարքերում, դիմադրել Ստալինին եւ ստալինականներին իր հասկացած ձեւով: Բայց

մեղ համար առանձնապէս ուշադրուն ա'յն է, որ նա բազմիցս հանդէս է եկել սոցիալիզմի տարբեր ուղիներին, «բազմատարր սոցիալիստական Հասարակութեան», կազմակերպուած Հասարակութիւնների ու սոսանձին անձանց նկատմամբ ազգային, մշակութային եւ այլ առանձնայատկութիւնները հաշուի առնելու օգտին: Այդ տեսակէտից յատկապէս նշանակալից է Տոյիտիի կողմից 1964 թուի Օգոստոսի 21-ին՝ յունիսթուսու մահից մի քանի ժամ առաջ Ծալտայում աւարտուած «Յաշտնայն»-ը, որը Հրապարակուեց նոյն տարուայ Սեպտեմբերի սկզբին Իտալիայում, իսկ որոշ ուշացումով էլ Մոսկուայում եւ արեւելահարավային երկրներում: Այդ Յուշատեոր-ղեկուցազիրը ամբողջովին ուղղուած էր խորհրդային ղեկավարներին:

Այդ իրաշատուկ քաղաքական կոտորած ժամանակին շատ արժագանակներ ունեցաւ եւ բաւական ուշադրաւ նիթեր էր պարունակում: Բայց մեղ այստեղ հետազոտում է յատկապէս բազմաթիւ բնութեան եւ բազմակենտրոնութեան հարցը: Եւ քանի որ բազմակենտրոնութեան նշանախօսքը կապուած է Տոյիտիի անւան Հետ, իսկ այդ հասկացութիւնը ուղղակի բխում է բազմաթիւ բնութեան ըմբռնումից եւ ինքնին պայմանաւորուած է նրանով, որքէ աւելի կանգ առնել յիշեալ «Յաշտնայն»-ի վրայ ու այդպիսով էլ աւելի մօտիկից Թանթանալ իրերի կացութեանը բազմաթիւ արձագանգում: «Միասնութիւն բազմազանութեան մէջ», — ահա թէ ինչով է յատկանշական Տոյիտիի ըմբռնումով Հասարակութեան, սոցիալիզմի, կոմունիզմի եւ այլնի նկատմամբ:

«Դէպի սոցիալիզմ տանող ուղիները շատ են եւ տարբեր», — դեռեւս 1956 թուին ասում էր Տոյիտին: Իսկ ամերիկեան «Թայմ» պարբերականի աշխատակցի Հետ ունեցած երբեմնի զրոյցում, որը Հրատարակուեց, ի դէպ, միայն իր մահից յետոյ Իտալիայում: Տոյիտին ասել է. «Մենք սոցիալիզմ ենք ուզում մե'զ համար: Իսկ սոցիալիզմը նա-

նակում է անտեսական այլ կառուցուածք եւ ոչ թէ այն, որը գոյութիւն ունի Քոր-հրդադախին Միութիւնում, այլ Իտալիային յարմար ուրիշը: Մենք պարտաւոր չենք կրկնել այն, ինչ որ արուել է Թուսաստանում»: Այն հարցին, թէ ինչպէս է ինքը Ստալինին բացատրել, որ Իտալիական կոմկուսակցութիւնը մտադիր է սոցիալիզմի իր հանապարհով ընթանալ, Տոլիատին պատասխանել է՝ «Ես սասցի Ստալինին «սիւսո Իտալիանի» (մենք Իտալացիներ ենք)»: Անշուշտ, այսպիսի օրինակներ շատ կան, որոնք ցոյց են տալիս, որ Տոլիատի արտայայտութիւնները որոշ հետեւողականութիւն ունեն եւ «Յաշատնոր»-ում զեկուցազրի նման շարադրուած սողերը պատահական չեն:

Անդրադառնալով արեւմտեան երկրներին կոմունիստական շարժման առանձնաշատկութիւններին, Տոլիատին իր «Յաշատնոր»-ում գրում էր, թէ՛ «Մենք միշտ էլ սխալ ենք համարել բանուորական ու կոմունիստական շարժման շարժական լրատուական հրկրներում»: Այդ առթիւ դասական դաստիարակութիւններ անելով, նա յատկապէս մշակոյթի մասին ասում էր. «Մենք պէտք է դառնանք մտաւոր կեանքի ազատութեան, ազատ զեղարուեստական ստեղծագործութեան եւ գիտական յառաջդիմութեան պաշտպաններ: Դրա համար անհրաժեշտ է, որ մենք մեր բմբուսները վերացական ձեւով չհակադրենք տարբեր անսակի միտումներին ու հոսանքներին, այլ լինենք այդ հոսանքների ներկայացուցիչների հետ բանալիճողներ ու այդպիսով ջանքեր գործադրենք, որպէսզի խորացնենք բանալիճը մշակոյթի այն հարցերի գծով, որոնք կան այսօր: Ոչ բոլորն են հանդիսանում մեր թշնամիները կամ մեր թրշնամիների գործակալները, ովքեր այսօր՝ հետո են մեզինք մշակոյթի զանազան ասպարէզներում, փիլիսոփայութեան մէջ, պատմական ու հասարակական գիտութիւնների մէջ»:

Մի այլ կապակցութեամբ ասում

էր. «Առանձին երկրների միջեւ տարբերութիւնը բաւական մեծ է: Ահա թէ ինչու իրաքանչիւր կուսակցութիւն պէտք է իմանայ, թէ ինչպէս դործել ինքնուրոյնաբար: Կուսակցութիւնների ինքնավարութիւնը, որի օգտին մենք վճարականորէն հանդէս ենք գալիս, դա ո՛չ միայն ներքին անհրաժեշտութիւն է մեր շարժման համար, այլեւ կարեւոր է նաեւ դարձեալ կենտրոնացուած միջազգային կազմակերպութիւն վերստեղծելու ամէն տեսակ առաջնորդութեան հակադրուելու համար: Մենք հաստատ պաշտպանում ենք մեր շարժման եւ միջազգային բանուորական շարժման միասնականութիւնը, բայց այդ միասնականութիւնը պէտք է ձեռք բերուի մեր կոնկրետ քաղաքական գիրքերի բաղձադաւանութեան մէջ, բոտիւրքանչիւր երկրի պայմանների եւ դարգացման աստիճանի»: Այնուհետեւ, «Ճիշդ չէ սոցիալիստական երկրների մասին, ներառեալ Խորհրդային Միութիւնը, խօսել այնպէս, որ կարծես թէ այդ երկրներում միշտ եւ ամէն ինչ լուր է ընթացել: ... Իրականում, սոցիալիստական բոլոր երկրներում մշտապէս դժուարութիւններ են ծագում, հակասութիւններ ու նոր խնդիրներ, որոնք պէտք է ներկայացնել այնպէս, ինչպէս որ կան: Ամէնից վատը այն սոցալուորութիւնն ստեղծելն է, թէ ամէն ինչ միշտ լա՛ւ է դնում եւ ապա յանկարծ բախուել նրանք բացատրելու անհրաժեշտութեանը»:

Առանձնապէս ուշադրաւ են Տոլիատի «Յաշատնոր»-ի եզրափոխիչ մտքերը: «Մի իրողութիւն, — ասում էր նա, — որը մտահոգում է մեզ եւ որը մեզ չի յաջողուել լիովին բացատրել, դա կենտրոնախոս միտումների դրսեւորումներն են սոցիալիստական երկրների շարժում: Դրա մէջ թաքնուած է բացայայտ ու լուրջ վտանգ, որի վրայ խորհրդային ընկերները պէտք է ուշադրութիւն դարձրեն: Անկասկած այստեղ նկատում է աղբայնականութեան վերածնունդ: Սակայն մենք գիտենք, որ աղբային զգա-

ցումները մշտական գործուն են մնում բանուսր դասակարգի եւ սոցիալիստական շարժման մէջ երկար ժամանակի ընթացքում, նոյնիսկ իշխանութեան նուաճումից յետոյ: Տնտեսական յառաջիմաստները չի վերացնում այդ գործունը, այլ, ընդհակառակն, ուժեղացնում է: Այդպիսով, սոցիալիստական ճամբարում եւս գուցէ, — եւ ընդգծում եմ այդ զուցէն», որովհետեւ կոնկրետ շատ իրողութիւններ յայտնի չեն մեզ, — հարկաւոր է դառն լինել միակերպութեան բռնի պարտադրման դէմ. հարկաւոր է Հասարակական, որ այն միասնականութիւնը, որը մենք պէտք է Հաստատենք ու պահպանենք, կայանում է բազմադասութեան եւ առանձին երկրների լրիւ ինքնավարութեան մէջ: Եզրափակման մէջ եւ ուզում եմ ասել, — գրում էր Տոլիատին, — որ նաեւ այն ժամանակ, երբ խօսքը վերաբերում է սոցիալիստական երկրներին, հարկաւոր է քաջութիւն ունենալ քննադատաբար մտնելու շատ երեւոյթների ու շատ խնդիրների նկատմամբ, եթէ մենք ուզում ենք Հիմք ստեղծել լուսագոյն ըմբռնման համար եւ մեր ամբողջ շարժման առաւել սերտ միասնականութեան համար»:

1956 թուին, Տոլիատիի կողմից ստալիճաշտում եւ այդ տարբեր առիթներով ու մասնաւանդ ՅԱ թուի Օգոստոսի «ՅԱ» շատնորում զարգացումը զբաղմանտրոհութեան սկզբունքը գնալով աւելի է Հաստատում: Այստեղ իմաստ չունի ընթացիկ քաղաքական իրադարձութիւններ յիշատակելը, բայց արժէ շեշտել, որ այսօր արդէն մի շարք կոմունիստական կենտրոններ ու մեկուսի կենտրոնիկներ կան: Ի հարկէ, մոսկովեան կենտրոնը բոլոր միջոցներով պայքարում է իր երբեմնի մենտրոնը նորոգելու եւ պահելու համար, բայց դա միայն միակողմանի ցանկութեան հարց չէ, այլ առաւելա-

պէս ուժերի յարաբերակցութեան: Թէ այժմ քանի՜ այդպիսի կենտրոններ են հաշուում, իսկ վաղը քանիսը կը լինեն՝ կարեւոր չէ: Հասարակագիտական տեսակէտից կարեւորն այն է, որ նոյնիսկ կոմունիստական՝ ղէնքի ուժով «միակուտ» ճամբարում, ճեղքեր են գոյանում ու լայնանում, «բազմակենտրոնութեան» անուղղակի ճանապարհով տեղ առաջը քաղմատարրութեան» սկզբունքի թէկուզ եւ սահմանափակ կիրառմանը: Կադապարի մէջ առնուած Հասարակութիւնները ձգտում են արձակ ձեռքերով ազատ շնչառութեան եւ բնականոն կեանքի:

Ոչ մի Հասարակարգ եւ քաղաքական վարչաձեւ չի կարող պարծենալ իր կատարելութեամբ: Նոյնիսկ լուսազոյնները: Որովհետեւ վարչաձեւերը Հաստատում են մարդիկ, որոնք իրենց հերթին բնաւ կատարել չեն: Բայց արմատական տարբերութիւն կայ վարչաձեւերի միջեւ, նրանց, որոնք Հիմնուած են դրամատարրութեան սկզբունքի վրայ եւ յարգում են Հասարակութեան բազմացուցիչ տարրերի շահերն ու իրաւունքները, եւ նրանց, որոնք, ընդհակառակն, մերժում են այդ բազմատարրութիւնը ու դրօշ դարձնում շինծու «միակուտութիւնը», «միաձուլութիւնը», եւ այն: Վերջին դէպքում շարաշար տուժում են առաջին հերթին անհատ մարդիկ, փոքր ազգերը եւ առհասարակ ստեղծադործ ուժերը, քանի որ կենտրոնացում ու մեծապետական հսկայ կառոյցները ազատորէն կլանում են ամէն ինչ, իրենց կամքը թելադրում եւ իրենց պաշտամունքը արմատաւորում: Հակառակ դրան, քանի յառաջդիմում է Հասարակութիւնը, այնքան անխուսափելի է դառնում բազմատարրութեան իրաւական Հաստատման պահանջը եւ այնքան աւելի արդիւնաւէտ է դառնում ազատութեան օգտին մղուող պայքարը:

1. ՄԿՐՏՁԵԱՆ



ԸՆԿԵՐԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Տ Ա Գ Ն Ա Պ Ա Հ Ա Ր

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ



Գեանքը դանդաղ էր նախորդ սե-  
րունդի օրերուն. քաղաքակրթութիւնը  
դանդաղ կ'ընթանար, ընկերային հաս-  
կացողութիւնները ուշ եւ դժուար փոփո-  
խութեան կ'ենթարկուէին, շափանիչները  
դարերու առկունութիւն ունէին:

Կացութիւնը բուրբովին տարբեր է  
այսօր:

Աւուելուները քսան տարուան տար-  
բերութիւն միայն ունին, հայրը այսօր  
չունի իր դուստրին իմաստասիրական ար-  
դիականութիւնը: Եթէ երէկ անչափ էին  
քսան տարիները, այսօր, արագութեան  
եւ հսկայական յառաջդիմութեան այս  
դարուն, տարիներէն իւրաքանչիւրը կըր-  
նայ մեր կեանքը դրոշմել նորութեամբ  
մը:

Տարբերութիւններ՝ բարոյական, կեն-  
ցազային եւ այլ դեպքերու վրայ:

Երէկ, պատմութիւնը հաստատուի  
դրբերու մէջ էր, այսօր շօշափելի ըն-  
թացք է անիկա, ամէնօրեայ տպւորմ է,  
մեզի հետ կը քալէ, մեզ իր գործընթա-  
ցին մասնակից կը դարձնէ:

Երէկ, մեր ծնողները իրենց տարի-  
քը առած ու հանդած մարդիկ էին, իսկ  
մեր մեծ ծնողները ուղղակի ծերունիներ:  
Այսօր երիտասարդ են ո՛չ միայն մեր ծը-  
նողները, այլեւ մեծ ծնողները եւ, հա-  
կառակ այս տարբերութեան կրճատու-  
մին, ժամանակը աւելի արագ ու աւելի

անինայ է, դաստիարակութիւնը ամէն  
օր նոր զէնքերով կը բանայ սերունդնե-  
րու միջեւ. գոյութիւն ունեցող խրամա-  
տը:

Այդ բացուող խրամատին երկու կող-  
մերը կը հաւաքուին այլամերժ երկու  
սերունդները: Հիները իրենց փորձառու-  
թիւնը շալկած, պատասխանատուութիւն-  
ներու իմաստութեամբ, միշտ պատրաստ  
ժխտական անակառկայ ներկայացնելու ի-  
րենց մրցակից երիտասարդութիւնը: Ե-  
րիտասարդութիւնը, իր կարգին, զին-  
ւած դիտութեան նոր թեքիչներով,  
տիեզերքի, մարդկութեան հոգեկան եւ  
Ֆիզիքական կեանքի մասին բոլորովին  
տարբեր ըմբռնողութեամբ հպարտօրէն  
կը կանգնի հիներուն դէմ յանդիման եւ  
անոնց տթոնները կը պահանջէ: Նորը,  
իր պահանջին մէջ ա՛յնքան կը կարծրա-  
նայ, իրեն ուղղուած վերաւորանքներէն  
ա՛յնքան կը վրդովի, որ վայրկեան մը կը  
դադրի իր նպատակակէտերու սրբու-  
թեան ու հետապնդման համար ծառա-  
յելու իր ճիգէն եւ շիտանքի մը մէջ նը-  
պատակը միջոց կը դարձնէ, անինայ ու  
ժխտական դատնալով իր պայքարին մէջ:  
Պայքար, հրժուտք, արագութեան ու  
յառաջդիմութեան մէջ կանդուն մնալու  
ապահովութեան մտածումն ու մտահո-  
գութիւնը, միացած՝ հայածուածի հոգե-  
բանութեան, երիտասարդը կ'առաջնոր-

զեն անձկութեան, իսկ այս անձկութիւնը ինքնաբերաբար արդի երիտասարդը կը տանի մերժումի քաղաքականութեան եւ ետակերտնացումի: Բոլոր պարագաներուն, ժխտական դիրքաւորում՝ սնանկութեան համբու վայելող հին սերունդին դէմ:

«Ո՛րք», ահաւասիկ նորերուն կարգախօսը: «Ո՛րք», բխած հիներուն ՈՉէն: Անոնցմէ բխած, բայց դանձր անհամեմատութիւն գերազանցող:

Հիները որոշ չափով մը իրականութիւններուն տեղեակ ըլլալով հանդերձ, չեն ուզեր իրենց իշխանութիւնն ու պատասխանատուութիւնները զիջել: Նոյնիսկ չեն փորձեր այս առջնապին արդար ու դոհացուցիչ լուծումներ գտնել: Եւ ո՛րքան լուծումը ուշանայ, ա՛յնքան կը շեշտուի եւ կը հիմնաւորուի նորերուն ժխտականութիւնը, ատելութիւնը, այնքան մերժելի կը դառնան օրէնքները, կանոնները, սահմանադրութիւնները, բարոյական, բնասանկան եւ եկեղեցական նուիրակական ըմբռումները:

Այս բոլորը տեղի կ'ունենան ենթագիտակցական մակարդակի վրայ, ինչ որ աւելի մեծ վտանգ մըն է, տրուած ըլլալով, որ մարդուն էութեան մէջ խորացէս թաքնուած կը մնայ այդ մտածումը, մտանելուով ու համոզում դարձած: Գիտակցութեամբ կ'արտայայտուի ժխտականութիւնը, որ հետզհետէ շեշտուելով՝ միջոց ու դիրք ըլլալէ կը դադրի, դառնալու համար ընդհանուր քաղաքականութիւն եւ նպատակ, դառնալու համար յարատեւ սարսափ եւ անզիջողութիւն ընկերային բոլոր առաջարկներուն դէմ: Ու կիրքէ կիրք առաջնորդուելով՝ երիտասարդները կը կուրանան, դառնալու համար ամբոխ:

Ո՛րք, ՄԻՆՏ ՈՉ

Երիտասարդները կ'ըսեն, թէ «ցարդ աշխարհը կառուցուած է միայն սխալ ու կեղծ արժէքներու վրայ, աշխարհ մը, որուն միակ չափանիշը եղած է ու կը մընայ դրամը, միշտ դրամ. աշխարհ մը,

որուն մէջ մեզի տեղ չի տրուիր»: Նոյն քարացած տակմերը կը ծանրանան մեր ուսերուն, կը ծանրանան այսօր նոյն ծանրութեամբ, ինչպէս էր երէկ: Այս տակմերը չափահասներէն կու դան, հին սերունդէն կու դան: Կերտուած անոնց կողմէ՝ կը ծառայեն անոնց շահերուն եւ կը գոցեն ամէն դուռ երիտասարդութեան առջեւ: Գոց դուռներուն առջեւ երիտասարդութեան կատաղանքը կը բաղձապատկուի, ներքնապէս կուտակուած բողբոջը կը դրսեւորուի յանկարծ՝ դառնալու համար վայրագութիւն, որովհետեւ կենսական ուժ կը դառնայ ձգտելու, բայց չունենալու այդ պայքարը:

Երիտասարդները կը գարմանան, երբ դիտութեան բերած ամէնօրեայ բարիքին հետ, լաւին հետ հանդիպին մահուան, երբ կը տեսնեն, թէ կեանքին դուզընթաց, դոյութիւն ունի առարկայական ճշմարտութիւնը՝ մա՛հը: Անոնք այս իրականութեան առջեւ չեն ուզեր սպասել, կեանքը շատ կարճ ու անխառն կը դանեն, կ'ուզեն օգտուիլ այդ պատեհութեան, կը ջգայանան, երբ առուելադոյն չափով ապրելու իրենց ցանկութեան մէջ ընդդիմութիւններու բարին:

Պէտք չէ դատապարտել, պէտք չէ քննարկել մի միայն երիտասարդութեան երեւութական արարքները: Ինչո՞ւ մեր դասերը չառնենք պատմութենէն: 19 տարեկան էր ժան Թ'Արք, 27 տարեկան էր Լաֆայէթ, 27 տարեկան էր Նափոլէոն, հազիւ քսանին հասած էր Թորայէլ Օրի, նոյն տարիքը ունէր Գուրհան: Եւ այսպէս շարքը կարելի է երկարել այդ պատկուամներով պողաւորուած մեծերուն:

Երիտասարդութիւնը կը դիտակցի ու կը հաւատայ իր կարելիութիւններուն: Ատոր համար ալ կը պայքարի անցեալին արձանագրուած ձախողութիւնները պաշտպանող սերունդին դէմ, կը պայքարի ինքնավստահութեամբ: Կը պայքարի՝ զինուած իր ժամանակի բոլոր բարեքներով, դիտութեամբ, ուսման եւ թեքնիք բոլոր կարելիութիւններով, կ'ուզէ մեծ իրագործումներ կատարել:

Երիտասարդութիւնը կ'ուզէ իր ոճով ապրիլ: Հիները դատապարտելի եւ մերժելի կը դաննեն առաջին առիթով ա՛յս ունը, առանց անդրադառնալու, որ այս նոր կենցաղը ծնունդն է նոր ժամանակաշրջանին, բարբարոսացած քաղաքակրթութեան:

Քաղաքակրթութիւնը խենթացած է, կ'ըսեն: Այո, Փէլմէտանի փորձերը ցոյց կու տան, թէ մարդոց 91 առ 100ը հիւանդ է: Կարելի՞ է առողջ քաղաքակրթութիւն մը սպասել հիւանդ մարդոցմէ:

Երեւակայեցէ՛ք ջախջախիչ մեծամասնութիւն մը, որ հիւանդանոցներէն դուրս կ'ապրէ, բնական կեանքին մէջ: Արդար թէ՞ այս տուեալներուն վրայ հիմնուած արձանագրել, թէ ընկերութիւնը դադարած է բնական ըլլալէ, ուրեմն մարդոց ջղադար ըլլալու իրողութիւնը սկըսած է բնական դառնալ... առողջութեան չափանիշն է, որ փոփոխութեան ենթարկուած է, յարաբերական դարձած:

Մարդը, անհանդարտ մարդը, ջղադար, հիւանդ, դժգոհ ու վայրագ մարդը, ինքզինք մխիթարելու համար կարծէք զուրս կու գայ իր երկրէն եւ նոր արկածախնդրութիւններու մէջ խեղդել կը փորձէ իր մտառօքները:

Այսօրուան երիտասարդութիւնը կը փորձէ ընել ա՛յն, ինչ չէ կրցած, չեն յաջողած ընել զինք նախորդոց սերունդները, չեն յաջողած հաշտութեան ու հասկացողութեան եզր մը դնել ընութեան երեւոյթներուն եւ արագութեան հետ:

Վերջապէս ինչո՞ւ դատապարտել այս բոլոր փոփոխութիւններուն մէջ երիտասարդութիւնը, ինչո՞ւ զարմանալ անոր ոճին, ինչո՞ւ չմտածել եւ այդ դարձանքը ստեղծող պատճառներուն մասին:

Այս բոլորին պատասխանը կու տայ իննին՝

«Երբ միջարքանակային յարաբերութիւններ հաստատելու հաճախանքիս հասնիմք, պէտք է, որ վերատեսութեան ենթարկեմք մեր բոլոր իմաստասիրական, բարոյական եւ քննարկային ըմբռնումները: Թե՛քնիք կարելիութիւնը, ամսահամը քննե՛ք ստանալով՝ պլտի պար-

տադրէ մարդկութեան, որ վերջ տայ յառադրիմաբեան համար իբրև միջոց եւ մեթոտ օգտագործած իր վայրագութեանը:

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆՆ ԸՒ ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Գրականութիւնը ընդհանրապէս հետեւած է ժողովուրդին: Մեծերը միայն կրցած են ժամանակով եւ ընկերային իրայատուկ ըմբռնողութեամբ կանխել ժողովուրդը: Այսօր, երիտասարդութիւն մը իր հերոսները կը փնտռէ: Հերոսներ կարելի է գտնել պատմութեան եւ պրակտիկեան մէջ: Պատմութեան մատենաները ծալուած են ու հանդարտ կը նիրհեն մատենագրաններուն մէջ, իսկ նոր կերտուող պատմութիւնը շատ քիչ անգամ հերոսներ կը ներկայացնէ մարդկութեան. եւ ատիկա ոչ թէ անոր համար, որ մարդիկ այսօր հերոսանալ չեն գիտեր, այլ որովհետեւ հերոսանալ չափանիշները փոխուած են: Այսօր, գրիտուոր հերոսը մեքենան է, յաբիտանական հերոսները շատ քիչ են, նոյնիսկ սինեմայի մէջ պայտամուռքէ հասած դէմքերը քանի մը տարի ետք կը կորսուին:

Գրականութեան մէջ եւս դժուար է այժմու պայմաններուն յատուկ ախպրներ ուրուագծել: Այժմու գրողներուն հերոսները սովորաբար զանգուածներն են, ամբոխները իրենց դժգոհ շարժումներով, բողոքներով, նոր ու արատաց կեանք մը ապրելու իրենց փոխ վրէժով: Երէկ, հերոսը բարութեան ասպետ մըն էր, ծառայատէր, հայրենասէր, այսօր, ժխտականութիւն մըն է, զԵՅԻ ունով ժողովրդականութիւն չահելու ախոյեանն է:

Այս մտաւորական շարժման ներկայացուցիչները եղան պիթիֆները. անոնց գործունէութեան ուղեգիծը սահմանուեցաւ յարձակունակութեամբ, ժխտականութեամբ եւ հակարկերայնութեամբ:

Իբրև շարժում՝ անոնք ընկերութեան մէջ անթիւոր մըն էին մինչեւ այն ատեն, երբ սկսան գրականութիւն

դառնալ եւ գրականութիւն դառնալով սկսան զանգուած ունենալ, ամբողջներ հրահրել եւ, այսպէսով, անհետացան հրապարակէն, ծնունդ տալով Հիփիթականութեան:

Այսօր, երիտասարդութեան գրականութիւնը կը ներկայացնեն ժազ Քէրլաւ, Ալլէն Կիմսպըրկ, Կէարի Սնայտըր, Կրէյլըրի Գորսո, Նէյկ Գասստի, Ուիլքըմ Պարրո:

Անոնք բանաստեղծութիւն ստեղծեցին, երգ յօրինեցին, վէպեր գրեցին:

Անոնք Ամերիկայի մէջ առանձնաշահութիւններով օժտեցին արդիական գրականութիւնը: Տիրանաւագ Սակաւ երիտասարդական շունչով հրապարակ եկաւ, բայց անոր տիպարները դրականութեամբ հարուստ, ժխտականութեամբ անհաստականութիւն կազմելու բուն մարմնով չեն տոգորուած:

Երիտասարդական արդի գրականութիւնը, այսօր, յեղափոխութիւն կը բացառանչէ: Յեղափոխութիւն՝ բոլոր չափանիշներուն դէմ, բոլոր կազմակերպւած Հեղինակութիւններուն դէմ, ազատութիւնը կաշկանդողներուն դէմ, կանոնային սահմանումներուն դէմ:

Բոլոր դրողներուն մօտ յատկորէն բանաձևուած կը գտնենք այն ուրացումները, զորս կը կատարեն մեր կեանքի արտաքին ապրումները, ներքին ապրումները, Փիլիքական կեանքը, արդիական մեր կեանքի այժմու պահանջներն ու պատշաճեցումները:

Քամիւ, Սարթը, Նոյնիսկ Նիցչէ պոսթիւմի, մերժումի եւ բողոքի ուժանութեան նախաճաշիկը փոխանցեցին ապրող այս սերունդին: Չարչարուած բարոյականին դէմ անխնայ պայքար յայտարարեցին, մարդկային տառապանքներուն պատճառները դովելի անկեղծութեամբ եւ քաղութեամբ մատնանչեցին, անկող թափով մը ձաղկեցին սակեղէն օրէնքները, պաշտպանեցին Հեղինակութեանց մականով ճնշուած ընկերային արգարութիւնը:

(Շար. 3)

Սարթը, Քամիւ, Նիցչէի, Շոփելն-Հաուերի ճիգերը ոչնչապաշտութիւն առաւ 1950ական թուականներու արդիական թեմայով եւ հակաընկերայնական ձգտումներով գրականութիւն մը: Գրականութիւն մը, որ միաժամանակ պոսթիւմ է, իմաստասիրական հրապարակագրութիւն է, վիճակագրական ստեղծագործութիւն է: Ընդունելի չէ այս մասին եղած արագ վերագրումներն ու դատապարտութիւնները: Այս դրողներուն գրական տրեանքը արտաոտցութիւն պէտք չէ հռչակել: Հաւանաբար անհաստական յիմարութիւններ նկատուին անոնք, էթէ անոնց չմիանայ ինչո՞ւմ եւ ինչպէ՞ս: Ընկերային այժմու պարունակներով անոնք ո՛չ միայն յիմարութիւն չեն, այլեւ անպարտութիւն են, ուրիշ են, նոյնիսկ զազափարական զօրութիւն կը դառնան, տեսակէտ ու իմաստասիրութիւն կը կազմեն:

Իզմերով օրօրուած 19րդ եւ 20րդ դարերը յոգնած են վերացականութեան եւ առարկայականութեան ակնբախ եւ շոնդայից հակադրութիւններէն, որոնց մէջ հոգեկանը, մարդկայնական այլ արժանիքները ռանակոխ կ'ըլլան: Այս դժգոհութիւնը չի բաւարարուի սեռայնականութեան վերադառնալով, անիկա կ'ուզէ նաեւ պեղել Մուսկեան մեթոտով ու վարկածով մեր անդիտակից աշխարհի անապացուցանելի, բայց անվիճելիօրէն գոյ միսթիսիզմը: Այսօր, այդ գրողները, Մաք Միլընի նման հռչակաւոր հրատարակչատուներ կը հրատարակեն Մէլգեթի պատգամը՝ «Մեր գիտակցութեան քարտէսը», ուր երիտասարդութիւնը յատկօրէն կու գայ յայտարարելու, որ մարդկային մեր շատ մը յատկանիշներու կողքին՝ մենք ունինք նաեւ մեր անհատականութեան մէջ միսթիք բաժին մը, հոգի մը, զոր որքան ալ փորձենք չենք կրնար ենթարկել տարբարաշարանային զննութիւններու, վարկածներու տարագումին եւ հասարակաց յայտարարներու:

ԱՐՄԷՆ ՏՕՆՈՅԵԱՆ



ՄՍՐԹԻՆ ԷՍԼԻՆ

**Ժ Ա Ն Ժ Ը Ն Է**

**ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ՍՐԱՀ ՄԸ**



ՀԱՅԱՅՈՒՅ

ԷԼՈ ՍԱՐԱՃԵԱՆ

Դէպքերը, որոնք յաջորդեցին այս թատերախաղին առաջին հրատարակութեան, ջոյց կու տան, որ միջանկեալ տարիներուն ժրնէ ոչ մէկ ձեւով կրցած էր զերակատարներուն եւ թատրոնի հասարակութեան ծօտ իր հաշուոյն բարենըպաստ կարծիք մը ապահովել: «Պատըզամը» թատերախաղը առաջին անգամ ներկայացուեցաւ 22 Ապրիլ 1957ին, Լոնտոն Արթ Փիթըր Գլապի մէջ, որուն զուտները բաց մնացին միայն իր անպատեհներուն դիմաց եւ, հետեւաբար, այս թատերախաղը զերծ մնաց Լորտ Շամպէրլէյնի զրաքննութենէն: Լոնտոնի թերթերու նոյն տարուան թիւերը, որոնք վերատեսութեան ենթարկած էին թատերախաղը, միաժամանակ կը պատմէին, թէ ինչպէս Հեղինակը բանադրուած ու արտաքսուած էր թատերասրահէն, բրտորէն առարկելէ հոգ անոր ներկայացուած ձեւին համար: Անգլիացի նրիտասարդ բեմադրիչը, Փիթըր Չատէք, որ 1952ի սկիզբը Լոնտոնի մէջ ներկայացուցած էր «Ալախիճճերը» թատերախաղը Փրանսական կատարումով, եւ ապա, աւելի ուշ,

բեմականացուցած էր զայն առաջին անգամ ըլլալով անգլերէնով, ինչք եւս ամբաստանուեցաւ ժրնէի կողմէ՝ «Պատըզամը» թատերախաղը ռամկացուցած ըլլալու մեղքով:

«Ո՞ր թատերախաղս ծրագրուած էր անըական շրջանակներու յատուկ պոռնկատուն մը ներկայացնելու», կ'ըսէ ժրնէ, մինչ «Փիթըր Չատէք բեմ հանած է ստորադաս շրջանակներու պոռնկատուն մը: Եւ Պէրնար Թրէշմանը, ժրնէի ամերիկացի լաւագոյն թարգմանիչը, կ'ըսէ, թէ պոռնկատան տեսարանները պէտք է որ ներկայացուին ամէնէն չքեղ տաճարի մը մէջ տեղի ունեցած պատարադի մը ընթացքին, մինչ Փիթըր Չատէք վերածած է զայն շատ սովորական պոռնկատան մը»: Քանի մը օրեր հոգ, Փիթըր Չատէք տուաւ իր սեփական ըմբռնումը շատ նրբին հակաճառութեամբ մը, ուր ան իր սուրբը տուած է՝ ընդունելով ժրնէն իրոհե տրուեստապէտ մը, «զիջելու բացարձակ անկարողութիւնն է, որ ժրնէն կ'ընէ մեր դարու ամէնէն մեծ բանաստեղծ-թատերադիրներէն մէկը»: Իբրեւ հրա-

պարտկային ելույթ, ժրնէի պոռթկումը  
Ջատէքի կողմէ կը բացատրուի անոր՝  
հեղինակի մտքին մէջ գոյութիւն ունե-  
ցող իրականութեան եւ երեւակայու-  
թեան սահմանագծով:

Ժրնէի ամբողջ կեանքը կը թուի  
կրկնել մտապատկերին տեսականութեան  
ա՛յն շրջանը, որ կը փորձէ շեր երեւա-  
կայութիւնը թափանցել իրականութեան  
աշխարհի մէջ: Բայց աշխարհը միշտ ալ  
չարշարուած տեսլանքներ ունի, եւ  
«Ա. Ժընէն» բացառութիւն չի կազմեր...  
Իրեն համար «Պատշգամը» թատերախա-  
ղին սեփական կատարեալ երազը իրական-  
նութիւն էր, եւ փորձը զայն առարկա-  
յական ընելու, մեր իրականութիւնը վե-  
րածելու համար թատերգութեան, բեմին  
վրայ, դերասաններով, կը կարօտի զո-  
հողութեան:

«Պատշգամը» թատերախաղին մասին  
լսնտոնի մէջ տեղի ունեցած կարծիքնե-  
րու բախումը խիզախ փորձ մըն էր փոք-  
րիկ թատրոնի մը մէջ եւ արդիական մի-  
ջոցներով՝ աւելի զան նկարչական դէպք  
մըն էր բազմերանգ յատկութիւններով  
արտակարգ թատերագրի մը կեանքին  
մէջ: Ասիկա կը լուսաւորէ ժրնէի մտնե-  
ցումին ամբողջ էութիւնը — ներքին խո-  
րունկ ձգտումը, որ կը յառնէ բացար-  
ձակին, գեղեցիկին եւ հաղորդական բա-  
նի մը փնտրուածքէն, արժէքներու շրջը-  
ւած գրութեան մը միջոցով, որուն մէջ  
չարը մեծագոյն բարին է եւ գեղեցիկը,  
որ կը ծաղիկի ազտերու եւ զապիր ոճիքի  
մը հողին վրայ: Ահա թէ ինչու բացար-  
ձակապէս յանկարծական փայտառէս մը  
չէր ժրնէի համար այն պահանջը, որ սե-  
ռային երեւակայութիւններն ու ուժը  
պէտք է որ բեմ ելլին ամենայն հանդի-  
սաւորութեամբ, եւ պայծառութեամբը  
պատարագամտոյցին արտաքին աշ-  
խարհի մայր եկեղեցիներէն մեծագոյն-  
ներէն մէկուն մէջ, միաժամանակ պնդե-  
լով եւ պահանջելով բեմադրիչին, որ  
թատերախաղը պէտք է ըլլայ ճշմարիտ,  
վայրագ, եւ անճշտակ մեռով, եւ վըս-  
տահելով իրեն, որ ճեթ մէկը ըսէ քե-  
զի, թէ այս թատերախաղը քիմադրած

եւ ցաշակաւոր կերպով, հետեւաբար  
դուռն ձայնողած ես: Իմ ստեղծած յաւեր-  
ժանաբերս պէտք է նմանիմ աշխարհի  
վրայ ապրող ամէնէն վատ պառնիկնե-  
րուն: Եման պահանջներուն զոհացում  
տալը պարզապէս շատ դժուար է, եթէ  
ոչ անկարելի:

Իբրեւ իրողութիւն, «Պատշգամը»  
թատերախաղին լսնտոնեան բեմադրու-  
թեան մէջ, թէեւ այս վերջինը կը պա-  
րունակէ դանազան սխալներու տկարու-  
թիւններ, եւ ենթարկուած է կարեւոր  
հատուածներու մկրատումներու, այսու-  
հանդերձ, մեռով մը բեմադրիչը իբրեւ  
ամբողջութիւն մը դասաւորած էր զնել  
թատերախաղը թատերաբեմի յատակա-  
լոյսերուն դիմաց աւելի կատարեալ ձե-  
ւով մը, զան Փիթըր Պրոքի անսահման-  
րէն օժտուած, հոյակապօրէն ծրագրը-  
ւած եւ չքեղօրէն նետուած Ֆրանսական  
առաջին բեմադրութեան, Ժիմնազի թա-  
րոնին, մէջ, 1960ի Մայիսին: Այս դան-  
պաղ ընթացքը, որ ծնունդ կ'առնէ հեղի-  
նակի մտադրութեան աւելի հաւատարմ  
կատարումով մը, բեմադրութիւնը կը  
վերածէ հանգոյցի մը, ա՛յն աստիճան,  
որ առաջին դիշերէն ետք յեղափոխա-  
կաններու միջեւ ամէնէն էական եւ կեդ-  
րոնական տեսարանը, յապաւուած է  
թէեւ, սակայն կը կրկնէ եւ կը բովան-  
դակէ առաջինը (ինչպէս է պարագան,  
1960ի Մարտին, Նիւ Եորքի մէջ տեղի ու-  
նեցած բեմադրութեան), անոր էութիւ-  
նը հասկնալու տեսակէն ասիկա կը զրկէ  
թատերախաղին գազաթնակէտը: Բայց  
այնուհետեւ Փարիզի մէջ ներկայացուած  
առաջին գիշերուան ընթացքին, ժրնէ  
բաւական զգոյշ եւ շրջաւայաց եղած  
էր, երթալու համար Յունաստան՝ իր  
րոմանթիզմը դարձանելու ի խնդիր:

«Պատշգամը» կարեւոր աստիճանով  
մը կը վարզացնէ ժրնէի օրկանական մո-  
տեցումը: Դարձեալ սկիզբը, մեր ոտքե-  
րուն տակէն հողը սահած կը դգանք:  
Թատերախաղը կը բացուի չքեղօրէն  
զգեստաւորուած եպիսկոպոսով մը, որ  
կը խօսի բարձրօրէն աստուածաբանական  
լեզուով: Բայց հաղիւ թէ հաշտուած ենք

այն դադարափարին հետ, եպիսկոպոսի մը զէմ յանդիման կը գտնուինք, կ'անդրադառնանք, որ ներկայացուած միջոցաբեր եպիսկոպոսի մը պալատը չէ, այլ պոռնիկատուն մը, եւ ենթական եպիսկոպոս մը չէ, այլ թարիւղի պաշտօնեայ մը, որ վճարած է կնոջ՝ գոհացում տալու համար սեռային իր երազանքներուն: Տիկին Իրմային պոռնիկատունը՝ Մեծ Պատը մըն է — հայկիներու սրահ մը: Հոս մարդիկ կրնան զոհարում տալ իրենց ամէնէն վաղտնի ցնորքներուն իսկ, անոնք կրնան տեսնել իրենք զիրենք իրրեւ դատախազ մը, որ պատիժ կը սահմանէ կին գողի մը, կաթիլրեւ զօրավար մը, որ ինքզինք սիրուած կը զղայ իր նախասիրած նը՝ շիկ մըն է: Կամ՝ իրրեւ բորոտ մը, որ հրաշքով կը դարմանուի Մատնայէն անձնապէս. կամ՝ իրրեւ մեռնող օտար լեզէնական մը, որուն օգնութեան կը հասնի որքան զեղեցիկ հարձ մը: Փառուսութեան երազները եւ վայելքները ընծայող բոլոր միջոցները մատչելի են Տիկին Իրմայի հաստատութենէն ներս, որ ո՛չ միայն հայկիներու սրահ մըն է, այլ յարանական առումով, այլեւ նաեւ իրականութիւն մը (ամէն տեղ կան հայկիներ, որոնք կը բազմապատկեն ինքնահարսացման պատկերները, բայց նաեւ ասիկա իրական թատրոն մըն է, ունենալով տիկին Իրման իրրեւ բեմադրիչ եւ բեմավար):

Թատրոնախաղին թեման ծնունդ կ'առնէ այն իրողութենէն, որ երկիրը, ուր Մեծ Պատը մըն զեռնողուած է, յեղափոխութեան երկունքներու մէջ է: Հրացանածղութեան ձայներ կը լսուին տաջին տեսարաններուն ընթացքին: Յեղափոխականները կ'ուզեն քանդել ուժի հաստատուած կառոյցը, որ կը ներկայացուի անտարատ եւ անհազարդական թագուհիին պատկերով, անոր եպիսկոպոսներով, անոր դատաւարներով եւ անոր զօրավարներով: Տիկին Իրմայի հաստատութեան բնակիչներէն մէկը, Շանթայ անունով աղջիկ մը, սիրահարուած է յեղափոխա-

կաններու առաջնորդին, կտարազործ մը, որուն հանդիպած էր ան, մինչ այս վերջինը կարգ մը նորագութիւններ կ'ընէր Մեծ Պատը մըն վրայ: Աղջիկը ինք ձեռով մը դարձած է յեղափոխութեան խորհրդանշը, յեղափոխութեան ժանտ'Արքը: Կռիւք յեղափոխութեան զէմ կը մղուի Ոստիկանապետին կողմէ, որ միակ իրաւ ուժն է այդ հողին վրայ, ներկայացնելով արդիական միապետութեան ցանցը, ամբողջատիրական եւ ահաբեկչական ուժին վարիչը: Ոստիկանապետը գիտէ, յամենայնդէպս, թէ զօրութիւնը տանջանքի եւ Ֆիդէլքական ուժի հարց չէ, այլ ժողովուրդին մտայնութեան վրայ իշխող, մտայնութեան վրայ ներգործող բացարձակ իշխանութիւն: Նման իշխանութիւն մը ինքզինք լաւագոյն կ'արտայայտէ մարդ էակներու գաղտնի երազանքներուն մէջ — բացի այն պարտաւճէն, երբ պահանջ մը պիտի ըլլայ ամբողջատիրական Ոստիկանապետը, Տիկին Իրմայի պոռնիկատուն մէջ պահելու, ուր ան ինքզինք ապահով պիտի զգայ: Ան կը շարունակէ հետաքրքրուիլ, թէ արդեօք տեղ մէկը տեղեկացած է պոռնիկատուն մէջ իր այս նոր կեցութեան մասին: Ամէն բան պատրաստուած է այդ օրուան համար, բայց դեռ ոչ ոք ուզած է երագիլ այդ ապահովութեան եւ այդ միջոցին մասին:

Մենք յեղափոխականներուն կը հանդիպինք տեսարանի մը մէջ, որ Պատը գամի ալիսարհին մէջ մեզ կը դնէ հակադիր կէտի մը, բայց հոս եւս իշխանութիւնը հիմնուած է սեռային երազանքներու վրայ: Կարգ մը ապստամբներ կ'ուզեն Շանթայը վերածել յեղափոխութեան վաճառանիշի, գեղեցիկ աղջիկը, որ կ'առաջնորդէ յարձակումը, կ'երգէ ոգեւորիչ եղանակներ՝ մղելու համար մարդիկը աւելի բուռն պայքարներու Ռոժէն, առաջնորդը, կ'ընդդիմանայ այս պահանջներուն, բայց վերջաւորութեան ստիպուած տեղի կու տայ, բողոքելով. «Ես չկրցայ անսեսիլ Քեզ, ես չգողցայ Քեզ, իրրեւ միեղդիւրեալս մը եւ կամ երկգլխանի արծիւ մը»: Այսուհանդերձ,

Շանթալ անդրգուեկիորէն կը շարունակէ իր բնթացքը:

Արեւելեան պալատը օղբ ելած է, Թագուհին եւ իր գահլիճը քշուած են: Պալատէն եկող պատուիրակ մը կ'երեւի Մեծ Պատշգամին մօտ:

Այն պարագային միայն, երբ կարելի ըլլայ ժողովուրդին հաւատացնել, թէ ուժի հնազարեան խորհրդանիշները անեղծ մնացած են, կարելի կ'ըլլայ փրկել այդ օրը: Տիկին Իրման յանձն պիտի առնէ՞ Թագուհին մասը ինք խաղալ, եւ իր յաճախորդները, այսինքն՝ այն մարդիկը, որոնք Հանդերձուած են իրբեւ ե-պիսկոպոս, զօրաւար եւ զատաւոր, աստնք եւս յանձն պիտի առնեն այս մասերը նոյն կերպով: Տիկին Իրման եւ իր յաճախորդները կու տան իրենց հաւանութիւնը: Հանդիսաւոր կերպով անոնք կ'երեւին պատշգամին վրայ եւ իրենարհուսեալ կ'ընեն ամբողջին: Շանթալ կը խուժէ դէպի պատշգամ եւ կը սպաննուի վարէն հասնող զնգակով մը: Կո՞յր զընդակ մը: Կամ՝ զինք զիցաբանական էսկի մը վերածելու համար՝ յեղափոխականներուն կողմէ արձակուած զնգակ մը: Եւ կամ՝ զնոսր արձակողը եպիսկոպոսն էր, որ զինք կ'ուզէր իր սրբուհիներէն մէկը ընել:


Յեղափոխութիւնը ձախողած է: Բայց զնպիսկոպոսը, զօրաւարը եւ զատաւորը իրենց ուժը փորձած ըլլալով իրական աշխարհին մէջ, իրականութեան մէջ տաղտկացած են եւ կ'ապրին իրենց երազանքներուն կարօտախառովը: Երբ անոնք կը փորձեն հաստատել իրականութիւնը իրենց զիրքերուն մէջ, ոտտիկանապետը բրտօրէն կը յիշեցնէ իրենց, թէ միայն ինքն է, որ կը մարմնացնէ իրական ուժը: Բայց ան եւս կը սպասէ այն օրուան, երբ իր պաշտօնը պիտի վերածուի Հանդամանքի մը, որուն հետ կու գայ նաեւ չրոթիք երազներու կեդրոնը ըլլա-

լու արժանաւորութիւնը: Ան ունի նաեւ հսկայ mausoleum մը, կառուցուած՝ իրեն համար, ո՛րն յայտնի, որ անիկա պիտի մօտեցնէ զինք իր թիրախին: Ան կը փորձէ ապահովել իր արժանաւորութեան համապատասխան այնպիսի՝ խորհրդանիշ մը, որ պիտի գրգռէ մարդոց երեւակայութիւնը: Ան մերժած է գահիճի կարմիր վերարկուն ու կացինը: Իր նորագոյն նպատակը այն է, որ ինք պէտք է ներկայացուի հսկայական վարդով մը:

Առաջին յաճախորդը, որ կ'ուզէ հագուիլ իրբեւ ոտտիկանապետ մը՝ կը հասնի: Ան Ռօժէն է, պարտուած յեղափոխականներուն առաջնորդը: Անձկութեան մօտնուած Իրման (այժմու թագուհին) եւ իր բարձրաստիճան պաշտօնեաները կը դիտեն տեսարանը՝ հայելիներու եւ շրջադիտակներու կնճռոտ գործիքին մէջէն: Այս մէկը թոյլ կու տայ, որ պոռնկատան ակիկնը տեսնէ, թէ ինչ տեղի կ'ունենայ յատուկ բոլոր սենեակներուն մէջ: Ռօժէ կ'իրագործէ ուժի եւ բանաստիքութեան իր սեփական երազանքը, բայց, ի վերջոյ, կը բացազանչէ Վլաձման ատնն, որ եւ կը խաղամ Ոստիկանապետին դերը, իրաւունք ունիմ առաջնորդելու իմ ընտրած տիպարս ո՛չ թէ իմ, այլ միեջեւ իր սեփական ցակատագրին վախճանը, միտնելու եամար իր նախապիտը իմիմիս: Ան կը քաշէ դանակ մը եւ կը ներքինիացնէ ինքզինք: Ոտտիկանապետը զօհացած է, որ իր պատկերը սրբացած է ժողովուրդին երազանքներուն մէջ: Ան ինքզինք բանաւրկած է իր դադաղին մէջ — կամ ալ իր ներկայութեամբ ինքզինք, պոռնկատան մէջ: Հրացանաձուլութեան ձայներ կը լսուին: Տիկին Իրման կը ցրուէ իր յաճախորդները, կը մերկանայ իր արքայաշուք հանգամանքէն եւ կը պատրաստուի վերադառնալու իր հին դերին՝ իրբեւ պատրանքներու տան պահապան:

(Շար. 3)

ՄԱՐԹԻՆ ԼԱՄԻՆ





**ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ**

ՀԱՅ ՅԵՂԱՓՈՆԱԿԱՆԻ ՄԸ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԸ (յուշեր),  
Իսրայել, Ա. հաստք, Պէյրուք, 1972:

ԿԵԱՆՔԻՍ ԳՐԳԷՆ (յուշեր), Ռ. Գարրինեան, Պէյ-  
րուք, 1972:

ՍԱՆԻՆԷՆ ԶՈՒՐ ԽՄԵՑԻՆՔ (արձակ էջեր, արաբերէն  
քարգմանաւթիւն), Շահանդախտ, Պէյրուք, 1972:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

**ՅԱՎՈՐ ԿԱՐԱԳԵՆՑ**

**ԿԱՐԹԱԳԷՆԻ ԴՈՒՍՏՐԸ**

Փամանակակից վեպ

Գին՝ Ամերիկա 5 տոլար  
Լիբանան 7 Լ. ռսկի

Հեղինակին հասցէն

JACK KARAPETIAN  
10608 Margate Road  
Silver Spring, Maryland 20901  
U. S. A.

**باكين**

مجلة شورية ، ادبية وفنية علمية  
مدير المسؤول  
السيد اوتين كارنيك قزانيان

**PAKINE**  
REVUE MENSUELLE  
LITTÉRAIRE & ARTISTIQUE  
Propriétaire  
Dr. A. KAZANDJIAN

**Բ Ա Գ Ի Ն**

ԱՄՍԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ  
ԵՒ ԱՐՈՒՇՍՑԻ

ԿԱՐՑ ԽՄԱԳԻՐ

Կ. ՍԱՍՈՒՆԻ

ԽՄԱԳԻՐ

Գ. ՍՆԱԳԵԱՆ

ԽՄԱԳՐՈՒԹԵԱՆ

ԱՆԴԱՄՆԵՐ

Ս. ԳԵՂԱՐԴ

Տ. ԳՍԳՈՒՆԻ

Բ. ՊԼՓԱԶԵԱՆ

Ն. ՊՈՐՔՆԻՍԷԱՆ

Փ. ԱՔՓԱՐԵԱՆ

ՀԻՄՆԱԳԻՐ ԱՆԴԱՄՆԵՐԸ

† ԵՆ. ԳՕՍԱՃԵԱՆ

Խմբագրութեան հասցէ

**G. SASSOUNI**

Rue Sélim Boustani,  
Beyrouth-Liban

Հեռախոսի թիւ 296898

ՅԳ. ՀԱՄԱԳՅՈՒՆ

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԵԳԻՆ

ԼԻՔՆԱՆ	25 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍԱՀԱՐԱՆ	10 ՏՈՂԱՐ
ՀԱՏԱՎԱՃԱՌ	2.50 Լ. ՈՍԿԻ



Վարչութեան հասցէ --

G. SASSOUNI

Rue Sélim Boustani,  
Beyrouth - Liban